ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1332-Ն ՈՐՈՇՄԱՄԲ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2021
ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1 4
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2 11
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3 21
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4 32
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5 37
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6 44
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7 49
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8 55
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 9 59
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 10 68
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 11 75
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 12 81
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 13 90
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 14 93
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 15 98
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 16 102
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 17 106
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 18 112
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 19 118
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 20 124

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 21 131
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 22 135
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 23 141
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 24 146
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 25 151
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 26 157
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 27 160
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 28 166
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 29 172
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 30 176
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 31 179
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 33 185
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 34 192
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 35 196
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 36 200
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 37 205
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 38 208
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 39 214
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40 220
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 41 224
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42 230
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 43 238
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 44 242

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 45 245
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 46 248
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 47 251
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 48 255

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Վարչապետի աշխատակազմ

ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ)

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ 2021 թվականի հունվարի 19-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը: Վերոնշյալ իրավական ակտերի փաթեթով փոփոխություն է կատարվել նաև «Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, որով վերանայվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) լիազորությունների շրջանակը: Մասնավորապես, հայտարարատուի կողմից փաստացի գույքի տիրապետման, ինչպես նաև հայտարարատուի իրական շահառու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար Հանձնաժողովը իրավասու է դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալ անհրաժեշտ տեղեկություններ: Հանձնաժողովին նաև տրվել է իրավասություն հայտարարատուի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո երկու տարվա ընթացքում նրա գույքի էական փոփոխության կասկածի դեպքում նրանից պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Բարեվարքության ուսումնասիրության շրջանակներում հստակեցվել է Հանձնաժողովին տրված, անձի՝ քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն իրականացնելու լիազորությունը: Հանձնաժողովը վերոնշյալի համատեքստում իրավասու է դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալ տեղեկություններ: 2020 թվականի դեկտեմբերի 29-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել և 2021 թվականի հունվարի 20-ից ուժի մեջ է մտել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամները պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր: Վերոնշյալ օրենքով սահմանվել է կարգավորում առ այն, որ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ www.azdarar.am հարթակում, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև, գույքի վերաբերյալ հաշվետվություն և դրանից հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Հանձնաժողովին: Սույն համատեքստում Հանձնաժողովի լիազորությունների շրջանակը ընդլայնվել է և սահմանվել է, որ վերջինս «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է կուսակցությունների ընթացիկ ֆինանսական

գործունեության նկատմամբ վերահսկողություն, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում: Կուսակցությունը Հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև, վարկային տեղեկատվություն: Վերոգրյալ լիազորությունների իրականացման համար Հանձնաժողովին անհրաժեշտ կադրերով ապահովելու նպատակով փոփոխություններ են կատարվել Հանձնաժողովի հաստիքացուցակում: 2021 թվականի մայիսի 27-ին Կառավարության N 860-Ա որոշմամբ 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 1500-Ա որոշման մեջ իրականացվել է փոփոխություն, որի արդյունքում որոշման հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Հանձնաժողովի հաստիքների քանակն ավելացել է 13 նոր հաստիքով՝ նախկին 40-ի փոխարեն դառնալով 53: Զուգահեռաբար, համապատասխան փոփոխություն է կատարվել նաև 2018 թվականի հունիսի 11-ի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» N 706-Ա որոշման մեջ: Վերոնշյալ իրավական ակտերի շրջանակներում, Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմամբ պայմանավորված, 2021 թվականի դեկտեմբերի 2-ին «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1375-Ա որոշմամբ Հանձնաժողովի հաստիքների թիվը ավելացվել է ևս 2-ով, որոնք ապահովելու են էլեկտրոնային համակարգերի և շտեմարանների անխափան գործունեությունը: Ներկայումս Հանձնաժողովն ունի 55 հաստիք, որից համալրված են 36 հաստիք:

Հանձնաժողովի 2021 թվականի պետական բյուջեի 1181, 11001 «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» և 11002 «Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքներ» միջոցառումների համար հատկացվել է

համապատասխանաբար 223,032.4 հազ. դրամ և 10,254.0 հազ. դրամ, ընդամենը 233,286.4 հազ. դրամ: ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության 27.05.2021 թվականի 874-Ն որոշմամբ Հանձնաժողովին հատկացվել է լրացուցիչ 27,551.7 հազ. դրամ, որից 20,551.7 հազ. դրամը ավելացված 13 հաստիքների աշխատանքի վարձատրության, այդ թվում՝ պարգևատրումների իրականացման համար, իսկ 7,000.0 հազ. դրամը՝ Հանձնաժողովի հաշվեկշռում հաշվառվող հայտարարագրման էլեկտրոնային համակարգի բարելավման, բարեվարքության ստանդարտների սահմանման և պահպանման հսկողության, հակակոռուպցիոն իրազեկման, հայտարարագրերի ստուգման ու վերլուծության, օրենքով սահմանված պահանջների կիրառման ծառայությունների ձեռքբերման համար:

Լրացուցիչ հաստիքների համար գույքով ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 25.11.2021 թվականի 1937-Ն որոշմամբ կատարվել է վերաբաշխում և 11002 միջոցառման համար նախատեսված 10,254.0 հազ. դրամից 10,000.0 հազ դրամ հատկացվեց վարչական սարքավորումների՝ գույքի, կահույքի ձեռքբերման համար: Հաշվի առնելով գնման ընթացակարգի՝ էլեկտրոնային աճուրդի ժամանակատարության գործոնը՝ (ընթացակարգային բոլոր ժամանակահատվածները պահպանելով) գնման իրականացումը մինչև 2021 թվականի բյուջետային տարվա ավարտը հնարավոր չէր:

Հանձնաժողովի 2021 թվականի բյուջեով 1181 «Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում հատկացվել է 260,840.1 հազ. դրամ, որից ծախսվել է 216,641.0 հազ. դրամը կամ տոկոսային արտահայտությամբ կատարողականը կազմել է 83.1%:

Սոցիալական փաթեթների մասով 2021 թվականի բյուջեով հատկացումը կազմել է 1,986.0 հազ. դրամ, որից ծախսը կազմել է 828.0 հազ. դրամ կամ տոկոսային արտահայտությամբ կատարողականը կազմել է 41.7%, որի պատճառը հաստիքների ոչ լրիվ համալրվածությունն է և դեռևս սոցիալական փաթեթի շահառու չհանդիսանալու հանգամանքը:

2021 թվականի հունվարից մինչև դեկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում հայտարարվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար 61 մրցույթ, որից 5-ը՝ ներքին, իսկ 56-ը՝ արտաքին:

2022 թվականի առաջին եռամսյակում 30.12.2021թ. դրությամբ նախատեսվում է հայտարարել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար 14 մրցույթ, որից 2-ը՝ ներքին, իսկ 12-ը՝ արտաքին: Հանձնաժողովի անձնակազմի հաստիքների թվաքանակը 30.12.2021թ. դրությամբ կազմում է 61 միավոր, որից արտահաստիքային փորձագետի 6 միավոր: 30.12.2021թ. դրությամբ Հանձնաժողովի աշխատակազմի անձնակազմի համալրվածությունը կազմում է 40 միավոր, որից 4-ը՝ արտահաստիքային փորձագետ, իսկ չհամալրված հաստիքների քանակը կազմում է ընդհանուր 21 միավոր, որը բաղկացած է 16 քաղաքացիական ծառայության, 2 արտահաստիքային փորձագետի և 3 քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներից:

Անձնակազմի համալրվածությունը ընդհանուր 61 հաստիքների համար, ըստ տոկոսային համալրվածության, կազմում է 65.5%:

Անձնակազմի համալրման նպատակով անցկացվող մրցույթների հայտարարությունների տեղադրման գործընթացի սկիզբը տրվել է 2021 թվականի փետրվարի 17-ին, երբ ամբողջապես Հանձնաժողովը պատրաստ է եղել «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և ոլորտը կարգավորող իրավական ակտերին համապատասխան ընթացակարգով, քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով հայտարարել մրցույթներ:

Թեստավորման գործընթացները սկսվել են 2021 թվականի մարտի 17-ից և առ այսօր, օրենքով սահմանված կարգով, մարդկային ռեսուրսների համալրումը գտնվում է ընթացքի մեջ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Վերոգրյալ իրավական ակտերի մշակման աշխատանքների ընթացքում խորհրդակցություններ են անցկացվել շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նախագծերի մշակման գործընթացին ներգրավվել են միջազգային փորձագետներ և ոլորտային այլ մասնագետներ: Վերջիններիս կողմից ներկայացված դիրքորոշումների հիման վրա նախագծերի փաթեթները լրամշակվել են:

Բացի այդ, ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը և հարակից օրենքների նախագծերը դրվել են հանրային քննարկման www.e-draft.am հարթակում, որի շրջանակներում ոլորտային հասարակական կազմակերպությունները ներկայացրել են մի շարք առաջարկություններ: «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակման շրջանակներում Ազգային ժողովի աշխատանքային խմբի առաջարկով իրականացվել են հանրային հարցումներ: Հանձնաժողովի հաստիքացուցակը համալրելու վերաբերյալ վերոնշյալ ենթաօրենսդրական ակտերը դրվել են հանրային 6 քննարկման www.e-draft.am հարթակում և ներկայացվել են կարծիքի շահագրգիռ մարմինների (https://www.e-draft.am/projects/2954/about):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Հանձնաժողովի գործառույթների շրջանակների ընդլայնման վերաբերյալ օրենսդրական փաթեթը	ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է առանձին տող՝ հատկացված Հանձնաժողովի ֆինանսավորմանը: ԿԿՀ	Սույն միջոցառման շրջանակներում Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմանն ուղղված օրենսդրական փաթեթը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2021 թվականի հունվարի 19-ին: Զուգահեռաբար, իրավական ակտերի փոփոխության արդյունքում ընդլայնվել է Հանձնաժողովի հաստիքները՝ 40-ից հասնելով 55-ի: ՀՀ պետական բյուջեում Հանձնաժողովի ֆինանսավորման համար առանձին տող հատկացվել էր դեռևս 2020 թվականին: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի	**Կատարված է ամբողջությամբ**

ներկայացվել է Ազգային ժողով: Աշխատակազմի հաստիքների թիվն ավելացել է:	Հանձնաժողովի լիազորությունների արդյունավետությունը բարելավող օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով) (2021)	համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)

ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)

ՀՀ ոստիկանություն

ՀՀ ֆինանսների նախարարություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հայաստանի 2021 թվականի մարտի 24-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը: Օրենքը կարգավորում է Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) լիազորությունները, համակարգը և կառուցվածքը, կազմավորման, գործունեության, Կոմիտեում պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու դասային աստիճանների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները և պաշտոնավարման հետ կապված մյուս հարաբերությունները: Կոմիտեի հիմնական իրավասությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպումն ու իրականացումն է: Միաժամանակ, քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծման նպատակով՝ Հակակոռուպցիոն կոմիտեն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնելու է օպերատիվ-հետախուզական գործունեություն: Հնարավոր չարաշահումներից խուսափելու, արագ և արդյունավետ քննություն ապահովելու համար հետաքննությունը, օպերատիվ-հետախուզական գործունեությունը և նախաքննությունն իրականացվելու են տարբեր ստորաբաժանումների միջոցով: Կոմիտեի մասնագիտական կազմը համալրվելու է համապատասխան մասնագիտական պատրաստություն ունեցող կադրերի ներգրավման եղանակով, այդուհանդերձ, կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքների և գործիքակազմի փոխանցումը չի կրելու մեխանիկական բնույթ: Հակակոռուպցիոն կոմիտեի կազմում նշանակումները, այդ թվում՝ ղեկավար կազմի, կատարվելու են բաց մրցույթի արդյունքում: Հատկանշական է, որ մրցույթի պարտադիր փուլ է կազմելու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության փուլը: Օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների համար, ի տարբերություն այլ քննչական մարմինների ծառայողների, սահմանված են առավել խիստ պահանջներ և սահմանափակումներ, սակայն նախատեսված են լրացուցիչ երաշխիքներ: Օրենքով սահմանված են Կոմիտեի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովմանն ուղղված կարգավորումներ:

Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական իրավական ակտերի մեծ մասն արդեն իսկ ընդունվել է: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2021 թվականի հունիսի 3-ին ընդունվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» N 895-Ն, «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետների ներգրավման կարգը սահմանելու մասին» N 896-Ն որոշումները, իսկ 2021 թվականի հունիսի 17-ին ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի թեկնածուի լեզվական գիտելիքների իմացության ստուգման կարգը և անհրաժեշտ մակարդակը սահմանելու մասին» N 989-Ն որոշումը: Բացի այդ, ՀՀ վարչապետի 2021 թվականի հունիսի 17-ի N 661-Ա որոշմամբ սահմանվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի և հարակից օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը: Ներկայումս տարվում են աշխատանքներ «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և կրելու կարգը սահմանելու մասին» նախագծի մշակման ուղղությամբ:

Բացի այդ, սույն թվականի սեպտեմբերի 24-ին «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի ընդունմամբ սահմանվել է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները ժամանակավորապես համալրվում են Հատուկ քննչական ծառայության 30 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից, նախկին 20-ի փոխարեն: Սա ուղղված էր, անցումային շրջանում գործերի մեծ ծավալով պայմանավորված, Կոմիտեի բնականոն գործունեության ապահովմանը:

Կոռուպցիոն հանցագործությունների քննության իրականացումը մեկ միասնական մարմնում՝ Հակակոռուպցիոն կոմիտեում, կենտրոնացնելու նպատակով ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները փոխանցվել են Հակակոռուպցիոն կոմիտեին: ՀՀ վարչապետի 14.10.2021թ. թիվ 1159-Ա որոշմամբ

Քննչական կոմիտեի առավելագույն թվաքանակը պակասեցվել է 20 հաստիքով: Քննչական կոմիտեում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում Քննչական կոմիտեի կառուցվածքում և հաստիքացուցակում հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունն անվանափոխվել է Կոմիտեի՝ հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության:

Վարչապետի 14.10.2021թ. N 1159-Ա որոշմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատողների առավելագույն թիվը սահմանվել է 170 հաստիքային միավոր:

Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման մեկնարկն ապահովելու նպատակով կայացել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մրցույթը, որի արդյունքներով հաղթող ճանաչված 3 թեկնածուներից մեկը Կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1479-Ա որոշմամբ նշանակվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում:

Նախագահի նշանակմամբ սկսվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորումը, որի շրջանակներում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից մեկամսյա ժամկետում ընդունվել են մի շարք առաջնային նշանակության որոշումներ, այդ թվում՝ Կոմիտեի կառուցվածքը հաստատելու մասին որոշումը, ինչից հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացված առաջարկության հիման վրա Հատուկ քննչական ծառայությունից 30 աշխատակիցներ զբաղեցրել են ինքնավար թափուր պաշտոններ Հակակոռուպցիոն կոմիտեում, ինչի արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 23-ին ձևավորվել է Հակակոռուպցիոն կոմիտեն և դադարեցվել է Հատուկ քննչական ծառայության գործունեությունը: Ներկայումս, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների հաստիքների համալրման նպատակով ձևավորվել է համապատասխան մրցութային հանձնաժողով, որն ընդունել է օրենքով սահմանված իրավական ակտերը և ներկայումս իրականացնում է հաստիքների համալրման գործընթացը:

Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ստեղծման, նյութատեխնիկական միջոցներով ապահովելու նպատակով օգտագործվող ֆինանսական միջոցների վերաբերյալ հարկ է նշել, որ Եվրոպական միությունը Հայաստանում արդարադատության

ոլորտի բարեփոխումների իրականացմանն աջակցելու նպատակով Կառավարությանը 2020 թվականին հատկացրել է բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված ընդհանուր 30 միլիոն եվրո բյուջեի առաջին փուլի համար նախատեսված գումարը՝ 9 մլն եվրոյին համարժեք 5,707.8 մլն դրամ (հինգ միլիարդ յոթ հարյուր յոթ միլիոն ութ հարյուր հազար), որից՝ 1,429.1 մլն դրամը (մեկ միլիարդ չորս հարյուր քսանինը) ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 258-Ն որոշմամբ նախատեսված էր հատկացնել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ապահովման, տրանսպորտային սարքավորումներով և տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով: Ընդ որում, վերոնշյալ որոշմամբ նախատեսված ծրագրերի և միջոցառումների գծով մինչև Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծումը կատարող է սահմանվել Արդարադատության նախարարությունը: Նշված ծախսերը նախատեսվել էին հուլիսից-դեկտեմբեր ժամանակահատվածի համար: Հաշվի առնելով, որ օրենսդրական կարգավորմամբ պայմանավորված Կոմիտեի փաստացի գործունեությունը սկսվել է հոկտեմբեր ամսվա կեսերից և հիմք ընդունելով Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ներկայացված հաշվարկները, Արդարադատության նախարարության կողմից շրջանառվել և ընդունվել է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1852-Ն որոշումը, որով Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունն ապահովելու նպատակով 2021 թվականին հատկացվել է շուրջ 870.6 մլն դրամ (ութ հարյուր յոթանասուն միլիոն վեց հարյուր հազար) 1,429.1 մլն դրամի փոխարեն (մեկ միլիարդ չորս հարյուր քսանինը), այդ թվում՝ «1231. Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» ծրագրի «11001. Կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության բարձրացում» միջոցառման գծով 341.1 մլն դրամ (երեք հարյուր քառասուն մեկ միլիոն հարյուր հազար), «1228. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում» ծրագրի «31003. Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառման գծով 409.5 մլն դրամ (և «31005.

Հակակոռուպցիոն կոմիտեի տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովում» միջոցառման գծով 120,0 մլն դրամ (հարյուր քսան միլիոն դրամ):

Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ստեղծման, նյութատեխնիկական միջոցներով ապահովելու ուղղությամբ, 2021 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

• Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության առանձնահատկությունների հաշվառմամբ, վերջինիս ժամանակակից շենքային պայմանների ապահովման նպատակով՝ Կառավարության որոշման[1] համաձայն՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող՝ Սիլիկյան թաղամաս 12-րդ փողոց N 86 հասցեում 15 հա մակերեսով հողատարածքը ամրացվել է Արդարադատության նախարարությանը: Կառավարության որոշմամբ[2] Քաղաքաշինության կոմիտեին հատկացվել են ֆինանսական միջոցներ Արդարադատության նախարարության կարիքների համար՝ վերոնշյալ հասցեում Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով: Քաղաքաշինության կոմիտեի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 10-ին բաց մրցույթ գնման ընթացակարգով կազմակերպվել է գնման գործընթաց, որի շրջանակներում հաղթող ճանաչված «Նորաշեն» ՆՏ ԱԿ ընկերության հետ 2020 թվականի դեկտեմբերի 16-ին կնքվել է պետական գնման պայմանագիր՝ 48 000 000 ՀՀ դրամ արժեքով:

• Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականի մարտի 24-ի Օրենքում, մինչև դրա ընդունումը կատարվել էին համապատասխան փոփոխություններ, որոնք, այլ մարտահրավերների հետ մեկտեղ[3], հանգեցրել էին մակերեսի ավելացմանը, և վերանայվել էր տեխնիկական առաջադրանքը, Կառավարության որոշմամբ[4] իրականացվել են համապատասխան

1 Տե՛ս ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 19-ի N 348-Ա որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140919

2 Տե՛ս ՀՀ Կառավարության 2020 թվականի օգոստոսի 6-ի N 1313-Ն որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145207

3 Որպես օրինակ՝ ընդլայնվել էր կոմիտեի նախագահի տեղակալների և, ըստ այդմ, օգնականների թիվը, նոր շենքերի կառուցման համար սահմանվել էր պարտադիր ապաստարան նախատեսելու պահանջ:

4 Տե՛ս Կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1088-Ն որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154137

փոփոխություններ, մասնավորապես՝ Կոմիտեի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայության մատուցման 2020 թվականի դեկտեմբերի 16-ի պետական գնման պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի օգոստոսի 31-ը և պայմանագրի գինն ավելացվել է 13,000,000 դրամով:

• Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմվել են, ներկայումս իրականացվում է վերջիններիս համալիր փորձաքննությունը:

• Հաշվի առնելով այն, որ Կոմիտեի շենքի կառուցումը, ըստ կանխատեսումների, կիրականացվի 3-4 տարվա ընթացքում՝ որպես միջանկյալ լուծում նախատեսվել է, որ Կոմիտեի քննչական գործառույթներ իրականացնող անձինք՝ համապատասխան տեխնիկական անձնակազմով, տեղակայվելու են Հատուկ քննչական ծառայության շենքում[5]:

• Զուգահեռաբար, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց ժամանակավոր տեղակայելու նպատակով Արդարադատության նախարարությանը ամրակցված՝ ք. Երևան, Մոսկովյան 1 հասցեում գտնվող շինությունը վերանորոգվել և կահավորվել է, Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 1744-Ա որոշմամբ ք. Երևան, Մոսկովյան 1 հասցեում գտնվող շինությունը համապատասխան գույքով ամրակցվել է Հակակոռուպցիոն կոմիտեին:

• Հաշվի առնելով Հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունների շրջանակը, քննարկվում է դրան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով ապահովելու հարցը: Մասնավորապես, միջազգային գործընկեր կառույցների հետ համագործակցության շրջանակներում, վերջիններիս կողմից ներկայացվել են անհրաժեշտ տեխնիկական միջոցների առաջարկներ:

5 ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1744-Ա որոշմամբ Հատուկ քննչական ծառայության շենքը ինչպես նաև շարժական գույքը ամրացվել է Հակակոռուպցիոն կոմիտեին:

Նշվածից բացի, Ազգային ժողովի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՕ-391-Ն օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումն ապահովող միջոցները նախատեսված են առանձին տողով՝ 1231 ծրագրի 11001, 11002 և 11003 միջոցառումների, ինչպես նաև օրենքի N 6 հավելվածով նախատեսված միջոցների շրջանակներում:

Բացի այդ, Կառավարության 2021 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 1171-Ն որոշմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ապահովմանն ուղղվող ծախսերը նախատեսվել են Արդարադատության նախարարության կողմից ներկայացված նախնական հայտին համապատասխան և ներկայացված են վերոնշյալ որոշման N 6 հավելվածում, առանձին տողով (2022-2024 ՄԺԾԾ ցուցանիշների ծրագրավորման փուլում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի ուժով Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես հայտատու մարմին ստեղծված չէր):

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման (https://www.e-draft.am/projects/2256) իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում, և Նախագծերի փաթեթն ըստ այդմ լրամշակվել է: Միաժամանակ Նախագծերի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ, Նախագծերը ներկայացվել են մի շարք լրատվության միջոցներով:

Բացի այդ, սույն միջոցառման շրջանակներում մշակված ենթաօրենսդրական ակտերը ևս ներկայացվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի և դրվել են հանրային քննարկման www.e-draft.am հարթակում (https://www.e-draft.am/projects/3243, https://www.edraft.am/projects/3232, https://www.e-draft.am/projects/3222):

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է: Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ	ՀԿ կենտրոնական մարմինն ապահովված է անհրաժեշտ տարածքային, նյութական միջոցներով, աշխատակազմի առնվազն 50-%-ը համալրվել է (2021թ.), Աշխատակազմի մասնագիտացված	Սույն միջոցառման շրջանակներում Ազգային ժողովի կողմից ընդունվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանն ուղղված օրենսդրական ակտերը, Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է, վերջինիս տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ: Միևնույն ժամանակ, մասնագիտացված ստորաբաժանումների աշխատակիցները չեն վերապատրաստվել: Այսպիսով, նշված տեղեկությունների համաձայն, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն կատարվել են մեծամասամբ:	Կատարված է մեծամասամբ

գործիքա կազմ:	ստորաբաժա նումների 40%-ը վերապատրաս տվել է 2021թ.-ին, 70%-ը՝ 2022թ.-ին: Պետական բյուջեում և ՄԺԾԾ-ում նախատեսված է ՀԿ-ի ֆինանսավոր ման առանձին տող – 2021-2022թթ.		

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3

Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ)

Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

Արդարադատության ակադեմիա

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները (այսուհետ նաև՝ Օրենքների փաթեթ), որոնցով նախատեսվում է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) ստեղծումը: Մասնավորապես, Օրենքի համաձայն՝ Դատարանը գործելու է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից առնվազն 10-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, իսկ առնվազն 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ: Համապատասխանաբար ավելացվելու է նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարանների թվակազմը:

Օրենքով սահմանվում է նաև հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների նշանակման կարգը, սահմանվում են առավել խիստ պահանջներ և սահմանափակումներ, միևնույն ժամանակ նախատեսվում է այլ դատավորների համեմատությամբ առավել բարձր վարձատրություն՝ որպես առավել ռիսկային, արտաքին ազդեցության տեսանկյունից խոցելի ոլորտի անկախության և անաչառության ապահովման երաշխիք: Նախագծերի փաթեթով սահմանվում են հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների թեկնածուների ընտրության առանձնահատկությունները, նախատեսվում է հակակոռուպցիոն դատավորների թեկածուների բարեվարքության ստուգման պահանջ: Հաշվի առնելով հակակոռուպցիոն դատարանների դերը և ստեղծման գործընթացում առավելագույն թափանցիկություն ապահովելու անհրաժեշտությունը՝ Օրենքով առաջին կազմի համար սահմանվել է միջազգային փորձագետների ներգրավման մեխանիզմ: Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկություն իրականացնելիս փորձագետների խորհրդատվական կարծիքները հաշվի են առնվելու:

Օրենքների փաթեթը Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից 2021 թվականի մայիսի 6-ին ներկայացվել է Սահմանադրական դատարան՝ վերջինիս Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով: Սույն թվականի հոկտեմբերի 12-ի նիստում ձայների հավասարության հետևանքով ըստ էության Սահմանադրական դատարանի կողմից որոշում չի ընդունվել: Նշվածով պայմանավորված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումների համատեքստում դիմումը համարվել է մերժված, և քննարկվող իրավական ակտերը ուժի մեջ են մտել սույն թվականի հոկտեմբերի 29-ին:

Սույնով պայմանավորված՝ իրականացվել են օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի, ինչպես նաև Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված այլ իրավական ակտերի մշակման աշխատանքներ:

Օրենքի ուժի մեջ մտնելու հանգամանքով պայմանավորված Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարի հանձնարարությամբ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի՝ Դատական դեպարտամենտի կողմից կազմվել է գործողությունների կատարման ժամանակացույց, որի հիման վրա իրականացվել են մի շարք գործողություններ:

Մասնավորապես, հաշվի առնելով Օրենքի անցումային դրույթների կարգավորումները՝ Բարձրագույն դատական խորհուրդը 05.11.2021թ. դիմել է Կառավարությանը՝ դատավորների թվակազմը՝ Հակակոռուպցիոն դատարանում՝ 15 դատավորով [որոնցից 10-ը՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով, 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով], Վերաքննիչ քրեական դատարանում՝ 6 դատավորով, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 6 դատավորով և Վճռաբեկ դատարանի քրեական պալատում՝ 2 դատավորով ավելացնելու համար համաձայնություն ստանալու նպատակով: Միաժամանակ, հաշվի առնելով Օրենքին կից ուժի մեջ մտած՝ ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-337-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, Բարձրագույն դատական խորհուրդը Կառավարությանն է ներկայացրել Վճռաբեկ դատարանի դատավորների աշխատավարձի բարձրացման վերաբերյալ համապատասխան առաջարկությունը:

Մասնավորապես, մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների թվակազմն ավելացնելու վերաբերյալ առաջարկությանը համաձայնություն տալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է սույն թվականի նոյեմբերի 9-ի N 1828-Ն որոշմամբ:

Կառավարության համաձայնությունը ստանալուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իր 15.11.2021թ. թիվ ԲԴԽ-97-Ո-272 որոշմամբ ավելացրել է համապատասխան դատարանների դատավորների թվակազմը:

Բացի այդ, վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է վերանայել Վճռաբեկ դատարանի դատավորների վարձատրության համակարգը՝ այն համապատասխանեցնելով ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների տրամաբանությանը:

Օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով Բարձրագույն դատական խորհրդի կողմից 18.11.2021թ. ընդունվել է դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման, Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման, Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների

թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման անհրաժեշտության մասին թիվ ԲԴԽ-98-Ո-280 որոշումը:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից 18.11.2021թ. ընդունվել է դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները և գրավոր առաջադրանքների տարբերակների քանակը, որակավորման գրավոր քննության հարցերի մշակման կարգը, որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու կարգը, գնահատման չափորոշիչները և գնահատման սանդղակը, որակավորման գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը և որակավորման գրավոր քննության արդյունքների ստուգաթերթի ձևը, քննության արդյունքների բողոքարկման և հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանելու մասին թիվ ԲԴԽ-98-Ո-281 որոշումը:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից 29.11.2021թ. ընդունվել է դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների ներգրավման և գործունեության կարգը սահմանելու մասին թիվ ԲԴԽ-101-Ո-292 որոշումը:

Բարձրագույն դատական խորհրդի 02.12.2021թ. թիվ ԲԴԽ-102-Ն-28 որոշմամբ սահմանվել են Հակակոռուպցիոն դատարանի նստավայրերը և դրանց սպասարկման տարածքները, ինչպես նաև հաստատվել է դատավորների՝ ըստ նստավայրերի բաշխումն ու թվակազմը:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան, դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվել է հայտարարություն՝ դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման ենթաբաժինը և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով որակավորման գրավոր քննությունների վերաբերյալ:

Ներկայումս ընթանում է Օրենքի եզրափակիչ դրույթներով սահմանված գործողությունների իրականացումը, որին համապատասխան՝ 2022 թվականի հունվարի 10-ին և 11-ին նախատեսվել է դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման ենթաբաժինը և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով որակավորման գրավոր քննությունների անցկացում: Նշված քննական գործընթացների ավարտից հետո կիրականացվի դատավորի թեկնածուների ուսուցման և փորձաշրջանի անցկացումը:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից միջոցներ են ձեռնարկվում Օրենքով սահմանված՝ Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված հետագա գործընթացներն ապահովելու ուղղությամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքով Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված գործողությունների համար վերջնաժամկետ է սահմանվել 2022 թվականի ապրիլի 17-ը:

Բացի այդ, ներկայումս տարվում են աշխատանքներ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին Վարչապետի որոշման նախագծի շրջանառությունը ապահովելու ուղղությամբ, որից հետո նշված նախագիծը կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

Միաժամանակ, տարվում են աշխատանքներ դատարանի նյութական և շենքային պայմանների ապահովման ուղղությամբ, որի շրջանակներում.

- Դատարանի տեղակայման հարցի կարգավորման նպատակով դիտարկվում են հիմնական և ժամանակավոր լուծումներ: Մինչև հիմնական տեղակայման հարցի լուծումը, Դատարանի ժամանակավոր տեղակայման նպատակով նախատեսվում է ք. Երևան, Արա Սարգսյան 5/1 և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գույքի կազմում հաշվառված ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում գտնվող շինությունների վերանորոգում: Այսպես՝

• Կառավարության որոշմամբ[6] «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան փողոցի 5/1 հասցեում գտնվող շինությունները և հողամասն[7] ամրացվել են Արդարադատության նախարարությանը: Վերոնշյալ շինությունների վերակառուցման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելու աշխատանքներն արդեն իսկ ավարտվել են: Քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 7-ին ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Երևան քաղաքի Արա Սարգսյան 5/1 հասցեում գտնվող հակակոռուպցիոն դատարանի շենքի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով իրականացվել է գնման գործընթաց, որի արդյունքներով հաղթող ճանաչված ընկերությանը ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ (պայմանագրային արժեքը կազմում է 521 527 190 ՀՀ դրամ): Նույն մարմնի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 20-ին ներկայացված տեղեկատվության համաձայն վերակառուցման շինարարական աշխատանքների կատարման նպատակով արդեն իսկ կնքվել է համապատասխան պայմանագիր[8]: Ըստ կնքված պայմանագրի՝ աշխատանքները պետք է իրականացվեն 360 օրացուցային օրվա ընթացքում:

• Կառավարության որոշմամբ[9] ք. Երևան Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում գտնվող շենքը և հողամասը[10] ամրացվել են Արդարադատության նախարարությանը: Նշվածի համատեքստում, Արդարադատության նախարարության և ՆԱԳՇԻՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ շենքի ընթացիկ նորոգման

6 Տե՛ս ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 1506-Ա որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145948

7 ք. Երևան Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան փողոցի 5/1 հասցեում գտնվող շենքը ունի 1757.7 քառ. մետր մակերես, օժանդակ շինությունը՝ 75.6 քառ. մետր մակերես, իսկ հողամասը՝ 0,102835 հեկտար տարածք:

8 ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Թիվ 1 շինվարչություն» բաց բաժնետիրական ընկերության միջև 2021 թվականի հոկտեմբերի 18-ին կնքվել է՝ N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով՝ Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյանի 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման շինարարական աշխատանքների կատարման նպատակով:

9 Տե՛ս ՀՀ Կառավարության 2020 թվականի նոյեմբերի 27-ի N 1896-Ն որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147736

10 ք. Երևան Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում գտնվող շենքը ունի 1634,8 քառ. մետր մակերես, իսկ հողամասը՝ 0,18792 հեկտար տարածք:

աշխատանքների նպատակով նախատեսվում է տրամադրել 50 մլն. 450 հազ. դրամ, իսկ նորոգման տեխնիկական հսկողության նպատակով՝ 759.8 հազ. դրամ (յոթ հարյուր հիսունինը միլիոն ութ հարյուր հազար)։

• Ներկայումս տարվում են ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում գտնվող շինության վերանորոգման իրականացման ուղղությամբ աշխատանքներ։

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերի փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում (https://www.e-draft.am/projects/2644), որի արդյունքում ներկայացվել են 26 առաջարկություններ, և Նախագծերի փաթեթը ըստ այդմ լրամշակվել է։ Նախագծերի փաթեթը քննարկվել է նաև 2020 թվականի օգոտոսի 26-ի «Մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան ստեղծելու մասին օրենսդրական փաթեթի շուրջ» հանրային քննարկման (https://www.youtube.com/watch?v=UWFzoFfJ0_Q), մասնագիտացված հակակոռուպցիոն դատական համակարգի ստեղծմանը նվիրված 2020 թվականի օգոստոսի 14-ի հանրային քննարկման (https://www.moj.am/article/2787, https://armla.am/47563.html), 2020 թվականի փետրվարի 12-ի հանրային քննարկման շրջանակներում։ Բազմաթիվ հանդիպումների ընթացքում քննարկվել են մասնագիտացված դատարանների ստեղծման վերաբերյալ առաջարկություններ։ Մասնագիտացված դատարանների ստեղծմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթը մշակվել է, ներկայացվել է կարծիքի միջազգային կազմակերպություններին։ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի 2020 թվականի հուլիսի 3-ին կայացած նիստի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, ներկայացվել են նաև հակակոռուպցիոն դատարանների ստեղծմանն առնչվող հարցեր։ Հանրությանն իրազեկելու համար տեղեկատվական նյութեր են հրապարակվել Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում (https://www.moj.am/article/2770, https://www.moj.am/article/2852, https://www.moj.am/article/2853, https://www.moj.am/media/view/article/363, https://www.moj.am/media/view/article/361), բազմաթիվ

մամլո հաղորդագրություններ են տարածվել տարբեր լրատվամիջոցներով (https://www.youtube.com/watch?v=_0DBkMYmqME, https://factor.am/274485.html, https://hetq.am/hy/article/120072, https://www.azatutyu n.am/a/30783040.html):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ ը ձևավորվել են: Ապահովված են բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ մասնագիտաց	Դատարանը ձևավորվել է՝ ԲԴԽ ընթացակար գային որոշումներն ընդունվել են (2021թ.-ի 4-րդ եռամսյակ): Մշակվել և հաստատվել են հակակոռուպ ցիոն մասնագիտաց	Սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականին կատարված աշխատանքների ուսումնասիրությունից հետևում է, որ Հակակոռուպցիոն դատարանի ձևավորման, ինչպես նաև, կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների նշանակման ուղղված օրենսդրական ակտերն ընդունվել են, անհրաժեշտ ԲԴԽ ընթացակարգային որոշումներն ընդունվել են: Միաժամանակ, սույն միջոցառման դեպքում հարկ է հաշվի առնել, որ աշխատանքների կատարումը ձգձգվել է Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական ակտերի փաթեթի սահմանադրականության վիճարկման, դրա արդյունքում օրենսդրական ակտերի փաթեթի՝ նախատեսված ժամկետից ուշ ուժի մեջ մտնելու հետևանքով: Այսպիսով, ըստ նշված տեղեկությունների, 2021 թվականի համար	**Կատարված է մասնակի**

ված դատարաննե րի գործու նեության ապահովման համար:	մամբ դատավորների համար վերապատ րաստման ուսումնական ծրագրերը (2021թ.-ի 4-րդ եռամսյակ): Դատավորների կազմի առնվազն 30%-ը նշանակված է ու անցել է համապատաս խան վերապատրաս տումներ (2021թ.-ի 4-րդ եռամսյակ)	սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն մասնակի են կատարվել են:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառման կատարումը հետաձգվել է պայմանավորված օրենսդրական ակտերի փաթեթի սահմանադրականության վիճարկմամբ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4

ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ)

Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)

Արդարադատության ակադեմիա

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Դեռևս 2019 թվականին Գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած

ճանաչելու մասին» N 39 հրամանով ստեղծվել էր Գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը:

Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամբողջականացման նպատակով Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական փաթեթի շրջանակներում Ազգային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով նախատեսվել է Գլխավոր դատախազության կազմում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների պաշտոնների նախատեսում, որպիսի պաշտոններում կարող են նշանակվել բացառապես օրենքով սահմանված կարգով բարեվարքության ուսումնասիրություն անցած անձինք: Բացի այդ, նշված իրավական ակտերի փաթեթը Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից 2021 թվականի մայիսի 6-ին ներկայացվել է Սահմանադրական դատարան՝ վերջինիս Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով: Սույն թվականի հոկտեմբերի 12-ի նիստում ձայների հավասարության հետևանքով, ըստ էության, Սահմանադրական դատարանի կողմից որոշում չի ընդունվել: Նշվածով պայմանավորված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումների համատեքստում դիմումը համարվել է մերժված և քննարկվող իրավական ակտերը ուժի մեջ են մտել սույն թվականի հոկտեմբերի 29-ին:

Նշված օրենսդրական փոփոխությունների հիման վրա Գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 16-ի N 87 հրամանի հիման վրա Գլխավոր դատախազության կազմում նույն թվականի նոյեմբերի 22-ին ստեղծվել է ՀՀ հակակոռուցպիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, որը Գլխավոր դատախազի՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչություններին վերապահված գործառույթները հստակեցնելու մասին հրամանի համաձայն՝ հսկողություն է իրականացնում այն առերևույթ հանցագործությունների մասով, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում, իսկ Գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունն

անվանափոխվել է Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության և հսկողություն է իրականացնում ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ բաժնի 29-31-րդ գլուխներում նախատեսված առերևույթ հացագործությունների մասով՝ բացառությամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննվող և ՀՀ քրեական օրենսգրքի 327-327.6 և 353.1 հոդվածներով նախատեսված դեպքերի):

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների բարեվարքությունը ստուգվել է՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության ողջ շղթայի շրջանակում բարեվարքությունը երաշխավորելու և հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի նկատմամբ հասարակական վստահության բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Նշված վարչության հաստիքների 85%-ն արդեն համալրվել է:

Բացի այդ, նշված օրենսդրական փոփոխություններով բարեվարքության ստուգման պահանջ է սահմանվել նաև ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված դատախազների, Գլխավոր դատախազի, նրա տեղակալների ընտրության գործընթացի շրջանակում:

Արդարադատության ակադեմիայում 2021 թվականին անցկացվել են դատախազների վերապատրաստումներ Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր» (մասնակցել է 72 դատախազ), «Կոռուպցիոն դեպքերի քննություն» (մասնակցել է 23 դատախազ), «կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա» (մասնակցել է 26 դատախազ), «պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն» (մասնակցել է 63 դատախազ), «կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար» (մասնակցել է 50 դատախազ) թեմաներով: Զուգահեռաբար, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, և տվյալ վարչությունում դատախազների 40%-ը անցել են համապատասխան վերապատրաստումներ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Վերոգրյալ օրենքների փաթեթը հանրային քննարկման է ներկայացվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում (https://www.e-draft.am/projects/2644), որի արդյունքում ներկայացվել են առաջարկություններ, Նախագծերի փաթեթն ըստ այդմ լրամշակվել է: Նախագծերը քննարկվել են նաև շահագրգիռ մարմինների հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
ՀՀ Գլխավոր դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականաց	Գլխավոր դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն գործերով մասնագիտացված ստորաբաժանում: Դատախազնե	2021 թվականի նոյեմբերի 22-ին Գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 16-ի N 87 հրամանով Գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է ՀՀ հակակոռուցպիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը նշված վարչության համալրված հաստիքների 85%-ն արդեն համալրված է, դատախազների 40%-ը անցել են համապատասխան վերապատրաստումներ: Զուգահեռաբար շուրջ 230 դատախազներ անցել են վերապատրաստումներ կոռուպցիայի դեմ պայքարի և կոռուպցիոն հանցագործությունների քննությանն առնչվող թեմաներով: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար	**Կատարված է մեծամասամբ**

նող վարչություն:	րի կազմի առնվազն 60%-ը նշանակված է ու անցել է համապատասխան վերապատրաստումներ (2021թ.-ի 4-րդ եռամսյակ)	սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքները կատարվել են մեծամասամբ՝ նկատի ունենալով, որ չի ապահովվել սահմանված քանակի դատախազների վերապատրաստումը:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

ՀՀ արդարադատության նախարարություն

Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) մշակում և իրականացնում է հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականություն, իրականացնում է

հակակոռուպցիոն ոլորտի գործընթացների, հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների կատարման նկատմամբ մշտադիտարկում, իրականացնում է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի քարտուղարության աշխատանքներ: Վարչության ստորաբաժանումների գործառույթները հստակ տարանջատված են: Վարչությունն ունի երկու բաժին՝ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի:

Գնահատվել են Վարչության կարողությունները, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել պարբերաբար վերապատրաստել վարչության աշխատակիցներին:

2021 թվականի փետրվարի 20-ին և 21-ին Արդարադատության նախարարության ներկայացուցիչների կարողությունների զարգացման վերաբերյալ կազմակերպվել է աշխատանքային քննարկում:

Վարչության աշխատակիցները կարողությունների զարգացման նպատակով մասնակցել են հետևյալ դասընթացներին.

1. 2021թվականի փետրվարի 16-ին և 17-ին «Զարգացման ծրագրերի մոնիթորինգ և գնահատում» խորագրով դասընթաց,
2. 2021թ. մարտին Հակակոռուպցիոն և բարեվարքության հարցերով վերապատրաստողների դասընթաց,
3. 2021 թվականի ապրիլի 19-ին և 20-ին «Ժամանակի արդյունավետ կառավարում» դասընթաց,
4. 2021 թվականի ապրիլի 21-ին «Գույքի հայտարարագրերի էլեկտրոնային համակարգ և կարմիր դրոշակներ» խորագրով տարածաշրջանային առցանց դասընթաց,
5. 2021 թվականի ապրիլի 28-ին «Առանց մեղադրական դատավճռի առգրավման և բռնագանձման գործիքների օգտագործումը» խորագրով տարածաշրջանային առցանց դասընթաց,
6. 2021 թվականի հունիսի 24-ից 25-ը «Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների թափանցիկության խթանումը» խորագրով միջազգային առցանց դասընթաց,

7. 2021 թվականի նոյեմբերի 25-ից 26-ը «Հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելում և հակազդում, խարդախության կանխարգելում, դրանց շրջանակում ԵՄ փորձը» առցանց դասընթաց, որը կազմակերպվել էր ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակներում Եվրոպական Միության Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի կողմից,

8. 2022 թվականի հունվարի 18-ին կայանալիք դասընթաց «Հաղորդակցման ռազմավարության պլանավորում» թեմայով, որը կազմակերպվում է ԵՄ-ի, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և «Expertise France» միջազգային տեխնիկական աջակցության գործակալության կողմից:

Բացի այդ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) շրջանակներում ներգրավվել է բարձր որակավորում ունեցող ազգային փորձագետ, որը, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի գլոբալ թիմի հետ սերտ համագործակցությամբ, աջակցել է Արդարադատության նախարարությանը՝ հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման ոլորտում կարողությունների ամրապնդման և կատարելագործման գործում: Մասնավորապես, ազգային փորձագետի հետ համագործակցությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- իրավիճակային վերլուծություն, շահագրգիռ կողմերի կարիքների ուսումնասիրություն և հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման միջազգային պրակտիկայի (ստանդարտներ) ներկայացում,

- գոյություն ունեցող մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանության վերանայում և ընթացիկ ներդրման և կարիքների գնահատման արդյունքների և/կամ թվարկված միջազգային պրակտիկայի միջև բացերի բացահայտում,

- հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման կատարելագործված համակարգի մշակում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կարևոր գործոններին՝ ներառյալ ցուցանիշները /վերահսկողական ցուցանիշները/, չափանիշները և գնահատման ձևանմուշը, պատասխանատու հաստատության և նպատակային հաստատությունների միջև համակարգման մեխանիզմները և այլն,

- համապատասխան շահագրգիռ կողմերի համար ուսումնական դասընթացների կազմակերպում՝ ուսումնասիրված կարիքների գնահատման և վերանայված, կատարելագործված մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանության հիման վրա,

- վերոնշյալ միջոցառումների հիման վրա համակարգի մոնիթորինգի, գնահատման, ամրապնդման և կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ցանկի ներկայացում:

Միևնույն ժամանակ, 2021 թվականին ուսումնասիրվել է հակակոռուպցիոն քաղաքականության գործընթացներում ներգրավված հասարակական կազմակերպությունների կողմից հակակոռուպցիոն կրթությանը միտված ծրագրերը, իրականացվել են հարցումներ կրթական այդ ծրագրերի շրջանակներում ուսումնառող և դասավանդող անձանց վերաբերյալ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացումը հանրային քննարկման անցկացում չի նախատեսում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն	Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանա	Սույն միջոցառման իրականացման շրջանակներում Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմնի՝ Արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանման կարողությունները շարունակաբար զարգանում են, աշխատակիցները վերապատրաստումների են մասնակցում: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար	**Կատարված է մասնակի**

քաղաքակա նությունը մշակող համապատաս խան ստորաբաժան ման աշխատակից ները, հասարակա կան կազմակերպու թյունների ներկայացու ցիչները պարբերաբար վերապատ րաստվում են: Իրավասու ստորաբաժա	տու մարմինների կարողություն ները գնահատված են, հակակոռուպ ցիոն քաղաքականու թյան մշակումը և իրականացում ը կատարվում է առավել արդյունավետ և համակարգա յին ՀՀ արդարադա տության նախարարու	վերապատրաստումներ չեն անցկացվել, որպիսի պայմաններում սույն միջոցառումը 2021 թվականին մասնակի է կատարվել:	

նումների գործառույթնե ը հստակ տարանջատ ված են	թյան հակակոռուպ ցիոն քաղաքականու թյունը մշակող համապատաս խան ստորաբաժան ման աշխատակից ների առնվազն 40%-ն անցել է վերապատրաս տում: Իրականացվել է տարեկան առնվազն 1 վերապատրաս տում հասարակա		

	կան կազմակերպությունների ներկայացուցիչների համար:		

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6

Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում

Պատասխանատու մարմին

ՀՀ վարչապետի աշխատակազմ

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ոլորտի ծրագրերի աջակցության և շարունակական համագործակցությունը ապահովելու նպատակով միջազգային դոնոր կազմակերպությունների հետ 2021 թվականին անցկացվել են համատեղ մի շարք հանդիպումներ ինչպես առցանց տարբերակով, այնպես էլ տետատետ հանդիպումներ: Դոնորների համակարգման աշխատանքներն իրականացվում են Արդարադատության նախարարության կողմից: Այդ նպատակով Արդարադատության նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ, որին անդամակցում են դոնորները, շահագրգիռ

մարմինները և ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Զուգահեռաբար, կազմվել է դոնորների մատրիցա փաստաթուղթը, որում մանրամասն տեղեկություններ են նշված յուրաքանչյուր դոնոր կազմակերպության կողմից աջակցության շրջանակի և միջոցների, ժամկետների, ինչպես նաև, Հակակոռուպցիոն ռազմավարության այն միջոցառումների կամ միջոցառումների այն բաղադրիչների վերաբերյալ, որոնց իրականացման համար տրամադրվում է աջակցությունը: Նշված մատրիցան հնարավորություն է տալիս առավել արդյունավետ ապահովել դոնորների աշխատանքների համակարգումը, ինչպես նաև բացառել կրկնությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը մեծապես աջակցում են դոնոր կազմակերպությունները՝ ընտրվել է վերջիններիս հետ համատեղ հաճախակի հանդիպումներ կազմակերպելու, ներկայացուցչական կազմով աշխատանքային խմբի շրջանակում դոնորների աշխատանքների համակարգումն ապահովելու մոդելը: Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստի շրջանակում դոնորների համակարգման նիստ չի եղել, քանի որ առավել նպատակահարմար, արդյունավետ և օպերատիվ է դիտարկվել դոնորների, շահագրգիռ մարմինների և ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ աշխատանքային խմբի շրջանակներում դոնորների համակարգման աշխատանքների իրականացումը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացմանը մասնակցում են շահագրգիռ մարմինները, դոնոր կազմակերպությունները և ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Յուրաքանչյուր տարի Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն անց է կացնում 1 նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը:(2020-2021-2022)	Յուրաքանչյուր տարի Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն անց է կացնում 1 նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը: (Իրականացվել է տարեկան առնվազն 1	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից հետևում է, որ 2021 թվականի ընթացքում ապահովվել է դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն գործունեությունը, որի շրջանակում ձևավորվել է աշխատանքային խումբ, տեղի են ունեցել համատեղ հանդիպումներ, կազմվել է դոնորների աշխատանքների համակարգման մատրիցա: Թեև սույն միջոցառման իրականացման շրջանակներում ակնկալվող արդյունքով և վերստուգիչ ցուցիչով սահմանված աշխատանքներից տեղի է ունեցել շեղում, սակայն իրականացվել են աշխատանքներ, որոնք առավել արդյունավետ, օպերատիվ և թիրախային միջոցներով ապահովել են դոնորների աշխատանքների համակարգումը՝ այդպիսով ապահովելով սույն միջոցառման շրջանակում նախատեսված ռազմավարական նպատակի՝ Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովման իրականացումը: Այսպիսով, սույն միջոցառման շրջանակներում աշխատանքները մեծամասամբ կատարվել են, իսկ ամբողջական կատարված չի գնահատվում այն հիմնավորմամբ, որ ամեն դեպքում ակնկալվող արդյունքից և վերստուգիչ ցուցիչից տեղի է ունեցել շեղում:	**Կատարված է մեծամասամբ**

	դոնորների համակարգման նիստ, առկա են նիստերի արձանագրությունները, մամլո հաղորդագրությունները տարածված են. Դոնորների ներգրավվածությունը հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարման		

	գործընթացին համամասնորեն բաշխված և համակարգված է:		

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7

15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում

Պատասխանատու մարմին

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☑ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ կարևորվեց հանրային կառավարման համակարգում բարեվարքության, թափանցիկության, ներգրավվածության, արդյունավետ և իրագործելի կառուցակարգերի ստեղծումն ու կատարելագործումը, պետական համակարգում կոռուպցիայի հակազդմանն ուղղված միասնական կանոնների ներմուծումն, ինչպես նաև, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելի ներդնումը: Այս համատեքստում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առանցքային խնդիրներից մեկը պետական կառավարման համակարգում և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատումն ու դրանց հիման վրա ռիսկերի նվազեցման կամ չեզոքացմանն ուղղված ծրագրերի իրականացումն է:

Հակակոռուպցիոն ռազմավարության հավելված 2-ի 7-րդ միջոցառման հաշվառմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից պետք է իրականացվեր 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և ներդնում: 2021 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մասնակցել է մի շարք քննարկումների ինչպես ԵԽ երևանյան գրասենյակի, այնպես էլ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և մի շարք տեղական ինքնակառավարման մարմինների (համաձայնությամբ) աշխատակիցների, ներկայացուցիչների հետ: Արդյունքում, ԵԽ երևանյան գրասենյակի փորձագետների և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակիցների ջանքերի շնորհիվ մշակվել է տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի ինքնագնահատման մեթոդաբանություն և ինքնագնահատում իրականացնող էլեկտրոնային գործիք: Մշակված մեթոդաբանությունը և էլեկտրոնային գործիքը քննարկվել և մասամբ հավանության է արժանացել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: 2021 թվականի ընթացքում նախանշված էր որոշ տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնել ինքնագնահատման պիլոտային ծրագիր՝ մեթոդաբանության կենսունակության և բացերի հղկման նպատակով: Նախանշված աշխատանքներն ամբողջապես ավարտին չեն հասցվել

Հայաստանի Հանրապետությունում համայնքների խոշորացման գործընթացների հետևանքով, սակայն նախատեսվում է 2022 թվականին ավարտին հասցնել պիլոտային ծրագրերը, որոնց կհետևի բուն մեթոդաբանությունների մշակման գործընթացները:

Համայնքների կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանություն իրենց չի տրամադրվել, որի հետևանքով իրենք հնարավորություն չեն ունեցել վեր հանելու կոռուպցիոն ռիսկերը և մշակելու այդ ռիսկերի նվազեցմանն ուղղված համապատասխան ծրագրեր:

Հատկանշական է նաև, որ համայնքների կողմից իրականացվել են որոշակի գործողություններ, որոնք միտված էին կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Այսպես, օրինակ՝

- Սյունիքի մարզի բոլոր 8 համայնքներում բարելավվել է քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը, մարզի բոլոր 8 համայնքներում առկա են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (կենտրոններ), առկա են համայնքային համացանցային կայքեր, որոնց միջոցով քաղաքացիները մատուցվող ծառայությունների վերաբերյալ կարողանում են ստանալ մատչելի տեղեկատվություն:
- Սևանի համայնքապետարանում պարբերաբար իրականացվում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման մոնիտորինգ, որը միաժամանակ նպատակ ունի մշակելու 2022թ.-ի իրականացվող հասցեական ծրագրեր՝ ներառելով համայնքապետարանում աշխատանքի ընդունման, մրցույթների կայացման բաղադրիչները: Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է «Սևան համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի էթիկայի և վարքի կանոնները սահմանելու մասին» իրավական ակտը, որի նպատակն է էթիկական վարքագծի չափանիշների սահմանումը, որոնց պետք է հետևի ՏԻՄ-ը իր ամենօրյա պարտականությունների ընթացքում: Բացի այդ, Սևանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում /sevancity.am/՝ Ծառայությունների հավաքածու բաժնում, առկա է 57 ծառայության վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու ամբողջ փաթեթը, որը հնարավորություն է տալիս ծառայության վերաբերյալ ստանալու ոչ միայն լիարժեք տեղեկատվություն, այլ նաև ծառայություն ստանալու համար դիմելու հնարավորություն է ընձեռում /նաև առցանց եղանակով/, այդ թվում՝ «մեկ

պատուհան» սկզբունքով: Սևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային 9 ծառայողներն անցել են համայնքային ծառայողի վերապատրաստման դասընթացներ բարեվարքություն, կոռուպցիան տեղական ինքնակառավարման համակարգում, նվերներին առնչվող կարգավորումներ թեմաներով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացման շրջանակներում քննարկումներ են տեղի ունեցել շահագրգիռ մարմինների հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում,	8 համայնքում իրականացվել է գնահատում (2021թ.):	Սույն միջոցառման շրջանակում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թեև 2021 թվականին որոշակի աշխատանքներ իրականացվել են տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ, այնուամենայնիվ սույն միջոցառումը գնահատվում է չկատարված, քանի որ սույն միջոցառման ակնկալվող արդյունքով և վերստուգիչ ցուցիչով ակնկալվում էր 2021 թվականին 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում վերհանել կոռուպցիոն ռիսկերը, մշակել ծրագրեր և դրանք իրականացնել	**Կատարված չէ**

ծրագրերի մշակում և ներդնում: Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում մշակվել են հակակոռուպ		առնվազն 8 համայնքներում, որոնք 2021 թվականին չեն իրականացվել:	

ցիոն միջոցառումնե րի ծրագրեր			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Հիմնական խոչընդոտ հանդիսացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մարդկային ռեսուրսով ոչ բավարար համալրվածությունը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8

Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում

Պատասխանատու մարմին

ՀՀ վարչապետի աշխատակազմ

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Սույն միջոցառման շրջանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (Հանձնաժողով) կողմից պետք է իրականացվեր ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին

բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և ներդնում: Չնայած այն հանգամանքին, որ չի իրականացվել կոռուպցիոն ռիսկերի բուն գնահատում, այնուհանդերձ 2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական կառավարման համակարգի բարեվարքության կազմակերպիչների ինստիտուտի ուսումնասիրություն, գնահատվել են առկա խնդիրները և բացերը: Հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագրերի մեջ ներառվել են նաև բարեվարքության ինստիտուտի ամրապնդմանն ուղղված միջոցառումներ, որոնք պետք է հիմք դառնան հետագա գործառույթները առավել համակարգային իրացնելու համար:

Զուգահեռաբար, Պաշտպանության նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է Պաշտպանության նախարարության համակարգում կոռուպցիոն դրսևորումների կանխարգելման ծրագրի նախագիծը, ստացվել են առաջարկություններ պատասխանատուների կողմից, դրանք ներառվել են նախագծում և ներկայացվել Պաշտպանության նախարարին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացմանը ներգրավվել են շահագրգիռ մարմինները և կազմակերպությունները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Ռիսկերի գնահատումների արդյունքների	Զեկույցների հիման վրա պետական մարմիններում	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական կառավարման համակարգի բարեվարքության կազմակերպիչների ինստիտուտի ուսումնասիրություն,	**Կատարված է մասնակի**

հիման վրա մշակվել են ոլորտային հակակոռուպ ցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքությ ան գործողություն ների ծրագրեր՝ այդ թվում ներառելով նախկինում ընդունված միջոցառումնե րի ծրագրերով սահմանված, բայց դեռևս չկատարված գործողություն	հակակոռուպ ցիոն՝ այդ թվում ներքին բարեվարքու թյան գործողություն ների ծրագրերը հաստատվել են առնվազն 13 մարմնի կողմից (Նախարարութ յուններ, Վար չապետի աշ խատակազմ, նախագահի աշխատա կազմ, ԱԺ աշխատա կազմ, ՊԵԿ, Կադաստր,	գնահատվել են առկա խնդիրները և բացերը: Հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագրերի մեջ ներառվել են նաև բարեվարքության ինստիտուտի ամրապնդմանն ուղղված միջոցառումներ, որոնք պետք է հիմք դառնան հետագա գործառույթները առավել համակարգային իրացնելու համար: Բացի այդ, մշակվել է Պաշտպանության նախարարության համակարգում կոռուպցիոն դրսևորումների կանխարգելման ծրագրի նախագիծը: Ուստի սույն միջոցառումը գնահատվում է մասնակի կատարված:	

ներ:	Ոստիկանություն): Առնվազն 13 մարմնում մշակվել և իրականացվում են գործողությունների ծրագրեր (2021թ.-ի 4-րդ եռամսյակ):		

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Հիմնական խոչընդոտ հանդիսացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ մարդկային ռեսուրսով ոչ բավարար համալրվածությունը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 9

Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում

Պատասխանատու մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ վարչապետի աշխատակազմ

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն

ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)

ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Դեռևս 2020 թվական մարտի 25-ին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթի շրջանակում ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով ընդլայնվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները, սահմանվել են բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների տրամադրման կարգը: Ընդլայնված գործառույթների շրջանակը ներառում է նաև դատավորների թեկնածուների հավակնորդների, Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց բարեվարքության ստուգման մեխանիզմները:

2021 թվականի հունվարի 19-ին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքով հստակեցվել է ԿԿՀ-ի բարեվարքության ուսումնասիրության իրականացման փուլում անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրության գործիքակազմը:

2021 թվականի փետրվարի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքով ներդրվել է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող առանձին դատավորների ինստիտուտը՝ միաժամանակ նախատեսելով առանձին հաստիքներ սահմանել նաև Վերաքննիչ քրեական դատարանում: Նշված օրենքի անցումային դրույթներով սահմանվել է, որ վերոնշյալ դատավորների թեկնածուները/հավակնորդները պաշտոնի նշանակվելու կամ թեկնածուների ցուցակում ընգրկվելու համար պետք է օրենքով սահմանված կարգով անցնեն բարեվարքության ուսումնասիրություն:

Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոններ և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոններ զբաղեցնելուն հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության կարգավորումները:

Բացի դրանից, Ազգային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների փաթեթը, որով, ի թիվս այլ կարգավորումների, նախատեսվել են դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման փուլում հավակնորդների բարեվարքության ուսումնասիրության մեխանիզմները՝ սահմանելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրավասությունը՝ տրամադրելու խորհրդատվական եզրակացություն դատախազների թեկնածության ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ: Օրենքով սահմանված կարգավորումների համաձայն՝ բարեվարքության ուսումնասիրություն իրականացվում է նաև ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող դատախազների, Գլխավոր դատախազի, նրա տեղակալների ընտրության ժամանակ: Նույն օրենքով բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջ է ներդրվել նաև Հակակոռուպցիոն դատարանի դատավորների, վերաքննիչ դատարանների և Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների համար:

2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 103 անձանց բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններին է ներկայացվել 96 խորհրդատվական բնույթի եզրակացություն: Մեկ անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխման արդյունքում: Իսկ ուսումնասիրություն անցնող անձանցից 6-ը եղել են ԿԿՀ անդամի թեկնածուներ: Այս պարագայում,

Հանձնաժողովն ուսումնասիրում է միայն անձանց գույքային դրությունը: 96 եզրակացությունից 56-ը եղել են դրական, 8-ը՝ բացասական, 32-ը՝ դրական վերապահումով: Ներկայացված եզրակացություններից 57-ը վերաբերում են դատավորի թեկնածուներին, 2-ը՝ Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի թեկնածուներին, 1-ը՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուին, 3-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուներին, 33-ը՝ դատախազությունում տարբեր պաշտոնների հավակնող անձանց (13-ը՝ Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի թեկնածուներ, 4-ը՝ դատախազների առաջխաղացման ցուցակի դատախազի թեկնածուներ, 9-ը դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձինք, 7-ը դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով դատախազների թեկնածուներ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Իրավական ակտերի մշակման աշխատանքներն իրականացվել են շահագրգիռ մարմինների մասնակցությամբ: Վերոգրյալ օրենքները հանրային քննարկման են ներկայացվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում (https://www.e-draft.am/projects/1852, https://www.e-draft.am/projects/2644, https://www.e-draft.am/projects/2256), որի արդյունքում ներկայացվել են առաջարկություններ: Նախագծերի փաթեթն ըստ այդմ լրամշակվել է:

Վերոգրյալ օրենքների մշակման շրջանակներում իրականացվել են մի շարք հանրային քննարկումներ և խորհրդակցություններ քաղաքացիական հասարակության, միջազգային կառույցների ներկայացուցիչների, միջազգային և ներպետական փորձագետների, շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Հանրության տեղեկացվածությունն ապահովվել է պաշտոնական աղբյուրների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով (տե՛ս, օրինակ՝ https://www.moj.am/article/2770, https://armenpress.am/arm/news/1040605.html):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը,	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ՀՀ պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ 2021 թվականին ներկայացրել է առնվազն 20 եզրակացու	Սույն միջոցառման շրջանակներում Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմանն ուղղված օրենսդրական փաթեթներն Ազգային ժողովի կողմից ընդունվել են համապատասխանաբար 2021 թվականի հունվարի 19-ին և ապրիլի 14-ին: Զուգահեռաբար, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2021 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 103 անձանց բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել 96 խորհրդատվական բնույթի եզրակացություն: Մեկ անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխման արդյունքում: Իսկ ուսումնասիրություն անցնող անձանցից 6-ը եղել են ԿԿՀ անդամի թեկնածուներ. այս դեպքում Հանձնաժողովն ուսումնասիրում է միայն անձանց գույքային դրությունը: Այսպիսով, ըստ նշված տեղեկությունների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ	**Կատարված է ամբողջությամբ**

որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և	թյուն:	կատարվել են:	

դատավոր ների թեկնածու ների, «Դատախազու թյան մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատախազներ ի և դատախազներ ի թեկնածունե րի, քննիչների բարեվարքու թյան կանոնների պահպանման վերաբերյալ			

ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա համապատասխան անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն:			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 10

«Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում

Պատասխանատու մարմին

Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի ընթացքում իրականացվել են գնահատումներ մի շարք ուղղություններով՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը: Մասնավորապես՝ Տեղեկատվական հարթակի գործարկմամբ 2021 թվականի ընթացքում հնարավորություն է ստեղծվել գնահատելու էլեկտրոնային եղանակով ընթացող

մրցույթների անցկացման թափանցիկությունը, «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների պահանջների պահպանումը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ուսումնասիրվել և գնահատվել է ընթացիկ տարվա հունվարից մինչև դեկտեմբեր ամիսներին Տեղեկատվական հարթակով ընթացող թվով 1867 մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը՝ մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած մասնակիցների փաստաթղթերը, համապատասխան մարմինների կողմից կայացրած որոշումները, հարցազրույցի փուլն անցկացնելու համար ձևավորված հանձնաժողովի կազմերին ներկայացվող պահանջների պահպանումը, հարցազրույցի փուլի գնահատման չափորոշիչների պահանջների պահպանումը, պաշտոնում նշանակված քաղաքացու փաստաթղթերի համապատասխանությունը, իրականացվել են ուղիղ հեռարձակմամբ ընթացող մրցույթների մշտադիտարկումներ: Համապատասխան մարմիններին տրվել են պարզաբանումներ և մեթոդական աջակցություն՝ հայտնաբերված սխալները շտկելու համար: Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի և Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային հարթակի ծրագրային փոխգործակցության արդյունքում հնարավոր է դարձել ինքնաշխատ եղանակով՝ անմիջապես, ստանալու տեղեկատվություն հանրային ծառայության պաշտոնում նշանակված անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ: 2020 թվականի վերապատրաստման տվյալների գնահատման արդյունքում 2021 թվականի փետրվարի 11-ի N 106-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշման մեջ: Իրականացվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերապատրաստում: Վերապատրաստման մասնակիցների կողմից բարձրացված խնդիրների գնահատման արդյունքում լրամշակվել է «Բարեվարքություն» թեմայով մոդուլը և 2021 թվականի հոկտեմբերին կազմակերպված դասընթացն իրականացվել է լրամշակված տարբերակով:

2021 թվականի ընթացքում իրականացվել են գնահատումներ մի շարք ուղղություններով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ուսումնասիրվել և գնահատվել է ընթացիկ տարվա հունվարից մինչև դեկտեմբեր ամիսներին Տեղեկատվական հարթակով ընթացող թվով 1867 մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը, ուսումնասիրվել է մրցույթների անցկացման

ժամանակացույցը, մրցույթների հայտարարման ժամկետները չպահպանելու պատճառները, թվով 58 մարմինների ուղարկվել է շրջաբերական գրություն մրցույթների հայտարարման ժամանակացույց ներկայացնելու և առաջացած թափուր պաշտոնների ժամկետները խստորեն պահպանելու վերաբերյալ: Ուսումնասիրվել են վարկանիշային ցուցակից մասնագիտական խմբի 6-8-րդ ենթախմբի պաշտոնների համալրման համար հարցազրույցի հրավիրման մերժման հետ կապված խնդիրները: Իրականացվել է հարցում վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում գրանցված քաղաքացիների՝ մրցույթի մասնակցության հրավերը մերժելու պատճառների վերաբերյալ: Վեր հանված խնդիրները ձևակերպվել են և «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի 2-րդ բաղադրիչի շրջանակներում, որը վերաբերվում է համալրման և ընտրության ուժեղացված համակարգերի համապատասխանությանը պետական կառավարման սկզբունքներին՝ ակնկալվում է փորձագետների կողմից իրավական լուծումների փաթեթի ներկայացում: Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի և Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային հարթակի ծրագրային փոխգործակցության արդյունքում հնարավոր է դարձել ինքնաշխատ եղանակով անմիջապես ստանալու տեղեկատվություն հանրային ծառայության պաշտոնում նշանակված անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ: Համապատասխան մարմիններին տրվել են պարզաբանումներ և մեթոդական աջակցություն՝ հայտնաբերված սխալները շտկելու համար:

Նշվածից բացի, 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-20-Ն օրենքից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը ընդունվել են՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 756-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 23-րդ կետով նախատեսված «Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման, զենք տրամադրելու, զենքը պահելու, կրելու, օգտագործելու կարգը, պայմանները, համազգեստների, ուսադիրների և տարբերանշանների նկարագրերը և այդ մարմինների ցանկը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծից: 2018 թվականի օգոստոսի 20-ի նախանիստում «Քաղաքացիական ծառայողի կողմից

ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման, զենք տրամադրելու, զենքը պահելու, կրելու, օգտագործելու կարգը, պայմանները, համազգեստների, ուսադիրների և տարբերանշանների նկարագրերը և այդ մարմինների ցանկը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի քննարկման ժամանակ առաջարկվել է Կառավարության նոր որոշումն առայժմ չընդունել՝ հաշվի առնելով, որ դեռևս ոչ բոլոր պետական մարմիններն են ընդգրկվել քաղաքացիական ծառայության համակարգ, իսկ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 756-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 23-րդ կետով նախատեսված Կառավարության որոշման նախագիծը մշակելիս պետք է հաշվի առնել համապատասխան մարմինների առջև դրված խնդիրների առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ 2021 թվականի դեկտեմբերի 27-ի դրությամբ քաղաքացիական ծառայության համակարգ դեռևս ամբողջությամբ չընդգրկված պետական մարմինները 11-ն են՝ ընդհանուր 66 պետական մարմիններից:

Միաժամանակ, 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն օրենքից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերը ընդունվել են՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 756-Ա որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 5-րդ կետով նախատեսված «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանելու մասին» փոխվարչապետի որոշման նախագծից: Հաշվի առնելով, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով ամրագրված է, որ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, քաղաքացիական ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանում է քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը՝ վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանվելուց մեկ ամիս հետո, իսկ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 2 հավելվածի 13-րդ կետով

հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանման ժամկետ է սահմանվել 2022 թվականը, ուստի «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանելու մասին» փոխվարչապետի որոշման նախագիծը դեռևս չի ընդունվել:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման շրջանակներում Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է հանդիպումներ համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների, քաղաքացիական ծառայողների և «Հարմոնիա» հիմնադրամի ներկայացուցիչների (Տեղեկատվական հարթակի ծրագիրը մշակող թիմ) հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և	Վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականին կատարված աշխատանքների ուսումնասիրությունից բխում է, որ իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը, սակայն արդյունքները չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում, ուստի սույն միջոցառումը 2021 թվականին գնահատվում է մեծամասամբ կատարված:	**Կատարված է մեծամասամբ**

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը: Գնահատումների հիման վրա ՀՀ Վարչապետին ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքակա			

նության խորհրդի նիստում (2021-2022թթ.):			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի դիրքորոշման համաձայն բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքի և «Բարեվարքություն» թեմայով վերապատրաստման արդյունքների լիարժեք և արդյունավետ գնահատման համար խոչընդոտ է հանդիսանում հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների բացակայությունը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 11

«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում

Պատասխանատու մարմին

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Պետական մարմիններում, որոնք արդեն անցել են նոր չափանիշներով պաշտոնների գնահատման և դասակարգման համակարգին, նշանակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ (43 պետական մարմին): Այդ պետական մարմիններում հաստատվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը, սահմանվել են

բարեվարքության հարցերով կազմակերպիչների իրավունքները, պարտականությունները և գործառույթները, որոնք բխում են «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներից:

Բացի այդ, դեռևս 2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ից պետական մարմիններում էլեկտրոնային եղանակով էթիկայի հանձնաժողովի ձևավորման նպատակով իրականացվում է քաղաքացիական ծառայողներին քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում ընդգրկելու գործընթացը, իսկ մինչև էլեկտրոնային հարթակի գործարկումը՝ էթիկայի հանձնաժողովը ձևավորվում էր ոչ էլեկտրոնային եղանակով՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վարվող, գրասենյակի ղեկավարի որոշմամբ հաստատված թեկնածուների ցանկից: Ներկայումս քաղաքացիական ծառայողներին քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում ընդգրկելու գործընթացը շարունակվում է, իսկ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում թեկնածուներ ընդգրկած պետական մարմիններում քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպիչը արդեն իսկ կարող է պատահականության սկզբունքով ձևավորել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով:

Հարկ է նշել, որ էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությունը կապված է հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների քննարկման, կանխարգելման և վերացման հետ: «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, իսկ քաղաքացիական ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանում է քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 2 հավելվածի 13-րդ կետով հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանման ժամկետ է նախատեսվել 2022 թվականը:

Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 756-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ կետով նախատեսված է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանելու մասին» փոխվարչապետի որոշման նախագիծը Կառավարություն է ներկայացվում վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանվելուց մեկ ամիս հետո:

Հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքները՝ հարկ է նշել, որ էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի մի մասը՝ ուղեցույցները նախագծերը դեռևս գտնվում են մշակման փուլում:

Էթիկայի հանձնաժողովների ձևավորմամբ, բարեվարքության հարցերով կազմակերպիչների նշանակմամբ, ինչպես նաև էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործունեության ուղեցույցների մշակմամբ ակնկալվում է «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի վերջնական ձևավորում և գործարկում:

Զուգահեռաբար 2021 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համագործակցությամբ կազմվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերապատրաստման ծրագիր: Բարեվարքության կազմակերպիչների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելուն առնչվող վերապատրաստման դասընթացները նախատեսվում էր անցկացնել մինչև 2021 թվականի ավարտը, սակայն ՀՀ-ում առկա համաճարակային

իրավիճակով պայմանավորված վերապատրաստումները կանցկացվեն 2022 թվականի հունվարի 13-ին և 14-ին: Հանձնաժողովի կողմից ստեղծվել է ՀՀ պետական գերատեսչություններում աշխատող բարեվարքության կազմակերպիչների ռեեստր:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացումը հանրային քննարկման անցկացում չի նախատեսում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Վերլուծվել և գնահատվել է Էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ իրենց գործառույթները գործնակա	Հանձնաժողովներն ու կազմակերպիչները ունեն իրենց գործունեությունն ապահովող համապատասխան գործիքակազմ	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից բխում է, որ աշխատանքները մասնակի են իրականացվել, քանի որ Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համար անհրաժեշտ ուղեցույցները դեռևս չեն մշակվել, վերապատրաստման դասընթացներ 2021 թվականի չեն անցկացվել:	**Կատարված է մասնակի**

նում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցը: Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար մշակվել են վերապատրաստման ծրագրեր,	(2021թ.):		

կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Համաճարակային իրավիճակով պայմանավորված վերապատրաստումները հետաձգվել են և կիրականացվեն 2022 թվականին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 12

Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում

Պատասխանատու մարմին

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 թվականի համար պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափի փոփոխություն չի նախատեսվում, իսկ օրենքով սահմանված չափը (66140 դրամ)՝ չի ապահովում նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսը՝ մշակվել և ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՕ-372-Ն օրենքը:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը (66140 դրամ) չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել դրա 120 տոկոսը: Միաժամանակ, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 19.11.2019 թ. ՀՕ-223-Ն օրենքով 2020 թվականի հունվարի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվեց 68000 դրամ, ինչի արդյունքում նվազագույն ամսական աշխատավարձի անվանական արժեքը (հարկերը և նպատակային սոցիալական վճարը ներառյալ) կազմում է 91275 դրամ, որի 80 տոկոսը 73020 դրամ է: Ստեղծված անհամարժեքության կարգավորման նպատակով փոփոխություններ և լրացումներ իրականացվեցին համարժեք օրենքներում՝ նախատեսելով, որ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը 2020 և 2021 թվականների համար չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 70 տոկոսից. հիշյալ կարգավորումներն ընդունվեցին որպես ժամանակավոր նորմատիվ իրավական ակտեր: Օրենքի գործողության ժամկետն ավարտվում է 2021 թվականի դեկտեմբերի 31-ին: 2022 թվականի պետական բյուջեի մասին օրենքով պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափի փոփոխություն չի նախատեսվում, ուստի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՕ-372-Ն օրենքով սահմանվեց, որ 2021 թվականի համար բազային աշխատավարձը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 70 տոկոսից:

Մշակվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ» զեկույցը, որով գնահատվել է պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների փոփոխության անհրաժեշտությունը, ներկայացվել են առաջարկություններ՝ պետական պաշտոններ և պետական ծառայության

պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և (կամ) հիմնական աշխատավարձի չափը որոշող գործակիցների փոփոխության վերաբերյալ, վեր են հանվել վարձատրության համակարգում առկա խնդիրներ։

Ընդ որում, կարևոր է ի նկատի ունենալ, որ պետական հատվածում վարձատրության համապարփակ բարեփոխումները նախատեսվում են Հանրային կառավարման բարեփոխումների 2030 թվականի ռազմավարության շրջանակներում։

Իրականացվել են մի շարք միջոցառումներ պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նյութական խրախուսման ու սոցիալական երաշխիքների բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝

– «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՕ-372-Ն օրենքի համաձայն՝ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող վարժական հավաքներին կամ զինվորական վարժանքներին կամ զորավարժություններին ներգրավման ժամանակահատվածները հաշվի կառնվեն կիսամյակային հաշվետվությունների կամ կատարողականի հիման վրա պարգևատրման իրավունք տվող աշխատաժամանակում, ինչպես նաև՝ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող վարժական հավաքներին կամ զինվորական վարժանքներին կամ զորավարժություններին ներգրավված պետական ծառայողի կատարողականը բացասական գնահատվելու դեպքում հիմնական աշխատավարձի աճի կասեցման կամ հիմնական աշխատավարձի իջեցման դրույթները չեն կիրառվի։
– ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 374-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 13-ի N 758-Ն որոշումը, որով հստակեցվել են համապատասխան մարմնի գործող կառուցվածքային ստորաբաժանման կողմից փորձարարական աշխատանքներ իրականացնելու ժամանակ անհատական ցուցիչների բավարար մակարդակ ձեռք բերելու դեպքում աշխատանքների փորձարարական կազմակերպման համար օպտիմալացված միջոցներից պարգևատրվելու և տվյալ

ստորաբաժանման հիմնական աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման համար կատարողականի հիման վրա կամ այլ աղբյուրներից (բացառությամբ օպտիմալացված միջոցների) պարգևատրվելու հնարավորությունները:

– ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական փոխհատուցում տրամադրելու կարգը և չափերը սահմանելու մասին» 2021 թվականի օգոստոսի 27-ի N 1377-Ն որոշումը, որով կարգավորել է իր մշտական ծառայողական վայրից 30 կմ և ավելի հեռավորությամբ ծառայության նշանակված կամ ծառայության գործուղված հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական փոխհատուցում տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները:

– 2021 թվականի մայիսի 26-ին ընդունվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով սոցիալական երաշխիքներ սահմանվեցին կամավորական հիմունքներով, ինչպես նաև զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայության ներգրավված պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար: Սահմանվել է, որ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով ՀՀ, ինչպես նաև ՀՀ կամ պաշտպանության պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածում պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի հիմնական աշխատավարձը պահպանվում է: Սահմանվել է նաև, որ զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայության, կամ Արցախի պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու մեկնած պետական ծառայողի կատարողականը բացասական գնահատվելու դեպքում չի կիրառվում հիմնական աշխատավարձի աճի կասեցման կամ

աշխատավարձի իջեցման դրույթները: Բացի այդ սահմանվել է, որ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը ներառվում է կատարողականի կիսամյակային կամ կիսամյակային հաշվետվության գնահատման մեջ ներառվող ժամանակահատվածներում: Նշված իրավակարգավորումները տարածվել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Հիշյալ օրենքում նաև դրույթ է սահմանվել, որ 2020 թվականի 2-րդ կիսամյակի համար կատարողականի հիման վրա պարգևատրումները 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայության ներգրավված կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող (կամավորական)՝ կամավորական հիմունքներով ՀՀ, ինչպես նաև ՀՀ կամ պաշտպանության պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցած պետական ծառայողին տրվելու են առանց հաշվի առնելու Օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված ժամկետը:

Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղությունների վերաբերյալ միջոցառումներ են սահմանվել Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության ծրագիր): Մասնավորապես սահմանվել է արժանիքահենք և պրոֆեսիոնալ հանրային ծառայության համակարգի կայացում միջոցառումը, որի շրջանակներում նախատեսվում է 2024 թ. մարտի 3-րդ տասնօրյակ պետական համակարգում վարձատրության ռեֆորմն իրագործել ամբողջական ծավալով, իսկ որպես վերջնարդյունքներ սահմանված են հետևյալը.

– Պետական հատվածում աշխատավարձը մրցունակ է, որի համար նվազագույն սահմանային շեմ է մասնավոր հատվածում միջին անվանական աշխատավարձի 87 տոկոսը.

– Պետական հատվածում աշխատավարձերի ներքին կառուցվածքն արդյունավետ է՝ ապահովելով տարբեր ծառայությունների և տարբեր պաշտոնների խմբերի միջև արդարացի բաշխում՝ հիմնական աշխատավարձի խտության գործակցի միջինում 7.0-7.5 տոկոս միջակայքում.

– Պարգևատրման համակարգը լիովին հենված է կատարողականի և արդյունքների գնահատման արդիականացված համակարգի վրա.

– Պետական հատվածում պարգևատրումը կազմում է տարեկան հիմնական աշխատավարձի առավելագույնը 20 տոկոսը՝ ըստ վերանայված բազային աշխատավարձի.

– Պետական հատվածում պարգևատրում ստացող հանրային ծառայողները կազմում են ծառայողների առավելագույնը 50 տոկոսը բազային աշխատավարձի վերանայումից հետո.

- Բացահայտված են պետական հատվածում վարձատրության գենդերային խզվածքը, և ձևակերպված են դրա նվազեցմանն ուղղված թիրախային միջոցառումներ:

Կառավարության ծրագրով նախատեսվել են նաև բժիշկների, նեղ մասնագետների, ուսուցիչների և գիտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող անձանց վարձատրության համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Վերոնշյալ իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում, ընդունված առաջարկությունների հիման վրա իրականացվել են անհրաժեշտ լրամշակումները:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղված միջոցառումներ են նախատեսվել ՀՀ հանրային կառավարման	Վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականի իրականացվել են աշխատանքներ որոշակի խումբ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության բարելավման առնչությամբ: Զուգահեռաբար պետական համակարգում վարձատրության համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ են սահմանվել Կառավարության ծրագրով, որոնք նախատեսվում է իրականացնել մինչև 2024 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը: Նշված տեղեկությունների և ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառումը 2021 թվականին կատարված է մասնակի:	**Կատարված է մասնակի**

բարեփոխումների ռազմավարությամբ և իրականացվում են պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխումներին ուղղված միջոցառում			

ները:			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Պետական համակարգում վարձատրության բարեփոխումներն ամբողջ ծավալով իրականացնելու համար հնարավոր չի եղել ապահովել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի շրջանակներում անհրաժեշտ ծավալով ֆինանսական ռեսուրսներ, այդ թվում՝ հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակի և Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակով պայմանավորված առաջնահերթությունները: Նույն հանգամանքներով, ինչպես նաև 2021 թ. հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում Կառավարության կազմավորմամբ պայմանավորված՝ որոշակիորեն հետաձգվել է նաև հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության հաստատումը և ռեֆորմների մեկնարկի գործընթացը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 13

Հանրային ծառայության մասին օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում

Պատասխանատու մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հանձնաժողովը 2021 թվականի ընթացքում գրեթե ավարտին է հասցրել Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների, պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, որը մշակվել է ԵԽ/ԵՄ

Գործընկերություն հանուն լավ կառավարման «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում» II ծրագրի շրջանակներում: Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների, պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի կիրառմամբ պետք է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում վարքագծի պահպանման ուղղությամբ իրականացվի միասնական քաղաքականություն: Օրինակելի վարքագծի կանոնները լրացնում և պարզաբանում են օրենքներով ամրագրված բարեվարքության կանոնները: Այս համատեքստում բարեվարքության կազմակերպիչները ոչ միայն օրինակելի վարքագծի կանոնները վերահսկողներն են, այլ նաև դրանք տարածողը և մշակույթ ձևավորողը: 2021 թվականի 4-րդ եռամսյակի դրությամբ կանոնագիրքը գտնվում է իրավաբան փորձագետների կողմից վերանայման փուլում, նախատեսվում է 2022 թվականի հունվար ամսին կազմակերպել պետական կառավարման համակարգի բարեվարքության կազմակերպիչների հետ հանդիպում՝ կանոնագրքի նախնական շրջանառության նպատակով: Կանոնագրքի հաստատումը նախատեսվում է ավարտել 2022 թվականի ապրիլ ամսին՝ համաձայն Հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցի:

Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանում է քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը: Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 756-Ա որոշման N 2 հավելվածի 13-րդ կետով սահմանված է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանելու մասին» փոխվարչապետի որոշման նախագիծը Կառավարություն է ներկայացվում վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանվելուց մեկ ամիս հետո:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների և քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների վերաբերյալ նախագիծ պետական մարմիններ կարծիքի չի ներկայացվել:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Մշակվել են հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները:	Իրականացվել է տարեկան առնվազն 2 վերապատրաստում	Սույն միջոցառման շրջանակում 2021 թվականին իրականացված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները մշակվել են, իսկ քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները դեռևս չեն մշակվել, քանի որ դրանք պետք է մշակվեն արդեն իսկ հաստատված հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա: Այսպիսով, սույն միջոցառման շրջանակում իրականացված աշխատանքների և վերստուգիչ ցուցիչի, ինչպես նաև ակնկալվող արդյունքի համադրությունից պարզ է դառնում, որ սույն միջոցառումը կատարվել է մասնակի	**Կատարված է մասնակի**

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 14

Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում

Պատասխանատու մարմին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ)

Քննչական մարմիններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☑ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Համաձայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիրքորոշման՝ Հակակոռուպցիոն ռազմավարության հավելված 2-ի 14-րդ միջոցառման շրջանակում նախատեսված էր իրականացնել պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում: Վերը նկարագրված 13-րդ միջոցառման շրջանակներում իրականացված Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների,

պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի մշակմամբ նախատեսվում է իրականացնել հանրային ծառայողների վարքագծի կանոնների ներդրման և պահպանման միասնական քաղաքականությունը: Նախատեսվում է, որ մշակված փաստաթուղթը հիմք կդառնա նաև ԱԺ պատգամավորների և քննիչների վարքագծի կանոնների սահմանման և պահպանման համար:

Քննչական կոմիտեի կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում ուսումնասիրվել է միջազգային փորձը, որի արդյունքում դեռևս 2020 թվականին մշակվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները սահմանելու մասին ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նշված հրամանի նախագծով սահմանվում են ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները, որոնք Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարվելակերպի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են՝ ուղղված ապահովելու Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պատշաճ վարքագիծը, բացառելու հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդելու հասարակության վստահությունը Կոմիտեի նկատմամբ: Նախագծով նախատեսվում են Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի սկզբունքները, ընդհանուր կանոնները, վարքագծի կանոնները պաշտոնեական և ոչ պաշտոնեական հարաբերություններում: Մասնավորապես՝ դրույթներ են նախատեսվում քննիչի բարոյական նկարագրի, օրենսդրության պահանջների պահպանման, գործընկերների և այլ անձանց հետ փոխհարաբերությունների, ծառայողական գույքը օգտագործելու տեսանկյունից նրա վարքագծի վերաբերյալ և այլն:

Նախագիծը 25.06.2020թ. թիվ 01/12/30972-20 գրությամբ ներկայացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (պատասխանատու մարմնին) կարծիքի, սակայն մինչ օրս պատասխան գրություն՝ կարծիք չի ներկայացվել: «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի փոփոխություններից ելնելով՝ Նախագիծը 2021 թվականին լրամշակվել և ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հաստատմանը: Ակնկալվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի

բարեվարքության նորմերին համապատասխանող հանրային կերպարի ձևավորում, համապատասխան վերահսկողության մեխանիզմների ստեղծում և փաստացի գործարկում:

Պատգամավորների վարքագծի կանոնների առնչությամբ դեռևս 2020 թվականի փետրվարին Ազգային ժողովում ստեղծվել է ոչ ֆորմալ աշխատանքային խումբ՝ էթիկայի մշտական հանձնաժողով ստեղծելու և էթիկայի կանոնագիրք կազմելու շուրջ Ազգային ժողովի պլանները նախագծելու և իրագործելու համար: 2020 թվականի ապրիլին Եվրոպայի Խորհրդի փորձագետների ներգրավմամբ մշակվել է «Ազգային ժողովի պատգամավորի վարքագծի կանոնագրքի առաջարկվող տարբերակ» փաստաթուղթը: 2020 թվականի հուլիսին աշխատանքային խումբը Ազգային Ժողովի երեք խմբակցություններին է ուղարկել նաև ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան, 39 ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից մշակված խորհրդարանական բարեվարքության և դրան առնչվող օրենսդրության քարտեզագրման շուրջ երկու զեկույցները: Բացի այդ, ձեռք է բերվել պայմանավորվածություն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան, ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում էթիկայի կանոնագիրքը փորձագետների հետ համատեղ մշակելու մասին: Նույն ծրագրի շրջանակներում մշակվել է նաև անանուն հարցաշար, որը ուղարկվել է բոլոր պատգամավորներին որպես հավելյալ գործիք առանցքային հարցերի շուրջ նրանց դիրքորոշումները վեր հանելու համար: Հարցաշարի արդյունքները կամփոփվեն և կարտացոլվեն հետագա աշխատանքներում: Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնները ներկայումս գտնվում են մշակման փուլում, և կատարված աշխատանքները ներկայացվել են միջազգային կազմակերպություններին՝ կարծիքի:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախատեսվում է վերը նշված միջոցառման շրջանակներում մշակվող փաստաթղթերը շրջանառել ինչպես քաղաքացիական հասարակության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, այնպես էլ ներկայացնել հանրային

քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am, վերջնական քննարկումների արդյունքում իրականացնել կանոնագրքի և հայեցակարգի լրամշակման աշխատանքներ:

Վերոգրյալ փաստաթղթերի մշակման շրջանակներում իրականացվել են մի շարք հանրային քննարկումներ և խորհրդակցություններ քաղաքացիական հասարակության, միջազգային կառույցների ներկայացուցիչների, միջազգային և ներպետական փորձագետների, շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները ընդունվել և գործում են:	Միջազգային փորձի հիման վրա մշակված պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները հաստատվել են (2021 թվականի 1-ին եռամսյակ):	Սույն միջոցառման շրջանակներում ձեռք բերված տեղեկությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականի համար նախատեսված աշխատանքները կատարված չեն, քանի որ պատգամավորի և քննիչի վարգաքծի կանոնները չեն ընդունվել և չեն գործում:	**Կատարված չէ**

	Էթիկայի հանձնաժողովի կողմից իրականացվել է տարեկան առնվազն 2 վերապատրաստում (2021թ., 2022թ.)		

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Հիմնական խոչընդոտ հանդիսացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մարդկային ռեսուրսի ոչ բավարար համալրվածությունը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 15

Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ

Հասարակական կազմակերպություններ (Համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հակակոռուպցիոն ռազմավարության հավելվածի 2-ի 15-րդ միջոցառման ապահովման հիմքում դրվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի 2-րդ բաղադրիչը, որը վերաբերվում է համալրման և ընտրության ուժեղացված համակարգերի համապատասխանությունը պետական կառավարման սկզբունքներին։

Ծրագրի շրջանակներում աշխատանքները գտնվում են ակտիվ փուլում: Միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները պայմանավորված են եղել ծրագրի կասեցմամբ, որի պատճառով չորս ամիս ժամկետով դադարեցվել է Թվինինգ ծրագրի փորձագետների հետ աշխատանքը: Ծրագրի փորձագետների հետ կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ հեռավար և առկա եղանակով, գնահատվել են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված մրցութային հանձնաժողովների ձևավորման համար ամրագրված պահանջները, ուսումնասիրվել են Տեղեկատվական հարթակի միջոցով ընթացող մրցույթների հանձնաժողովների կազմերի համապատասխանությունը իրավական ակտերի պահանջներին, գնահատվել են առկա ռիսկերը: Վերջին հանդիպումը փորձագետների հետ կայացել է դեկտեմբեր ամսվա 1-ին տասնօրյակում և ձեռք է բերվել պայմանավորվածություն 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին ծրագրի վերջնարդյունքները ներկայացնելու վերաբերյալ: Ծրագրի ամփոփումից հետո հնարավոր կլինի սահմանել մրցութային հանձնաժողովների կազմերին ներկայացվող չափանիշների ու պահանջների վերաբերյալ առաջարկությունների փաթեթը: Առաջարկությունների փաթեթի ներկայացմամբ ակնկալվում է մրցույթները կազմակերպել հնարավորինս թափանցիկ՝ բարձրացնել մրցութային հանձնաժողովների գործունեության նկատմամբ վստահությունը, հնարավորինս բացառել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց ազդեցությունը մրցութային հանձնաժողովի անդամների որոշում կայացնելու վրա:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Թվինինգ ծրագրի շրջանակներում ձևավորվել է աշխատանքային խումբ, որում ներգրավված են համապատասխան մարմինների ներկայացուցիչներ: Բացի աշխատանքային խմբի անդամներից, կազմակերպվել են հանդիպումներ համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների աշխատակիցների հետ:

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Սահմանվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման հստակ չափանիշներ	Ընդունվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը (2021թ.):	Սույն միջոցառման շրջանակում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականի մայիս ամսից ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի վերագործարկմամբ սույն միջոցառման կատարմանն ուղղված աշխատանքները շարունակվել են 2021 թվականին, սակայն օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված սույն միջոցառման վերստուգիչ ցուցիչով և ակնկալվող արդյունքով սահմանված աշխատանքներն ամբողջությամբ հնարավոր չի եղել ավարտել: Ուստի, սույն միջոցառումը մասնակի է կատարված:	**Կատարված է մասնակի**

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառմանը կատարումը ձգձգող հանգամանքները պայմանավորված են եղել արտակարգ և ռազմական դրության ռեժիմի սահմանմամբ, որի պատճառով չորս ամիս ժամկետով կասեցվել էր Թվինինգ ծրագրի փորձագետների հետ աշխատանքը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 16

Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից դեռևս 2020 թվականին մշակվել է «Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացման» առաջարկությունների փաթեթը (այսուհետ՝ Առաջարկությունների փաթեթ): Միջազգային փորձի հաշվառմամբ մշակվել են այն

էական չափանիշները, որոնց հաշվառմամբ պետք է իրականացվի իրավական ակտերի նախագծերի և այլ նորմատիվ ակտերի գնահատումը: Առաջարկությունների փաթեթով նախանշվել են հիմնական սկզբունքները, որոնք պետք է հանդիսանան գնահատման գործընթացի հիմքը: Քննարկվել են նաև գնահատումն իրականացնող մարմիններին ներկայացվող էական պահանջները: Կարևորվել է գնահատումն իրականացնող մարմնի մասնագիտացվածությունը և պատրաստվածությունը: Առաջարկությունների փաթեթը շահագրգիռ մարմինների կարծիքների հաշվառմամբ ամփոփվել և 2020 թվականի դեկտեմբերին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

2021 թվականին առաջարկությունների փաթեթը ներկայացվել է նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Ներկայումս համապատասխան իրավական ակտի մշակման ապահովման նպատակով գործընկեր միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ իրականացվում են համապատասխան աշխատանքներ:

Արդարադատության նախարարության ներկայացուցիչները մասնակցել են նաև դեկտեմբերի 1-ին ԹԻՀԿ կողմից կազմակերպված փորձագիտական քննարկմանը «Իրավական ակտերի հակակոռուպցիոն գնահատման տեսլականը» թեմայով: Քննարկմանը մասնակցում էին պետական կառույցների, ոլորտային տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև անհատ փորձագետներ: Քննարկման ընթացքում ներկայացվեցին իրավական ակտերի հակակոռուպցիոն գնահատման վերաբերյալ պետական մարմինների մոտեցումներն ու գործընթացները, ինչպես նաև առկա մարտահրավերներն ու կարիքները: Մասնակիցների կողմից բարձրաձայնվել են մի շարք առաջարկություններ հակակոռուպցիոն գնահատման արդյունավետությունը, ինչպես նաև թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարելավելու վերաբերյալ:

Նշված հարցը քննարկվել է նաև Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն աշխատանքային խմբի հանդիպումների ընթացքում պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկերների հետ:

Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության մոդելի ընտրության և չափանիշների սահմանման վերաբերյալ փորձագիտական դիրքորոշում ստանալու նպատակով քննարկումներ են տեղի ունեցել ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC, այսուհետ՝ Գրասենյակ), ինչպես նաև համապատասխան համատեղ աշխատանքների իրականացման շրջանակը նախատեսվել է Գրասենյակի հետ համագործակցության՝ 2022-2025թթ. համար ճանապարհային քարտեզի նախագծում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Առաջարկությունների փաթեթը կազմվել է շահագրգիռ մարմինների դիրքորոշումների հաշվառմամբ: Բացի այդ, առաջարկությունների փաթեթի մշակումից հետո իրականացվել են հանրային քննարկումներ, ուղղված սույն ոլորտում առկա հիմնախնդիրներին:

Միաժամանակ, ոլորտային իրավական ակտի նախագիծը մշակվելուց հետո սահմանված կարգով կներկայացվի հանրային քննարկման:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Հակակոռուպցիոն կարգավորման	Ընդունվել է հակակոռուպցիոն կարգավորման	Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ անհրաժեշտ իրավական ակտի մշակումը գտնվում է ընթացիկ փուլում: Նշված աշխատանքների համապարփակության և արդյունավետության ապահովման նպատակով, Միջազգային	**Կատարվել է մասնակի**

ազդեցության հստակ չափանիշները և շրջանակը սահմանվել է:	ազդեցության գնահատման վերաբերյալ համապատասխան իրավական ակտ՝ ներառելով ազդեցության գնահատման հստակ չափանիշներ ու շրջանակ (2021թ.):	կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ իրականացվում է համագործակցություն: Ուստի, սույն միջոցառումը կատարվել է մասնակի:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Միջոցառմանը իրականացմանը խոչընդոտող հանգամանք է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ռեսուրսների բացակայությունը՝ նկատի ունենալով, որ հենց այս մարմինն է՝ որպես անկախ և մասնագիտացված մարմին, նպատակահարմար քննարկվող գործառույթի իրականացման համար:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 17

Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացվող հայտարարագրերի կատարելագործման շարունակականությունը ապահովելու նպատակով 2021 թվականի հունվարի 19-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ««Հանրային ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) և հարակից օրենքների փաթեթը, որով իրականացվել են մի շարք փոփոխություններ գործող հայտարարագրման համակարգում:

Օրենքով ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը: Հայտարարագրման պարտականություն է նախատեսվել նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հարկային, մաքսային ծառայությունների գլխավոր, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձանց համար: Օրենքով ներդրվել է նոր՝ ծախսերի հայտարարագրման ինստիտուտը: «Հանրային ծառայության մասին» օրենքի 40.1-րդ հոդվածով սահմանվել են հայտարարագրման ենթակա ծախսերի տեսակները, ծախսերի հայտարարագրման ժամանակ ներկայացվող տեղեկատվությունը և այլն: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության, շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը, ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը, գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը, վարկի մարմանն ուղղված վճարումներն, անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը, ցանկացած այլ ծախս, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Ծախսերի հայտարարագրի ներդրմամբ պայմանավորված՝ վերանայվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ գլխի վերնագիրը, ինչպես նաև նշված գլխի այլ կարգավորումները: Օրենքով վերանայվել է գույքի հայտարարագրերի բովանդակությունը: Վերանայվել է թանկարժեք գույքի դրամական շեմը: Սահմանվել է, որ թանկարժեք գույք է հանդիսանում չորս միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ ավելի բարձր արժեք ունեցող ցանկացած գույքը: Ներդրվել է փաստացի տիրապետվող գույքի, հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև այն գույքի հայտարարագրման պահանջ, որից փաստացի օգուտ է ստանում կամ տնօրինում է հայտարարատուն: Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ փաստացի տիրապետվող գույք է համարվում հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, բայց նրա կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող կամ օգտագործվող (անկախ նշված իրավունքների պետական գրանցումից) անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի), թանկարժեք գույքը: Ընդլայնվել է գույքի հայտարարագրման ժամանակ ներկայացվող տեղեկատվության շրջանակը: Տեղեկատվություն է ներկայացվում նաև անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, արժեթղթերի ձեռքբերման գործարքի արժեքի, գործարքի մյուս կողմի վերաբերյալ, ինչպես նաև սահմանվել է բանկային ավանդի և բանկային հաշվի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու պահանջ: Օրենքով հստակեցվել են նաև հայտարարագրման ենթակա եկամուտների տեսակները: Վերանայվել է եկամտի հայտարարագրում ներկայացվող տեղեկատվության շրջանակը: Փոփոխությունների են ենթարկվել նաև շահերի հայտարարագրման որոշ կարգավորումներ և այլն:

Վերոգրյալ փոփոխությունների հաշվառմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2021թ. մայիսի 27-ի N 858-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարատուների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի օրինակելի ձևերը: Նշված որոշման շրջանակում հայտարարագրերի ձևերում ներառվել են նաև ծախսերի հայտարարագրերի ձևերը, ինչպես նաև իրականացվել են այլ փոփոխություններ:

Բացի այդ, մշակվել, հանրային քննարկումների և շահագրգիռ մարմինների կողմից ստացված կարծիքների հիման վրա ամփոփվել և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 306-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Սույն նախագծով նախատեսվում է վերանայել հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների շրջանակը: Մասնավորապես, ի թիվս այլնի, նախատեսվում է հրապարակել պաշտոնեական պարտականությունների դադարեցման օրվա դրությամբ կատարված ծախսերի և տարեկան ծախսերի ընդհանուր չափի վերաբերյալ տեղեկատվությունը: Տեղեկատվության նշված ձևաչափով հրապարակման նպատակահարմարությունը կայանում է նրանում, որ այն հանրային հաշվետվողականության տեսանկյունից հանդիսանում է կարևոր գործիք և հնարավորություն է տալիս հասարակության ներկայացուցիչներին հանրային վերահսկողություն իրականացնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց գույքի և եկամուտների ամբողջական շարժի նկատմամբ՝ համադրելով գույքի, եկամուտների և ծախսերի տվյալները:

Ներկայումս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տարվում են հայտարարագրման էլեկտրոնային համակարգի վերափոխման աշխատանքներ: Մասնավորապես, Հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդիականացման նպատակով արդեն իսկ տարվում է համագործակցությունը Sinergy international systems ընկերության հետ: Նախատեսվող արդիականացման արդյունքում նախատեսվում է էլեկտրոնային ալգորիթմների միջոցով ապահովել տեղեկատվության ինքնաշխատ եղանակով գեներացում, էլեկտրոնային համակարգում հայտարարագրերի լրացման գործընթացի պարզեցում և այլն:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նշված օրենսդրական փաթեթները ներկայացվել է շահագրգիռ պետական մարմիններին՝ դիրքորոշման ստացման նպատակով: Քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ https://www.e-draft.am/ կայքում նախագծերի հանրային քննարկումը կազմակերպելու, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվական նյութեր հրապարակելու միջոցով: Նախագծերի փաթեթը քննարկվել է նաև Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ:

Ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագծերի փաթեթը լրամշակվել է:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ https://www.e-draft.am/ կայքում (https://www.e-draft.am/projects/2121), որի արդյունքում ներկայացվել են առաջարկություններ և փաթեթը, ըստ այդմ, լրամշակվել է:

Հանրությանը իրազեկելու համար Նախագծի փաթեթի վերաբերյալ տեղեկատվական նյութեր են հրապարակվել ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Ընդունված կարգավորումների շարունակա	Վերանայվել է հայտարարագրերի բովանդակու	Սույն միջոցառման շրջանակում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտարարագրման համակարգի վերանայմանն ուղղված օրենքները և դրանցից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվել են: Բացի այդ,	**Կատարված է ամբողջությամբ**

կան կիրարկման ապահովում:	թյունը: Ներդրվել է ծախսերի հայտարարագրման ինստիտուտը:	ծախսերի հայտարարագրման համակարգը ներդրվել է, հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնման արդյունքում 2019թ. համեմատությամբ 3 անգամ աճել է հայտարարատու պաշտոնատար անձանց թիվը: Ուստի սույն միջոցառումն ամբողջությամբ կատարվել է:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 18

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ընդհանուր առմամբ 45 դիմում և մեդիա հրապարակում անհամատեղելիության պահանջների և շահերի բախման վերաբերյալ, որի արդյունքում անհամատեղելիության պահանջների վերաբերյալ տրամադրվել է 10 պաշտոնական պարզաբանում, որոնք հիմնականում վերաբերել են հանրային պաշտոնին զուգահեռ այլ վճարովի աշխատանքների կատարմանը կամ որևէ այլ հանրային կամ համայնքային պաշտոն զբաղեցնելուն: 3 գործի հիման վրա հարուցվել է անհամատեղելիության վարույթ, որոնցից մեկը մարզպետի,

մեկը՝ համայնքի ղեկավարի, և մյուսը դատավորի նկատմամբ։ Դատավորի նկատմամբ անհամատեղելիության պահանջների խախտման եզրակացության հիման վրա դադարեցվել են նրա լիազորությունները։ Նշված վարույթների հիմքում եղել է պաշտոնատար անձանց կողմից պաշտոնին զուգահեռ բիզնես գործունեությամբ զբաղվելու հանգամանքը։

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առնչվել է անհամատեղելիության պահանջների և շահերի բախման հետ կապված մի շարք դեպքերի, որոնց մեծամասնությունը սակայն «Հանրային ծառայության մասին» օրենքի ներկա կարգավորումների շրջանակներում հնարավորություն չեն ընձեռել Հանձնաժողովին հարուցել համապատասխան վարույթ և ընթացք տալ։ Դեպքերի մեծամասնությունը թերևս վերաբերել է պետական գնումների գործընթացին, որտեղ շահերի բախման ներկա կարգավորումներով ֆորմալ ընթացակարգերի պահպանումը զրկում է Հանձնաժողովին վարույթի շրջանակներում այս կամ այն պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական ազդեցությունը գնումների գործընթացի, կազմակերպվող մրցույթների և դրանց արդյունքների վրա գնահատելու հնարավորությունից։ Անհրաժեշտ է ընդգծել նաև բիզնես բաժնեմասի հավատարմագրային կառավարման ինստիտուտի անկատարությունը։ Այս իրավակարգավորումները հիմնականում կրում են ձևական բնույթ, բովանդակային տեսանկյունից չեն լուծում բիզնես գործունեության և հանրային պաշտոնի անհամատեղելիության խնդիրը։ Հաշվի առնելով այս և մի շարք այլ խնդիրներ, որոնք արդեն իսկ արձանագրել է Հանձնաժողովը թե՛ վարույթների եզրակացությունների մեջ, թե՛ պաշտոնական կայքում կատարված հրապարակումների միջոցով, Հանձնաժողովը նախաձեռնել է անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կոնցեպտների վերանայման, դրանց՝ միջազգային փորձին համապատասխանեցման աշխատանքներ։

Զուգահեռաբար Արդարադատության նախարարության կողմից դեռևս 2020 թվականին մշակվել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցման վերաբերյալ» առաջարկությունների փաթեթը (այսուհետ նաև՝ Առաջարկությունների փաթեթ)։ Առաջարկությունների փաթեթը 2020 թվականի դեկտեմբերի 18-ին ներկայացվել է շահագրգիռ պետական մարմիններ՝ կարծիքի և ստացված դիտարկումների հիման վրա

լրամշակված եղանակով ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Բացի այդ, սույն փաթեթի շրջանակներում ուսումնասիրվել են շահերի բախման վերաբերյալ «Հանրային ծառայությունների մասին» օրենքով սահմանված կարգավորումների կատարելագործման հնարավոր ուղիները: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի շահերի բախման և անհամատեղելիության պահանջների վերաբերյալ կարգավորումները սահմանված են 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» ՀՕ 206-Ն օրենքով: Սույն օրենքի 31-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ հավատարմագրային կառավարիչ կարող են հանդիսանալ ըստ էության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք, առանց որևէ սահմանափակումների: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով միայն հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարումն իրականացնող սուբյեկտների նկատմամբ չեն տարածվում Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների վերաբերյալ կարգավորումները: Ի հավելումն վերոգրյալի՝ հարկ է նշել, որ չնայած շահերի բախման վերաբերյալ կանոնակարգումներ սահմանող իրավական ակտերը պարունակում են շահերի բախումը կանխարգելող, շահերի բախման իրավիճակները կարգավորող նորմեր, սակայն դրանց ձևակերպումները ոչ միշտ են հստակ և նույնական, ինչը խոչընդոտում է շահերի բախման միօրինակ ընկալմանն ու հետագա կարգավորմանը և իրավակիրառ պրակտիկայում խոչընդոտում է պատասխանատվության միասնական մեխանիզմերի կիրառությանը: Հաշվի առնելով նշված ուսումնասիրությունների արդյունքները և գլոբալ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությունը՝ 2021 թվականին նախաձեռնվել են «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) մշակման աշխատանքները: Նախագծերի փաթեթով նախատեսվելու են առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման հանձնելու շրջանակներում հավատարմագրային կառավարիչների և պաշտոնատար անձ հանդիսացող

հավատարմագրային կառավարման հիմնադիրների միջև փոխկապակցվածությունը բացառող կարգավորումներ, սահմանվելու են հավատարմագրային կառավարչի համար որոշակի պահանջներ և այլն: Բացի այդ նախագծով նախատեսվելու են շահերի բախման լրացուցիչ նորմեր՝ հանրային ծառայողների համար նախատեսելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հստակ սահմանափակումներ՝ ամրագրելով իրատեսական, արդյունավետ և թափանցիկ մեխանիզմներ: Սույն միջոցառումը ընդհանուր առմամբ նպատակ է հետապնդում հանրային ծառայության ոլորտում սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք կնվազեցնեն հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի հանրային և մասնավոր շահերի միջև հնարավոր հակասությունները, ինչն իր հերթին կնպաստի հանրային ծառայության ոլորտի բարելավմանը:

Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ Նախագծերի փաթեթով նախատեսվող փոփոխությունների ինստիտուցիոնալ բնույթը հաշվի առնելով՝ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության ծրագիր) սահմանվել է Նախագծերի փաթեթի ընդունումը՝ անհամատեղելիության պահանջների, շահերի բախման վերաբերյալ կարգավորումները միջազգային փորձի հաշվառմամբ հստակեցնելու այն հանգամանքի հաշվառմամբ, որ իրավակիրառ պրակտիկայում ապահովվի սույն իրավահարաբերությունների միատեսակ ընկալումը և լրացվեն գործող իրավակարգավորումների բացերը: Կառավարության ծրագրով սահմանվել են Նախագծերի փաթեթի մշակման, քննարկման և ընդունման նոր՝ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ժամկետներից տարբերվող ժամկետներ: Հիմք ընդունելով Կառավարության ծրագրի ժամկետները՝ նախատեսվում է Նախագծերի փաթեթը Վարչապետի աշխատակազմ ներկայացնել 2022 թվականի մայիս ամսվա ընթացքում:

Նշված շրջանակներում համագործակցության աշխատանքներ են տարվում գործընկեր միջազգային դոնոր կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման Առաջարկությունների փաթեթի մշակման աշխատանքներն իրականացվել են շահագրգիռ մարմինների ներգրավմամբ: Նախագծերի փաթեթի մշակման աշխատանքներն ավարտելուց հետո կներկայացվեն շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը կապահովվի Նախագծերի փաթեթի հանրային քննարկումների շրջանակներում, իսկ միջազգային դոնոր կազմակերպությունների ներգրավվածությունը շարունակական բնույթ է կրում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակված առաջարկությունների փաթեթի հիման վրա «Հանրային ծառայության	2021 թվականի համար վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթը մշակման փուլում է, սակայն Ազգային ժողով չի ներկայացվել, քանի որ Կառավարության ծրագրով սահմանվել են Նախագծերի փաթեթի առավել ընդգրկուն կարգավորման շրջանակ և Նախագծերի փաթեթի քննարկման նոր ժամկետներ: Նշված հանգամանքների հաշվառմամբ 2021 թվականին սույն միջոցառման կատարումը գնահատվում է մասնակի կատարված:	**Կատարված է մասնակի**

մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել ՀՀ ազգային ժողով:(2021թ)			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 19

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործման և նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքի կազմման

նպատակով միջազգային փորձի համապարփակ վերլուծության հիման վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից դեռևս 2020 թվականին մշակվել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստրի ստեղծման» առաջարկությունների փաթեթը (այսուհետ նաև՝ Առաջարկությունների փաթեթ): Արդարադատության նախարարության կողմից կազմված Առաջարկությունների փաթեթը ներկայացվել է շահագրգիռ պետական մարմիններին՝ կարծիքի, ինչպես նաև ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Այժմ իրականացվում են ստացված առաջարկությունների ամփոփման աշխատանքները:

Առաջարկությունների փաթեթը 2021 թվականին ներկայացվել է Եվրոպայի Խորհրդին՝ համապատասխան փորձագիտական կարծիք ստանալու համար: Եվրոպայի Խորհրդի կողմից ներկայացվել է փորձագիտական կարծիք Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործման վերաբերյալ:

Զուգահեռաբար, Արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվել են նվերների ինստիտուտին առնչվող գործող կարգավորումները և դրանց վերաբերյալ միջազգային կազմակերպությունների դիրքորոշումները, որից պարզ է դարձնել, որ ներկայումս հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտը կարգավորվում է 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» ՀՕ 206-Ն օրենքի 29-րդ հոդվածով: Սույն հոդվածի համաձայն, եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված և օրենքով նախատեսված նվերն իր արժեքով գերազանցում է 60 000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն և հաշվառվում է որպես այդպիսին: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Կառավարության սահմանած կարգով պարտավոր են այն հանձնել պետությանը կամ համայնքին: Միաժամանակ, Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 2021 թվականի սեպտեմբերի 22-ին ընդունված չորրորդ փուլի երկրորդ համապատասխանության երկրորդ միջանկյալ զեկույցով արձանագրվել է,

որ նվերներ ընդունելու արգելքին առնչվող կարգավորումները դեռևս բարելավման կարիք ունեն: Զեկույցով ընդգծվել է նաև նվերների հաշվառման և հանձնման կարգ ընդունելու անհրաժեշտությունը: Գործող օրենսդրությամբ սահմանված չէ նվերներ ընդունելու արգելքի պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարեվարքության համակարգի այլ տարրերի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն է, որը նաև ստուգում և վերլուծում է պաշտոնատար անձանց և վերջիններիս ընտանիքի անդամների հայտարարագրերը՝ առավել նպատակահարմար է նվերների կարգավորումների պահպանումը ևս վերապահել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ միաժամանակ վերջինիս համար նախատեսելով նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանելու իրավասություն: Սույն օրենսդրական կարգավորման շրջանակում անհրաժեշտ է դիտարկել նվերների ընդունման արգելքի, նվերներ հաշվառելու այնպիսի կարգավորումների սահմանում, որոնք կհամապատասխանեն Հայաստանի Հանրապետության՝ հակակոռուպցիոն ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին, կապահովեն նվերների հաշվառման միասնականությունը և նվերների հանձնման վերահսկելիությունը, կսահմանեն նվերների ռեեստրի գործարկման անհրաժեշտ ընթացակարգերը:

Վերոնշյալի հաշվառմամբ մշակման փուլում է գտնվում «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում օրենսդրական փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ):

2021 թվականի երկրորդ եռամսյակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվել է «Հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի վերաբերյալ» հայեցակարգի նախագիծը: Սույն հայեցակարգի մշակման հիմնական և կարևորագույն խնդիրը Հայաստանի Հանրապետությունում՝ հանրային ծառայության ոլորտում, հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի միասնական քաղաքականության մշակումն է, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ և անաչառ վերահսկողություն իրականացնել նշված ոլորտի նկատմամբ: Հաշվի առնելով այն փաստը, որ նվերների ընդունման արգելքը հանրային ծառայողների բարեվարքության բաղադրիչներից է, Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողովն իր առավելագույն ներգրավվածությունն է տեսնում այդ բաղադրիչի կատարելագործման, դրա վերաբերյալ նոր հայեցակարգի մշակման և գործարկման, ինչպես նաև նոր կարգավորումների նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու հարցում: «Հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի վերաբերյալ» հայեցակարգի նախագիծը գտնվում է քննարկման փուլում, հաստատված է գործողությունների ծրագիր, համաձայն որի հայեցակարգի հաստատումը և ներդնումը պետք է ավարտվի 2022 թվականի մայիս ամսին:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նաև հավելել, որ Նախագծերի փաթեթով նախատեսվող փոփոխությունների ինստիտուցիոնալ բնույթը հաշվի առնելով՝ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության ծրագիր) սահմանվել է Նախագծերի փաթեթի ընդունումը՝ նվերներ ընդունելու արգելքը առավել համապարփակ ձևով սահմանելու նպատակով՝ բացառելով հնարավոր տարընկալումները և դրանք շրջանցելու հնարավորությունները, ապահովելով նվերների գրանցման միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծումը, գրանցման թափանցիկությունը և էականորեն բարելավելով ոլորտի վերահսկելիությունը: Կառավարության ծրագրով սահմանվել են Նախագծերի փաթեթի մշակման, քննարկման և ընդունման նոր՝ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ժամկետներից տարբերվող ժամկետներ: Հիմք ընդունելով Կառավարության ծրագրի ժամկետները՝ նախատեսվում է Նախագծերի փաթեթը Վարչապետի աշխատակազմ ներկայացնել 2022 թվականի մայիս ամսվա ընթացքում:

Զուգահեռաբար նշվածի շրջանակներում համագործակցության աշխատանքներ են տարվում գործընկեր միջազգային դոնոր կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման Առաջարկությունների փաթեթի մշակման աշխատանքներն իրականացվել են շահագրգիռ մարմինների ներգրավմամբ: Նախագծերի փաթեթի մշակման աշխատանքներն ավարտելուց հետո կներկայացվեն շահագրգիռ մարմիններին՝

կարծիքի: Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը կապահովվի Նախագծերի փաթեթի հանրային քննարկումների շրջանակներում, իսկ միջազգային դոնոր կազմակերպությունների ներգրավվածությունը շարունակական բնույթ է կրում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Մշակվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների	2021 թվականի համար վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագիծը մշակման փուլում է, ինչպես նաև սահմանվել է «Հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի վերաբերյալ» հայեցակարգի նախագիծը, որոնց վերջնական հաստատմամբ կսահմանվի նվերների ռեեստրի ստեղծման իրավական հիմքը: Այսինքն, նվերների ռեեստրը չի մշակվել, որպիսի պայմաններում 2021 թվականին սույն միջոցառումը մասնակի է կատարված:	**Կատարված է մասնակի**

ինստիտուտի կատարելա գործմանն ուղղված իրավական ակտերի նախագիծ: Նվերների ռեեստրը մշակվել և գործարկվում է: (2021-2022թթ)			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Հիմնական խոչընդոտ հանդիսացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մարդկային ռեսուրսի ոչ բավարար համալրվածությունը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 20

Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում

<u>Պատասխանատու մարմին</u>

ՀՀ արդարադատության նախարարություն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

ՀՀ Ազգային ժողով (համաձայնությամբ)

Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

<u>Կատարման կարգավիճակը (2021 թվական)</u>

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Միջազգային փորձի ուսումնասիրության, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ դեռևս 2020 թվականին մշակվել և 2020 թվականի դեկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և հարակից օրենքները, որոնցով կուսակցությունների ընթացիկ և տարեկան ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից փոխանցվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ որպես մասնագիտացված անկախ մարմնի: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդլայնված լիազորությունները ներառում են նաև կուսակցությունների ֆինանսական միջոցների, դրանց աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների ստուգումը, կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների կողմից ներկայացվող հայտարարագրերի ստուգումը և վերլուծությունը: Նշված գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով սահմանվել է, որ կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն: Վերոնշյալ փոփոխություններով, ընդհանուր պետական ֆինանսավորումից զատ, նախատեսվել է նաև նպատակային պետական ֆինանսավորում, որի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողություն ևս վերապահվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Հանձնաժողովին վերապահվել է վարչական իրավախախտման վարույթ հարուցելու և վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություն՝ կուսակցությունների հաշվետվության ստուգման արդյունքում օրենքի խախտումներ բացահայտելու դեպքում: Հանձնաժողովին է

վերապահվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպումը: Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը իրականացվում է Հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից: Բացի այդ, սահմանված ժամկետում կուսակցության կողմից հաշվետվության համապատասխանությունը «Կուսակցությունների մասին» օրենքով սահմանված պահանջներին չհիմնավորվելու և հաշվետվության ստուգման արդյունքում «Կուսակցությունների մասին» օրենքի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրավասու է օրենքով նախատեսված դեպքերում ընդունելու կուսակցությանը տրամադրվող պետական ֆինանսավորումը հաջորդ տարում չտրամադրելու մասին որոշում (նպատակային ֆինանսավորումը ոչ պատշաճ օգտագործելու դեպքում) ընդունել կամ կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոց:

2021 թվականի հունիսի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքները, որոնցով, ի թիվս այլնի, 2021 թվականի սեպտեմբերի 1-ից իրական շահառուների բացահայտման պահանջ է սահմանվել տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց համար: Նշված օրենսդրական փոփոխության հիման վրա ստեղծվել է իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստր:

Զուգահեռաբար ուսումնասիրվել է Իռլանդիայի, Լեհաստանի, Լիտվայի, Ավստրիայի լոբբիստական գործունեության փորձը: Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել է «Լոբբիստական գործունեության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի նպատակն է ձևավորել լոբբինգ ինստիտուտը, որը կնպաստի

իշխանության և քաղաքացիների կապի ամրացմանը և հնարավորություն կընձեռնի ներկայացնել քաղաքացիների, կազմակերպությունների շահերը հատուկ մարմնի միջոցով: Վերոնշյալ նախագծերի փաթեթը ներկայումս քննարկման փուլում է:

Արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվել է նաև զանգվածային լրատվության միջոցների ֆինանսական թափանցիկությանը վերաբերող միջազգային փորձը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումները: Նշված ուսումնասիրության հիման վրա կազմվել, շահագրգիռ մարմինների ուսումնասիրությանը և ՀՀ վարչապետի աշխատակազմին ներկայացվել է առաջարկությունների փաթեթը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է Ազգային ժողովի ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբի կողմից: Աշխատանքային խմբի նախաձեռնած քննարկումներին մասնակցել և նախագծի պատրաստման գործընթացում մասնագիտական աջակցություն են տրամադրել և դիրքորոշումներ են ներկայացրել մի շարք պետական հաստատություններ (Արդարադատության նախարարություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով), հասարակական կազմակերպություններ («Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, Իրազեկ քաղաքացիների միավորում, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ), միջազգային կազմակերպություններ (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Եվրոպայի խորհրդի՝ Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի 55 Հանձնաժողով), Ընտրական համակարգերի միջազգային հաստատության Հայաստանյան մասնաճյուղ (IFES), Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ): Նշված նախագծերի նախապատրաստման ներառականությունը ապահովելու նպատակով աշխատանքային խմբի կողմից կազմակերպվել են շուրջ մեկ տասնյակ հանրային քննարկումներ և աշխատաժողովներ, այդ թվում նաև՝ նախագծի

հայեցակարգի քննարկման նպատակով Ազգային Ժողովում նախագահի կողմից հրավիրված խորհրդարանական լսումները, ինչպես նաև քննարկումներ Հայաստանի Շիրակ, Լոռի, Արարատ և Վայոց Ձոր մարզերում:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման e-draft.am էլեկտրոնային հարթակում 2020 թվականի հոկտեմբերի 24-ից նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում (https://www.edraft.am/projects/2818?fbclid=IwAR0wloqO6L0ZS3MHeMimEQ9C6E3HDENjp8zcCN33Usxqf1C8HGJZOJGMcu4):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
ՀՀ-ում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարու	2021 թվականի համար վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ազգային ժողովի կողմից ընդունվել են կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության ուղղված օրենսդրական ակտերը, տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց (որոնց շրջանակում ներառված են նաև զանգվածային լրատվության միջոցները) համար իրական շահառուների բացահայտման պահանջ, իսկ այդ տվյալները հասանելի են բաց և հանրամատչելի ռեեստրում: Զուգահեռաբար մշակվել են լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորումները,	**Կատարված է մեծամասամբ**

թյան վերա բերյալ, ինչպես նաև կուսակցու թյունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսա վորման թափանցիկութ յանն ուղղված վերլուծության և դրա արդյունքների հիման վրա կատարված առաջարկու թյունների հիման վրա		զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկությանն ուղղված առաջարկությունները։ Այսպիսով, սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների և սույն միջոցառման ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ 2021 թվականի աշխատանքները մեծամասամբ կատարվել են։	

մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել իրավական ակտերի նախագծերի փաթեթ (2020-2021թթ.):			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 21

Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում

Պատասխանատու մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարություն

«Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☑ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցման նպատակով ներկայումս իրականացվում են օրենսդրական կարգավորումների ուսումնասիրության և դրանցում առկա խնդիրների վերհանման աշխատանքներ: Նշված միջոցառման իրականացման շրջանակներում Կառավարությունը համագործակցում է նաև մասնավոր ոլորտի հետ, մասնավորապես, Էկոնոմիկայի նախարարությունը իրականացնում է համատեղ ծրագիր «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի հետ:

Զուգահեռաբար, Արդարադատության նախարարության կողմից 2021 թվականին ուսումնասիրվել է հանրային նշանակության կազմակերպությունների կարգավիճակի և դրանց շրջանակի վերաբերյալ միջազգային փորձը, որից պարզ է դարձել, որ հանրային նշանակության կազմակերպությունների շրջանակում ընդգրկված են ֆինանսական և ապահովագրական ոլորտի կազմակերպությունները, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունները, հանրության զգալի հատվածում ֆինանսական բնույթի ծառայություններ մատուցող, ակտիվների կառավարման, հանրային որոլտում ներդրումային ծրագրեր իրականացնող ընկերությունները, առողջապահության և կրթության ոլորտի կազմակերպությունները, ցանկացած այլ իրավաբանական անձ, որն ուղղակիորեն պատասխանատու է կառավարության քաղաքականության մի մասի իրականացման համար: Նշված կազմակերպությունները մասնավոր ոլորտի կամ պետական մասնակցությամբ կազմակերպություններ են, իսկ վերջիններիս գործունեություն վերահսկվում է պետության կողմից:

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի գործունեության առնչությամբ հարկ է նշել, որ վերջինս Հայաստանի գործարար համայնքի ներկայացուցիչների համար կազմակերպում և անցկացնում է հակակոռուպցիոն համապատասխանության վերապատրաստումներ, որոնք զուգակցվում են գործնական օրինակների քննարկումներով, ինչպես նաև գործարար խաղարկումներով: Ընդհանուր առմամբ, վերապատրաստումներն անցել են շուրջ 150 մասնակից, այդ թվում՝

հեռահաղորդակցության և ֆինանսական ոլորտի հանրային նշանակության կազմակերպություններ, որոնց ներկայացվել են հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի ներդրման առավելությունները:

Բացի այդ, հանրային նշանակության կազմակերպություններում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանման նպատակով՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում» միջոցառման շրջանակում իրականացվել է պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների գույքագրում: Խորհրդատվական կազմակերպության կողմից ուսումնասիրվում են ծառայությունների մատուցման բիզնես գործընթացները «այնպես ինչպես կա» և ներկայացվում են առաջարկություններ «ինչպես պետք է լինի»: Նախատեսվում է, որ «ինչպես պետք է լինի» առաջարկները կշրջանառվեն լիազոր մարմինների միջև՝ դիտարկումներ ներկայացնելու նպատակով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Վերոնշյալ միջոցառման շրջանակներում տարվող աշխատանքներն իրականացվում են մասնավոր ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ: Կորպորատիվ կառավարման կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառումների ընթացքում մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, այդ թվում և հանրային նշանակության կազմակերպություններին ներկայացվել են հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի ներդրման առավելությունները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Հանրային նշանակու	2021 թվականի համար	Սույն միջոցառման իրականացման շրջանակներում ուսումնասիրվել է հանրային նշանակության կազմակերպությունների իրավական	**Կատարված չէ**

թյան կազմակերպությունների կարգավիճակը հստակեցվել է և ներդրվել է կոռուպցիոն ռիսկերի նվազեցման արդյունավետ գործիքակազմ (2021-2022թթ.)	վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ	կարգավիճակը, հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ միջազգային փորձը, արդյունքները Կորպորատիվ կառավարման կենտրոնի հետ համագործակցելով վերջինիս կողմից քննարկվել է հանրային նշանակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նշված տեղեկությունների և 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքները կատարված չեն, քանի որ դեռևս չի հստակեցվել հանրային նշանակության կազմակերպությունների կարգավիճակը:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 22

Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում

Պատասխանատու մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ արդարադատության նախարարություն

«Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Կառավարության հաստատմանն է ներկայացվել Միացյալ Թագավորության Լավ կառավարման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Կորպորատիվ կառավարման և ֆինանսական հաշվետվողականության բարելավված կանոնակարգ» ծրագրի շրջանակում «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» (PwC) ընկերության ու Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի

աջակցությամբ մշակված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որով նոր խմբագրությամբ շարադրվել է կորպորատիվ կառավարման կանոնագիրքը: Նախագծով, ի թիվս այլ սկզբունքների, ամրագրվել են մասնավոր հատվածում էթիկական և հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող սկզբունքները, որոնց իրագործման պարտականությունը դրվել է տնօրենների խորհրդի (խորհրդի) վրա: Բացի այդ, Նախագծում նախատեսվել է, որ ընկերություններում պետք է ձևավորվի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ, որի կարևոր բաղադրիչներից է հակակոռուպցիոն համապատասխանության գործառույթը: Նախագծով այս գործառույթն իրականացնող անձի վրա դրված է նաև հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրմանը նպաստելու և դրա նկատմամբ մշտադիտարկումն իրականացնելու պարտականությունները:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ Կորպորատիվ կառավարման կանոնագրքի մշակման, այդ թվում՝ հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերին առնչվող դրույթների մասով Էկոնոմիկայի նախարարությունը համագործակցում է Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի հետ:

Միջազգային Մասնավոր Ձեռնարկատիրության Կենտրոնի (CIPE, www.cipe.org) «Հայաստան. հզորացնել մասնավոր հատվածին ժողովրդավարական անցմանն աջակցելու համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել են «Գործարար բարեվարքություն. կորպորատիվ մշակույթ և հակակոռուպցիոն համապատասխանություն» թեմայով վերապատրաստումներ:

Վերապատրաստումները նպատակ են հետապնդել՝

- Նպաստել կորպորատիվ էթիկայի, հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ Հայաստանի մասնավոր հատվածի իրազեկվածության բարձրացմանը,

- Պարզաբանել բարեվարքության և հակակոռուպցիոն համապատասխանության հնարավոր օգուտները՝ բիզնեսի և հասարակության համար,
- Ներկայացնել էթիկայի և հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի հիմնական բաղկացուցիչները և մշակման ընթացակարգը,
- Պարզաբանել բարեվարքության հավաքական գործողությունների էությունը, հնարավոր օգուտները և բարեվարքության դաշինքի ձևավորման հնարավորությունները Հայաստանում:

Վերապատրաստումների ընթացքում ներկայացվել են նաև կորպորատիվ կառավարման ժամանակակից միտումները, դրանց հնարավոր զարգացումները Հայաստանում, հակակոռուպցիոն իրավակարգավորումների միջազգային և տեղական փորձը, քննարկվել են իրավիճակային օրինակներ:

Նշված ծրագրի շրջանակներում Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից ձևավորվել և առաջնորդվում է Բիզնեսի բարեվարքության ակումբը, որը Հայաստանի գործարար համայնքի առաջին հավաքական հակակոռուպցիոն նախաձեռնությունն է: Ակումբի գործունեությունը մեկնարկվել է 2021 թվականի փետրվարի 5-ից:

Բիզնեսի բարեվարքության ակումբի առաքելությունն է բարեվարքության մշակույթի միջոցով բարելավել Հայաստանի գործարար միջավայրը: Բիզնեսի բարեվարքության ակումբը խթանում է հայ գործարարների հավաքական գործողությունները կորպորատիվ կառավարմանն առնչվող խնդիրների շուրջ: Բիզնեսի բարեվարքության ակումբի նպատակն է բարձրացնել Հայաստանի գործարար միջավայրի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, վստահությունը երկրի տնտեսական համակարգի նկատմամբ և աջակցել տնտեսություն երկարաժամկետ, համբերատար ու կառուցողական ներդրումների ներգրավմանը, նպաստել գործարար հատվածի կենսունակությանը և խթանել ներառական տնտեսական աճը:

Բիզնեսի բարեվարքության ակումբի կարգախոսն է՝ «Բարեվարքություն, վստահություն, ներդրումներ»:

Ակումբի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. Ակումբի անդամների կարողությունների զարգացումը և նրանց համապատասխանության խթանումը,
2. Հայաստանի գործարար միջավայրը բարելավելու նպատակով պետական մարմինների հետ երկխոսության ապահովումը,
3. Գործարար բարեվարքության և համապատասխանության մշակույթի տարածումն ու միջազգային կապերի ամրապնդումը:

Բիզնեսի բարեվարքության ակումբը ներառվել է Բազելի կառավարման ինստիտուտի հավաքական գործողությունների շտեմարանում (https://baselgovernance.org/b20-collective-action-hub/initiatives-database/business-integrity-club-armenia): Սա Ակումբի միջազգային ճանաչման սկիզբն է և կարևոր իրադարձություն ոչ միայն Բիզնեսի բարեվարքության ակումբի, այլև Հայաստանի համար, որտեղ առաջին անգամ բիզնես համայնքի ներկայացուցիչները հանձնառություն են ստանձնել սեփական կառավարման համակարգը բարելավելու միջոցով բարեվարքության մշակույթը տարածել գործարար միջավայրում ևս:

Բիզնեսի բարեվարքության ակումբի մասին ավելի մանրամասն տեղեկատվությունը հասանելի է https://corpgov.am/en/projects/2021/08/09/business-integrity-club:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Բիզնեսի բարեվարքության ակումբի շրջանակներում Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի առաջնորդմամբ կազմակերպվել են մի շարք միջազգային համաժողովներ, քննարկումներ, կլոր սեղաններ, իրականացվել հետազոտություններ՝ ինչպես փորձագիտական, այնպես էլ գործարար համայնքի շրջանում, մշակվել իրազեկման նյութեր:

2021 թվականի մայիսի 21-ին կազմակերպված «Կորպորատիվ կառավարման ժամանակակից միտումները. միջազգային փորձ և հայաստանյան իրականություն» առաջին միջազգային համաժողովին ողջույնի խոսքով հանդես է եկել Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը: Նա նշել է, որ կորպորատիվ կառավարման խնդիրները չեն կորցնում իրենց արդիականությունը, և կարևորել լավ կորպորատիվ կառավարման անհրաժեշտությունը երկրի տնտեսության կայուն զարգացման, մրցունակության, ներդրումային գրավչության բարձրացման գործում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերում (2021-2022թթ.):	2021 թվականի համար վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում Կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով ի թիվս այլ սկզբունքների՝ ամրագրվել են մասնավոր հատվածում էթիկական և հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող սկզբունքները, որոնց իրագործման պարտականությունը դրվել է տնօրենների խորհրդի (խորհրդի) վրա: Զուգահեռաբար, գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության խթանման նպատակով մասնավոր ոլորտի կազմակերպությունների համար իրականացվել են «Գործարար բարեվարքություն. կորպորատիվ մշակույթ և հակակոռուպցիոն համապատասխանություն» թեմայով վերապատրաստումներ: Բացի այդ, ձևավորվել և գործում է Բիզնեսի բարեվարքության ակումբը, որին մասնակցում է 17 ընկերություններ: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ	**Կատարված է ամբողջությամբ**

		սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են, քանի որ սույն միջոցառման դեպքում իրավական ակտով մասնավոր ոլորտում համապատասխանության պահանջի սահմանումը նախատեսված է որպես 2021-2022 թվականների ակնկալվող արդյունք, իսկ սույն դեպքում համապատասխան նախագիծն արդեն իսկ ներկայացվել է Կառավարության հաստատմանը:	

3. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 23

Գնումների ոլորտի բարելավում

Պատասխանատու մարմին

ՀՀ ֆինանսների նախարարություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի փետրվարի 16-ին կայացած Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է դեռևս 2020 թվականի մշակված և Կառավարության քննարկմանը ներկայացված «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ): 2021 թվականի նոյեմբերի 17-ին Նախագծերի փաթեթը Ազգային ժողովի կողմից

ընդունվել է 1-ին ընթերցմամբ:Նախագծերի փաթեթի ընդունման նպատակն է կանոնակարգել արձանագրված ներքոհիշյալ երկու խումբ խնդիրները՝

- Գնումների բողոքարկման համակարգի վերափոխում՝ հաշվի առնելով նաև ԱՀԿ պետական գնումների համաձայնագրով և ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների պահանջները: Մասնավորապես, գործող կարգավորման համաձայն՝ գնման ընթացակարգի արդյունքները կարող են բողոքարկվել ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով: Բողոք ներկայացնելու հնարավորություն ունի ցանկացած անձ: Կատարված ախտորոշումները ցույց են տալիս, որ արտադատական բողոքարկման համակարգն արդյունավետ չէ այն տեսակետից, որ կայացվող որոշումները գնումների մասին ՀՀ օրենսդրության տեսանկյունից խնդրահարույց են, կայացվում են միմյանց հակասող որոշումներ, որոնց հետևանքով կամ այդ որոշումները բողոքարկվում են դատարաններում կամ գնման ընթացակարգերը հայտարարվում են չկայացած, ինչը դրանք կազմակերպելու և անցկացնելու տեսակետից հանգեցնում են ծրագրերի ձախողման, դժգոհությունների և ֆինանսական կորուստների: Ըստ վիճակագրության՝ տարեցտարի մեծանում են արտադատական կարգով քննված բողոքների վերաբերյալ կայացված որոշումները մասնակիցների կողմից դատական կարգով բողոքարկելու դեպքերը և դա այն պարագայում, երբ գործող կարգավորումները չեն նախատեսում դատարանների կողմից դրանց հատուկ վարույթով քննելու ընթացակարգեր: Միաժամանակ խնդրահարույց է նաև բողոք ներկայացնելու հնարավորություն ունեցող անձանց լայն շրջանակը: Ցանկացած անձ, որը բովանդակային առումով չունի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում շահագրգռվածություն, ունի գնման ընթացակարգը բողոքարկելու և դրանով պայմանավորված գործընթացները ձգձգելու հնարավորություն, այդ թվում նաև դիտավորյալ: Գործող արտադատական բողոքարկման համակարգը ինչպես ինստիտուցիոնալ (անկախության), այնպես էլ կիրառելիության տեսակետից գնահատվել է նաև ԵՄ ՍԻԳՄԱ ծրագրի փորձագետների կողմից և համարվել խնդրահարույց: Նախագծերում ներկայացված կարգավորումների շրջանակում ձևավորվելիք բողոքարկման համակարգի մոդելը քննարկվել է վերջիններիս հետ և համարվել ընդունելի լուծում:

- Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու պարագայում ռեսուրսների համախմբման և գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորության ստեղծում, ինչը դրական ազդեցություն կունենա նաև պետական համակարգում նախաձեռնված բարեփոխումների գործընթացի վրա: Մասնավորապես, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած միջոցների հաշվին գնումների կատարման ժամանակ կիրառվում են ազգային ռեժիմից տարբերվող ընթացակարգեր, որպիսի պայմաններում խնդրահարույց է գնումների ընթացակարգերի կազմակերպման համար միասնական կանոններ չունենալու հանգամանքը, որը հանգեցնում է նաև դրանց կազմակերպման և կառավարման համար տարբեր մասնագիտական կարողություններ և աշխատանքային ունակություններ ունեցող մասնագետների անհրաժեշտության: Միասնական կանոնների բացակայությունը որոշակի բարդություններ է առաջացնում նաև գնման գործընթացների հնարավոր մասնակիցների համար: Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի հաշվին գնումները ազգային ռեժիմով իրականացնելու պարագայում կստեղծվեն ռեսուրսների համախմբման և գործընթացները միասնական կանոններով կառավարելու հնարավորություն, ինչը դրական ազդեցություն կունենա նաև պետական համակարգում նախաձեռնված բարեփոխումների գործընթացի վրա: Միաժամանակ Հայաստանի՝ ԱՀԿ պետական գնումների համաձայնագրին անդամակցությունը հնարավորություն է ընձեռում նշված գնումները ազգային ռեժիմով իրականացնելու նախադրյալներ ստեղծել: Այս կապակցությամբ Կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային Բանկի կողմից իրականացվել է գնումների ազգային օրենսդրության և ընթացակարգերի ուսումնասիրություն, որի արդյունքում ներկայացվել են նոր սկսվող ներդրումային ծրագրերի իրականացման համար գնումների այլընտրանքային պայմանավորվածությունների իրականացման այն պայմանները, որոնք գնումների հետ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում նախատեսվելու դեպքում հնարավոր կլինի կիրառել ազգային ընթացակարգերի նկատմամբ: Նախագծերի փաթեթով ներառված են այն պայմանները, որոնք կարող են սահմանվել օրենքով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերի փաթեթը քննարկվել է շահագրգիռ պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միավորների ներկայացուցիչների հետ:

Նախագծերը դրվել են նաև հանրային քննարկման www.e-draft.am հարթակում (https://www.e-draft.am/projects/2300/about):

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել է նախագծերի փաթեթ՝ ուղղված գնման գործընթացների պարզեցմանը, գնման	Վերստուգիչ ցուցանիշ սահմանված չէ:	Սույն միջոցառման իրականացման շրջանակներում գնումների ոլորտի օրենսդրության բարելավման և հստակեցմանն ուղղված Նախագծերի փաթեթը 2021 թվականի նոյեմբերի 17-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1-ին ընթերցմամբ: Հաշվի առնելով այն, որ սույն միջոցառման համար 2021 թվականի վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ, ակնկալվող արդյունքը՝ Նախագծերի փաթեթի ընդունումը, նախատեսված է 2021-2022 թվականների համար, ինչպես նաև, հաշվի առնելով Նախագծերի փաթեթի ընդունումը Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ՝ սույն միջոցառումը 2021 թվականին գնահատվում է ամբողջությամբ կատարված:	**Կատարված է ամբողջությամբ**

գործընթացի որոշակիություն ապահովմանը (2021-2022թթ.)			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 24

Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Մասնավոր ոլորտում թափանցիկության բարձրացման նպատակով, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտման գործուն մեխանիզմներ ներդնելու համար դեռևս 2020 թվականին մշակվել և 2021 թվականի հունվարի 18-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի «Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի

ներդրման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N 30-Ա որոշումը, որով նախանշվել են իրական սեփականատերերի (շահառուների) բացահայտման առաջնային ոլորտները և համապատասխան ժամկետները:

Ճանապարհային քարտեզին համապատասխան 2021 թվականի հունիսի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստրի ստեղծմանը, ինչպես նաև Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց համար փուլ առ փուլ իրական շահառուների բացահայտման պարտադիր պահանջի սահմանմանն ուղղված օրենսդրական փաթեթը: Մետաղական հանքարդյունաբերության և էներգետիկայի ոլորտների կազմակերպություններն արդեն իսկ 2020 թվականից ներկայացնում են իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր, իսկ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող և տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց համար հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը ուժի մեջ է մտել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից: Մյուս իրավաբանական անձանց համար իրական շահառուներին բացահայտելու պարտականությունը ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների, որոնց համար իրական շահառուներին բացահայտելու պարտականությունը ծագում է 2023 թվականի հունվարի 1-ից:

Հայտարարագրման պահանջը տարածվում է ինչպես արդեն իսկ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված, այնպես էլ նոր հիմնադրվող և գրանցվող իրավաբանական անձանց վրա: Հայտարարագրման պահանջը չկատարելու, ոչ պատշաճ կատարելու համար սահմանված են քրեական և վարչական պատասխանատվության միջոցներ:

Հիմք ընդունելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ՀՀ արդարադատության նախարարի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի հրամանով սահմանվել են իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների

վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը:

Զուգահեռաբար դեռևս 2021 թվականի փետրվարից գործարկվել է պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց իրական շահառուների (սեփականատերերի) վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր և հանրամատչելի էլեկտրոնային հարթակը: 2021 թվականից **իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը ներկայացվում են վերոնշյալ համակարգով:**

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման e-draft.am էլեկտրոնային հարթակում 2020 թվականի հոկտեմբերի 24-ից նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում (https://www.edraft.am/projects/2818?fbclid=IwAR0wloqO6L0ZS3MHeMimEQ9C6E3HDENjp8zcCN33Usxqf1C8HGJZOJGMcu4):

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը Արդարադատության նախարարության կողմից 2020 թվականի հոկտեմբերի 26-ին ներկայացվել էր շահագրգիռ պետական մարմիններին՝ վերջիններիս դիրքորոշման ստացման նպատակով:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Ճանապարհային քարտեզին համապատասխան՝ տարբեր ոլորտներում շարունակաբար ներդրվում է իրական սեփականատերերի բացահայտման պահանջ (2021-2022թթ.)	Քննարկվել և ընդունվել է իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը (2021թ.-ի 2-րդ եռամսյակ):	Սույն միջոցառման կատարման շրջանակներում 2021 թվականի հունվարի 18-ին հաստատվել է իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը, իսկ 2021 թվականի հունիսի 3-ին ընդունվել են իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստրի ստեղծմանը, ինչպես նաև Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց համար փուլ առ փուլ իրական շահառուների բացահայտման պարտադիր պահանջի սահմանմանն ուղղված օրենսդրական ակտերը։ Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են։ Հատկանշական է նաև, որ սույն միջոցառման շրջանակներում նաև առաջընթաց է գրանցվել, քանի որ Հակակոռուպցիոն ռազմավարության համաձայն՝ առնվազն 3 ոլորտային օրենքի նախագիծ 2022 թվականի 1-ին եռամսյակին պետք է ներկայացվեր Ազգային ժողով, իսկ 2022 թվականի 4-րդ եռամսյակում առնվազն 3 ոլորտներում պետք է ներդրված լիներ իրական	**Կատարված է ամբողջությամբ**

		սեփականատերերի բացահայտման պահանջ, մինչդեռ նշված աշխատանքներն արդեն իսկ կատարվել են դեռևս 2021 թվականին:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 25

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում

Պատասխանատու մարմին

Արդարադատության նախարարություն

Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 3-ին ընդունվել և նույն թվականի մայիսի 31-ին ուժի մեջ են մտել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները (այսուհետ՝ Օրենքներ):

Օրենքներով, ի թիվս այլնի.

- տարբերակվել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից իրականացվող վարույթները՝ սահմանելով դրանց բնորոշ առանձնահատկությունները,
- տարբերակվել են իրավախախտման վարույթի մասնակիցները, նրանց իրավունքների ու պարտականությունների ծավալը, վարույթի հարուցման առիթները,
- նախատեսվել է իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու առիթները նախնական ստուգման ենթարկելու ընթացակարգ և վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պայմաններում հարուցումը մերժելու հնարավորություն,
- կարգավորվել են վարչական վարույթների միացման ու առանձնացման ընթացակարգերը,
- նախատեսվել են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության և Հանձնաժողովին օպերատիվ տվյալներ տրամադրելու մեխանիզմներ,
- տարբերակվել են իրավախախտման վարույթներով ընդունվող որոշումների տեսակները և դրանց առանձնահատկությունները,
- նախատեսվել է Հանձնաժողովի թղթակցությունը վարույթի մասնակիցներին էլեկտրոնային եղանակով հանձնելու ընթացակարգ,
- նախատեսվել է Հանձնաժողովի նիստերին տեսաձայնային կապի միջոցով մասնակցելու հնարավորություն,
- նախատեսվել է Հանձնաժողովի որոշումներով իրավախախտման վարույթի պատասխանողի գույքի վրա կիրառված տուգանքի չափով արգելանք դնելու հնարավորությունը,
- սահմանվել է բանակցային ուժեղ դիրքի չարաշահման արգելք,
- նախատեսվել է հակամրցակցային այլ համաձայնությունների արգելք,
- նախատեսվել են համակենտրոնացման նոր ձևեր,

- նախատեսվել է տուգանքների կիրառման առավել արդյունավետ մեխանիզմ,
- սահմանվել է Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների ընտրության հստակ չափանիշներ սահմանելու հնարավորություն,
- նախատեսվել է շարունակական մշտադիտարկումներ իրականացնելու հնարավորություն,
- նախատեսվել է համակենտրոնացումների գնահատման պարզեցված կարգ,
- նախատեսվել է անձանց խմբի ներսում իրականացվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների վերահսկման մեխանիզմ,
- սահմանվել են Հանձնաժողովի կողմից ընդունվելիք ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նորմատիվ հիմքերը,
- ստուգումներ իրականացնող անձանց լիազորություններում նախատեսվել է տնտեսվարող սուբյեկտի տրամադրության տակ գտնվող ցանկացած շենք կամ փաստաթղթեր կապարակնքելու, տնտեսվարող սուբյեկտի մոտ առկա տեխնիկական միջոցներից օգտվելու հնարավորություն,
- ֆիզիկական անձանց կողմից կատարվող մի շարք իրավախախտումների համար նախատեսվել է վարչական պատասխանատվություն,
- նախատեսվել է Հանձնաժողովի հանձնարարական պարունակող որոշումների հարկադիր կատարման հնարավորություն:

Ոլորտի իրավական բարեփոխումների շրջանակում իրականացվել է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը:

Այսպես, Հանձնաժողովի կողմից ընդունվել են ***18 ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր***, այդ թվում՝ Հանձնաժողովի աշխատակարգը, չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի որոշման կարգը, պետական օժանդակության գնահատման կարգը, պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման

մեթոդաբանությունը, գաղտնագրման ենթակա հաղորդումը ներկայացնելու և այն գաղտնագրելու կարգը, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը և Հանձնաժողովի գործունեությունն ապահովող մի շարք այլ ակտեր:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Մինչև Օրենքների նախագծերի կազմումը, քննարկումներ են տեղի ունեցել գիտական հանրույթի և հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններս ակտիվ մասնակցություն են ունեցել նաև Նախագծերի շուրջ իրականացված հանրային քննարկումներին:

Օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում (https://www.e-draft.am/projects/2502), որի արդյունքում ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագծերի փաթեթը լրամշակվել է:

Օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է նաև պետական բոլոր մարմիններին, Փաստաբանական պալատին, գիտական հանրույթին և հասարակական կազմակերպություններին՝ դիրքորոշման ստացման նպատակով:

Օրենքների նախագծերի լրամշակված փաթեթը ներկայացվել է նաև Եվրասիական տնտեսական միությանը: Տեղի է ունեցել նաև տեսահամաժողովի ձևաչափով քննարկում Հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում մանրամասն քննարկվել են Նախագծերով ամրագրված կարգավորումները՝ Եվրասիական տնտեսական միության նորմատիվ իրավական կարգավորումների լույսի ներքո:

Օրենքների նախագծերի փաթեթը քննարկվել է նաև միջազգային շահագրգիռ կազմակերերպությունների հետ:

Օրենքների նախագծերի փաթեթը մեծ հետաքրքրություն է առաջացրել շահագրգիռ անձանց, կազմակերպությունների և պետական մարմինների շրջանում: Դրա մասին է վկայում փաթեթի վերաբերյալ ստացված առաջարկություններն ու դիտարկումներն ամփոփող շուրջ 500 էջանոց ամփոփաթերթը:

Քննարկումներ են տեղի ունեցել նաև Ազգային ժողովում Նախագծերի 1-ին և 2-րդ ընթերցումների ժամանակահատվածում: Ներկայացված առաջարկությունների հիման վրա Օրենքների նախագծերի փաթեթը լրամշակվել է:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակվել են իրավական ակտերի նախագծեր, ներկայացվել ՀՀ վարչապետի	Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում և տրվել են համապատաս	Սույն միջոցառման դեպքում ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը Հանձնաժողովի կողմից մշակվել, շրջանառվել, ապա Կառավարության կողմից հավանություն են ստացել և անհետաձգելի կարգով ներկայացվել Ազգային ժողով: Ավելին, 2021 թվականի մարտի 3-ին ընդունվել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-92-Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի մայիսի 31-ին, բոլոր ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են: Հետևաբար, սույն միջոցառման դեպքում 2021 թվականին ակնկալվող և	**Կատարված է ամբողջությամբ**

աշխատա կազմ:	խան փոփոխությունների հանձնարարականներ (2021թ.-ի 3-րդ եռամսյակ)	վերստուգիչ ցուցիչով նախատեսված գործողություններն ամբողջությամբ կատարված են:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 26

Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ ՓԲԸ (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի ընթացքում ուսումնասիրվել են թեժ գծի հեռախոսակապ ունեցող գերատեսչություններում ներդրված համակարգերը: Դիտարկվել են արդեն գործող թեժ գծի համակարգերը Վարչապետի աշխատակազմի թեժ գծին, ինչպես նաև

պետական մարմինների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբրի համակարգին ինտեգրելու հնարավորությունները: Միաժամանակ, թեժ գիծը չպետք է ընկալել որպես հեռախոսային համակարգ: Գործում է էլեկտրոնային հարցումների միասնական e-request.am հարթակը, որով քաղաքացիները 2021թ.-ի ընթացքում ուղարկել են 8.000-ից ավելի բողոք և 14.000-ից ավելի հարցում:

2021թ.-ի առաջին կիսամյակում Հարթակի միջոցով հասանելի մարմինների քանակը կրկնապատկվել է՝ հասնելով 140-ի:

Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակը համաձայն մշակված տեխնիկական բնութագրի ծրագրավորվել է և անցնելով թեստավորման համապատասխան փուլեր հաջողությամբ ներդրվել վեբ միջավայրում՝ հասանելիությունը e-hotline.am հասցեով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Սույն միջոցառումը հանրային քննարկում չի նախատեսում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Վիճակագրական ճկուն գործիքների ներդրման արդյունքում ապահովված է	2021 թվականի համար վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Նշված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ռազմավարական նպատակը՝ քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակը ներդրվել է, զուգահեռաբար ապահովվել է գործադիր իշխանության մարմինների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Հաշվի առնելով, որ սույն միջոցառման ակնկալվող արդյունքը 2021-2022	**Կատարված է մեծամասամբ**

գործադիր իշխանության մարմինների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը (2021-2022թթ.)		թվականների համար է նախատեսված, սույն միջոցառումը 2021 թվականին մեծամասամբ է կատարվել, քանի որ վիճակագրական ճկուն գործիքների ներդրման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

COVID-19 Կորոնավիրուսի համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված աշխատանքների որոշ ձգձգող հանգամանքներ առկա եղել են, սակայն դրանք նշանակալի ազդեցություն չեն ունեցել ներդրման ընթացիկ աշխատանքների վրա:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 27

Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում

<u>Պատասխանատու մարմին</u>

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

<u>Կատարման կարգավիճակը (2021 թվական)</u>

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☑ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի մայիսի 26-ին Արդարադատության նախարարության և ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի գործարար միջավայրի բարելավում ծրագրի կողմից կազմակերպվել է «e-draft.am առցանց հարթակի առավելություններն ու խնդիրները» թեմայով

աշխատանքային կլոր-սեղան քննարկում, որի ընթացքում պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած երկխոսության արդյունքում ձևակերպված և ներկայացված առաջարկությունների հիման վրա www.e-draft.am հարթակի արդիականացման տեխնիկական առաջադրանքը լրամշակվել է: www.e-draft.am հարթակի արդիականացման տեխնիկական առաջադրանքի լրամշակված տարբերակը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ՝ Թվայնացման խորհրդի նիստում քննարկելու և ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով: www.e-draft.am հարթակի արդիականացման տեխնիկական առաջադրանքով նախատեսվում է ապահովել հասարակության լայն շրջանակի համար պետության իրավաստեղծ գործընթացին մասնակցության հնարավորությունը:

Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն՝ դեռևս 2020 թվականի ապրիլի 2-ին Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի է ներկայացվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի արդիականացման առնչությամբ՝ առաջարկելով հետևյալը.

- «www.e-draft.am» կայքի մասին հանրային իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել դրան ուղղված անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում՝ ուղեցույցների միջոցով պարզ և հասկանալի ձևով քաղաքացիներին ներկայացնել կայքից օգտվելու կանոնները:

- Անհրաժեշտ է նախատեսել այնպիսի գործողություններ, որոնց միջոցով իրավական ակտերի նախագծերը հնարավոր բոլոր միջոցներով հասանելի լինեն թիրախային լսարանի համար (առցանց քննարկումները լրացնել այնպիսի նպատակային ձևաչափերով, ինչպիսիք են՝ սեմինարները, կայքը մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց համար (ընդ որում՝ ոչ միայն տեսողական, այլ լսողական խնդիրներ ունեցողների համար ևս), ուղղակիորեն ծանուցել նպատակային լսարանին պատկանող կազմակերպություններին և անհատներին, հարթակի արդիականացումն ապահովել այլ կայքերի համապատասխան կայքէջերին հղումներ կատարելու ձևով, նախագծերը հասանելի դարձնել ոչ միայն կայքում բաժանորդագրված օգտատերերի, այլ նախագծերի հասցեատերերի համար և այլն):

- Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակել քաղաքացիների ներկայացրած առաջարկների մերժման հիմքերը:

- Երբ քննարկվող նախագիծն ուղղակիորեն վերաբերում է օտարերկրացիներին կամ ազգային փոքրամասնություններին, ապա նրանց կարիքների հաշվառմամբ՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հանրային քննարկումներին այդ սուբյեկտների լիարժեք մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

- Նախագծերի ընդունումից հետո անհրաժեշտ է հանրությանը ներկայացնել հաշվետվություն՝ նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների որոշիչ նշանակության և քաղաքականության մշակման վրա դրանց անմիջական ազդեցության մասին:

- Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակը պետք է տեխնիկական լուծումներ պարունակի ինչպես նախագծի հանրային քննարկումն առերես քննարկումների ձևով անցկացնելու, այնպես էլ քննարկման վերաբերյալ տեղեկություններ հրապարակելու առումով:

Իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակի՝ «www.e-draft.am» վիճակագրության առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

- Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (www.e-draft.am) 2020 թվականի ընթացքում գրանցված օգտատերերի քանակը 6,653 է, իսկ 2021 թվականի ընթացքում՝ 19444: Այսինքն՝ ըստ գրանցված օգտատերերի քանակի՝ 2021թ.-ին 2020թ.- ի համեմատությամբ արձանագրվել է 192% աճ:

- Ըստ տեղադրված նախագծերի քանակի՝ 2020 թվականին արձանագրվել է 725 տեղադրված նախագիծ, իսկ 2021 թվականին 845 տեղադրված նախագիծ: Այսինքն 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 16,55 տոկոս աճ:

- Ըստ ներկայացված առաջարկությունների քանակի՝ 2020 թվականի ընթացքում արձանագրվել է 2171 առաջարկություն, իսկ 2021 թվականին՝ 1055: Այսինքն՝ 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 51,4 % անկում:

• Ըստ կայք կատարած այցելուների քանակի՝ 2020 թվականին արձանագրվել է 306,369 այցելություն, իսկ 2021 թվականին՝ 374382 այցելություն: Այսինքն՝ 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 22,1 տոկոս աճ:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Հարթակի արդիականացման տեխնիկական առաջադրանքը ենթակա չէ հանրային քննարկման:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Ապահովված է հասարակության լայն շերտերի կողմից պետության իրավաստեղծ գործընթացին մասնակցության հնարավորու	Իրականացվել են առնվազն 2 հանրային իրազեկման միջոցառումներ (2021թ.-ի 1-ին եռամսյակ): e-draft հարթակում	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հանրային իրազեկման գործընթացը մեկնարկելու համար որոշակի աշխատանքներ են իրականացվել, տեղեկատվական նյութեր են մշակվել, զուգահեռաբար աշխատանքներ են ձեռնարկվել հարթակի բարելավման նպատակով ֆինանսական աջակցության ստացման համար: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից հանրության մասնակցության աճի առնչությամբ պարզ է դառնում հետևյալը. • Ըստ գրանցված օգտատերերի քանակի՝ 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 192% աճ: • Ըստ տեղադրված նախագծերի քանակի՝ 2021 թվականին 2020	**Կատարված չէ**

թյունը: Զուգահեռաբար իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ	տեղադրված իրավական ակտերի վերաբերյալ հանրության կողմից դիտողություններն ու առաջարկությունների վիճակագրությունը աճել է 10%-ով (2021թ.-ի 4-րդ եռամսյակ):	թվականի համեմատությամբ արձանագրվել է 16,55 % աճ: • Ըստ ներկայացված առաջարկությունների քանակի 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 51,4 % անկում: • Ըստ կայք կատարած այցելուների քանակի՝ 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 22,1 % աճ: Այսինքն, թեև օգտատերերի ակտիվություն է նկատվել, ինչը բխում է նրանից, որ շուրջ 2 անգամ աճել է գրանցված օգտատերերի քանակը, ինչպես նաև այցելուների քանակը՝ 22,1 %-ով, սակայն 2021 թվականին ներկայացված առաջարկությունների անկում է գրանցվել: Այսպիսով, նշված տեղեկատվության, վերստուգիչ ցուցիչի և ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառումը չի կատարվել:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 28

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Սույն միջոցառման շրջանակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Մի շարք պետական մարմինների պաշտոնական կայքէջերում տեղադրված են որոշ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ դիմելու կարգը, տարբերակները, դիմումին ներկայացվող պահանջները և օրինակելի ձևերը։

Խնդրի ինստիտուցիոնալ ու համակարգային լուծումների իմաստով ներկայումս հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում նախագծվում է հանրային ծառայությունների մատուցման միասնական հարթակը՝ e-gov.am, որը դառնալու է մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման պլատֆորմը և ապահովվելու է մեկ միջավայրում պետության և համայնքների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հանրային օգտագործման տեսակետից հարմարավետ տարբեր ձևաչափերով, ուղեցույցներով:

Առանձին ոլորտներում մատուցվող ծառայությունների մասով իրականացվել է հետևյալը.

– ՀՀ արտաքին գործերի և ՀՀ արդարադատության նախարարությունները մեկնարկել են երկլեզու (*հայերեն, անգլերեն*) էլեկտրոնային ապոստիլի տրամադրումը *ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարների համատեղ հրամանն ուժի մեջ է մտել 20.10.2021 թ.*): Ապոստիլի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ԱԳՆ և ՀՀ ԱՆ պաշտոնական կայքէջերում https://www.mfa.am/hy/criminal-record-certificate/, https://www.moj.am/page/apostille հղումներով:

– ՀՀ ԱԳՆ կայքէջի «*Վիզայի անհրաժեշտությունը ՀՀ քաղաքացիների համար*» ենթաբաժնում կատարվել է լրացում, որտեղ հասանելի է տեղեկատվություն ՀՀ քաղաքացիների՝ օտարերկրյա պետություններ մուտք գործելու համար վիզայի անհրաժեշտության մասին:

– ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության կազմում ստեղծվել է սոցիալ-իրավական աջակցության և խորհրդատվության բաժինը, որը մեկ պատուհանի սկզբունքով իրականացնում է զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքի անդամներին, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին և զոհված (մահացած), անհայտ կորած կամ գերության մեջ գտնվող զինծառայողների ընտանիքների անդամներին, սոցիալ-իրավական խորհրդատվության տրամադրումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված

սոցիալական երաշխիքների և արտոնությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը, գործող և նոր ընդունված օրենսդրական ակտերի վերաբերյալ օպերատիվ և հանրամատչելի պարզաբանումների տրամադրումը, շահառուների բարձրացրած հարցերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների կազմակերպումը:

– Հայաստանի տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման՝ սիրողական որսի և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի, սիրողական ձկնորսության էլեկտրոնային դիմում-հայտերի օրինակելի ձևերը տեղադրված են շրջակա միջավայրի նախարարության env.am կայքում: Քաղաքացիները դիմում-հայտերը ներկայացնում են Շրջակա միջավայրի նախարարության էլեկտրոնային minenv@env.am փոստին, http://www.env.am/shrjaka-mijavayr/vorsahandakner հղումով:

– 2021 թ. փետրվարի 20-ից մեկնարկել են Իջևան քաղաքում ստեղծված պետական ծառայությունների միասնական կենտրոնի աշխատանքները, որտեղ տեղափոխվել և գործում է նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Իջևանի անձնագրային ծառայությունը: Միասնական գրասենյակ է ստեղծվել նաև Գյումրի քաղաքում, սակայն հաշվի առնելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մուշի և Կումայրիի անձնագրային ծառայությունների շենքային պայմանները և տեղակայվածությունը՝ «մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ քաղաքացիներին ծառայություններ մատուցելու հնարավորություններով, հիշյալ գրասենյակում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատանքները կազմակերպելու համար ստեղծվել է 3 աշխատակիցներից բաղկացած նոր ծառայություն՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Գյումրի քաղաքի «Գյումրիի անձնագրային խումբ»: Արդյունքում՝ Գյումրի քաղաքում գործում են երկու անձնագրային բաժանմունքներ և մեկ անձնագրային խումբ:

– ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումներում կատարված խախտումներին արագ արձագանքելու և քաղաքացիների դժգոհությունները լսելու նպատակով ներդրվել է թեժ գիծ, որը գործում է անխափան: 2021

թվականի 2-րդ կիսամյակում Ճանապարհային ոստիկանության ծառայության կողմից ներդրվել է ծրագրային նոր գործիքակազմ, ընդլայնվել են roadpolice.am հարթակի միջոցով կատարվող գործողությունների և տեղեկատվության շրջանակները: Հարթակը քաղաքացիներին ընձեռում է հետևյալ հնարավորությունները՝

- ծանոթանալ վարչական տույժ նշանակելու մասին քաղաքացու նկատմամբ կայացված որոշումներին,
- հետևել քաղաքացու տուգանային միավորների մնացորդին,
- բաժանորդագրվել վարչական տույժ նշանակելու մասին որոշումների վերաբերյալ կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով էլեկտրոնային ծանուցումներ ստանալու համար,
- կցել շահագործող (վարորդ) քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցին,
- էլեկտրոնային եղանակով կնքել տրանսպորտային միջոցի առք ու վաճառքի պայմանագիր և ներկայացնել գրանցման (հաշվառման) էլեկտրոնային հայտ,
- ինքնուրույն 6 ամսով տարաժամկետել վարչական տույժ նշանակելու մասին որոշումներով նախատեսված տուգանքի վճարումը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառման իրականացման ժամանակ ապահովվել են հանրային քննարկումներ, ապահովվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Իրականացվել են մատուցվող ծառայություն ների վերաբերյալ մատչելի տեղեկատվությունն ստանալու գործիքակազ մի ներդրման միջոցառում ներ	Մշակվել ու առնվազն 3 պետական մարմինների կայքէջերում հրապարակվել են մատուցվող ծառայությունն երի վերաբերյալ դիմումի լրացման օրինակելի ձևերը (2021թ.-ի 2-րդ եռամսյակ)	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մի շարք պետական մարմինների կայքէջերում հրապարակվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ դիմումի լրացման օրինակելի ձևերը, զուգահեռաբար աշխատանքներ են իրականացվել մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման ուղղությամբ: Ուստի 2021 թվականին սույն միջոցառումն ամբողջությամբ կատարվել է:	**Կատարված ամբողջությամբ է**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 29

Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Ըստ Էկենգ ՓԲԸ-ի տեղեկությունների՝ նախագծվել է sso.am հարթակը, որը կիրառում են ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման համաձայն պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորները: Հարթակը նախատեսված է միայն ներքին օգտագործման համար:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացման տեխնիկական նկարագիրը նախատեսված չէ հանրային քննարկման ներկայացնել:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Ներդրվել է պետական և համայնքային ծառայությունների միասնական շտեմարան, մատուցվող	sso.am էլեկտրոնային գործիքն արդիականացվել է, որի մասին կառավարության կողմից	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ներդրվել է և հանրային ծառայությունների միասնական գրասենյակներում օգտագործվում է sso.am հարթակը՝ միայն ներքին հասանելիությամբ: Նշված տեղեկությունների և սույն միջոցառման վերստուգիչ ցուցիչի և ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառումը մասնակի է կատարվել, քանի որ մատուցվող ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատման	**Կատարված է մասնակի**

ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատման հնարավորություն, ինչպես նաև մատուցվող ծառայությունների վերաբերյալ վիճակագրության միասնական համակարգ (2021-2022թթ.):	առկա են հրապարակումներ (2021թ.):	հնարավորությունների, ինչպես նաև մատուցվող ծառայությունների վերաբերյալ վիճակագրության միասնական համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Ըստ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ COVID-19 Կորոնավիրուսի համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված աշխատանքները ձգձգող հանգամանքներ առկա են եղել, որոնք ունեցել են նշանակալի ազդեցություն արդիականացման հայեցակարգի և տեխնիկական նկարագրի ամբողջական մշակման վրա:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 30

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☑ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Ըստ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ 2021 թվականի ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել է առաջարկությունների փաթեթ: Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակման վերաբերյալ տեղեկատվություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը չի ստացել:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Այս փուլում նախատեսված չէ հանրային քննարկման դնել տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրությունը: Շահագրգիռ մարմիններից ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը չի մասնակցել աշխատանքների իրականացմանը: Հասարակական կազմակերպություններ ևս չեն մասնակցել միջոցառման իրականացմանը:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական	Տեխնիկական առաջադրանքը մշակված է (2021թ.-ի 4-րդ եռամյակ)	Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն գնահատման համար առկա տեղեկատվությունը բավարար չէ, միջոցառումը կատարված չէ:	**Կատարված չէ**

հարթակի տեխնիկական առաջադրանքը մշակված է:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Ըստ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ COVID-19 Կորոնավիրուսի համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված աշխատանքները ձգձգող ընթացիկ հանգամանքներ առկա եղել են, սակայն դրանք չեն ունեցել նշանակալի ազդեցություն հարթակի ստեղծմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքների վրա:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 31

Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործման նպատակով 2021 թվականին շարունակվել են մշտադիտարկման աշխատանքների իրականացումը:

Ազդարարման համակարգի վիճակագրության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Գլխավոր դատախազությունում 2021 թվականին ազդարարման էլեկտրոնային համակարգով ստացվել է 75 հաղորդում, որից 5-ով քրեական գործ է հարուցվել: Հարուցված քրեական գործերի քանակի և օպերատիվ-հետախուզական գործողություններով ստուգված ազդարարումների ընդհանուր քանակի հետ տոկոսային հարաբերակցության արդյունքում պարզ է դառնում, որ Ազդարարման էլեկտրոնային

համակարգով ներկայացված հաղորդումներից ընդամենը 21,13% դեպքերում է քրեական գործ հարուցվել: Միևնույն ժամանակ, օպերատիվ-հետախուզական գործողություններով ստուգված ազդարարումների և ազդարարումների ընդհանուր քանակի հետ տոկոսային հարաբերակցությունից բխում է, որ Ազդարարման էլեկտրոնային հարթակի միջոցով ստացված հաղորդումների 42,81%-ն է ստուգվել օպերատիվ հետախուզական գործողությունների միջոցով:

Ազդարարման էլեկտրոնային հարթակի մոնիթորինգի արդյունքում առաջարկվում է հետևյալը.

- հետևողական քայլեր ձեռնարկել Հարթակի միջոցով բացահայտված հանցագործությունների մասին տեղեկատվությունները թարմացնելու ուղղությամբ, նկատի ունենալով, որ Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակում 2021 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ լրացված չեն բացահայտված հանցագործությունների ցանկը: Նշյալը լավագույնս կնպաստի հարթակի նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:
- Պարբերաբար թարմացնել և նորարարական դարձնել վիճակագրության տրամադրման տարբերակը:
- Ավելացնել իրազեկվածության բարձրացման տեսանյութեր և իրավաբանների հետ հարցազրույցներ:
- Ավելացնել հաճախ տրվող հարցեր բաժին:
- Նախատեսել նաև հաշվետվություններ բաժին, որտեղ ամփոփ կներառվի յուրաքանչյուր տարվա վիճակագրությունը:

Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ 2020 թվականին ևս իրականացվել է համանման ուսումնասիրություն և այն ներկայացվել է ինչպես շահագրգիռ մարմիններին, այնպես էլ Վարչապետի աշխատակազմ:

Ազդարարման համակարգի օրենսդրության մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ «Ազդարարման համակարգի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված կարգավորումներով ընթացք են ստանում միայն հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումները: Մինչդեռ, Օրենքի համաձայն ազդարարման նպատակն է նաև նախատեսել շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումների վերաբերյալ հաղորդում տալու հնարավորությունը, որոնք կարող են պարունակել Հայաստանի

Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ կամ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքով սահմանված վարչական վարույթի հարուցման հիմքեր: Ստացվում է, որ անձը իրավասու մարմնին ներքին կամ արտաքին ազդարարման կամ հարթակի միջոցով կարող է ազդարարել նաև վարչական իրավախախտման հատկանիշներ կամ վարույթի հարուցման հիմքեր պարունակող դեպքերի վերաբերյալ, մինչդեռ նշված ազդարարումներին ընթացք տալու հնարավորությունը Օրենքով նախատեսված չէ:

Միաժամանակ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մոնիթորինգային զեկույցով ևս անդրադարձ է կատարվել վերոգրյալ խնդիրներին և առաջարկվել է սահմանել համապատասխան կարգավորումներ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Արդարադատության նախարարության կողմից 2021 թվականին մշակվել է ««Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ): Նախագծերի փաթեթով նախատեսվում է վերանայել ազդարարման տեսակները և ավելացնել նոր ազդարարման տեսակ, բացի կոռուպցիոն հանցագործություններից հնարավորություն տրամադրել նաև էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարել կոռուպցիոն բնույթի այլ դեպքերի մասին՝ միաժամանակ համապատասխան մասով հարթակին հասանելիություն տրամադրելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Նախագծերի փաթեթով նաև նախատեսվում է վերանայել ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության մեխանիզմները:

Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ Նախագծերի փաթեթով նախատեսվող փոփոխությունների ինստիտուցիոնալ բնույթը հաշվի առնելով՝ Արդարադատության նախարարությունը ուսումնասիրության արդյունքների հիման վրա Վարչապետի աշխատակազմին առաջարկել է Ազդարարման համակարգի օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկությունները

ներառել Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի նախագծում: Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության ծրագիր) սահմանվել է Նախագծերի փաթեթի ընդունումը՝ ազդարարման գործող համակարգը կատարելագործելու նպատակով՝ ապահովելով գործող օրենքի նպատակին և կարգավորման առարկային համահունչ կարգավորումներ և մեխանիզմներ: Նշվածով պայմանավորված հնարավորություն կստեղծվի ապահովել իրապես գործող ազդարարման համակարգ, որը կապահովի ոչ միայն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ուսումնասիրության պատշաճ ընթացակարգեր, այլ նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին օրենսդրությամբ ներկայացվող պահանջների խախտումների վերաբերյալ հաղորդումների ուսումնասիրություն և համապատասխան ներգործության միջոցների կիրառում: Կառավարության ծրագրով սահմանվել են Նախագծերի փաթեթի մշակման, քննարկման և ընդունման նոր՝ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ժամկետներից տարբերվող ժամկետներ: Հիմք ընդունելով Կառավարության ծրագրի ժամկետները՝ նախատեսվում է Նախագծերի փաթեթը Վարչապետի աշխատակազմ ներկայացնել մինչև 2022 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակը:

Նշվածի շրջանակներում համագործակցության աշխատանքներ են տարվում գործընկեր միջազգային դոնոր կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Նախագիծը դեռևս գտնվում է մշակման փուլում այդ պատճառով հանրային քննարկումներ դեռևս տեղի չեն ունեցել:

Զուգահեռաբար, շահագրգիռ մարմինները մասնակից են դարձվում Նախագծի մշակման աշխատանքներին:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունների ներկայացում և քննարկում Հակակոռուպցիոն քաղաքականության	Մշտադի տարկման առաջարկությունների հիման վրա ձևավորված փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ (2021թ. առաջին եռամսյակ):	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքներից պարզ է դառնում, որ ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված ուսումնասիրությունը շարունակական բնույթ է կրել 2021 թվականին: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա Վարչապետի աշխատակազմին առաջարկվել է ազդարարման համակարգի օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկությունները ներառել Կառավարության ծրագրում՝ որպես միջոցառումներ, ինչն էլ հաստատվել է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 16-ի N 1902-Լ որոշմամբ: Բացի այդ, բացահայտված խնդիրների լուծման նպատակով մշակվել է ««Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Նշվածից հետևում է, որ սույն միջոցառումը կատարված է մեծամասամբ, իսկ ամբողջական կատարված չի գնահատվում այն հանգամանքի հաշվառմամբ, որ բացահայտված խնդիրները չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:	**Կատարված է մեծամասամբ**

խորհրդի նիստում:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Միջոցառման ամբողջական կատարումը ձգձգվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում չքննարկվելու արդյունքում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 33

ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)

ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

ՀՀ ոստիկանություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական օրենսգիրքը, որի մշակման շրջանակներում վերանայվել են կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին: Այսպես, օրինակ, մի շարք հոդվածներում ավելացվել են հանցակազմեր հետևյալ բովանդակությամբ՝

Հոդված 497՝ Դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը,

Հոդված 496՝ Դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը,

Հոդված 486, 3-րդ մաս՝ Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը, որը կատարվել է

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ

եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

Հոդված 481՝ Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը (նախկինում հանցակազմը կար, բայց կոռուպցիոն հանցագործությունների ցանկում ընդգրկված չէր),

Հոդված 480՝ Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը (նախկինում հանցակազմը կար, բայց կոռուպցիոն հանցագործությունների ցանկում ընդգրկված չէր),

Հոդված 477՝ Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան (նախկինում հանցակազմը կար, բայց կոռուպցիոն հանցագործությունների ցանկում ընդգրկված չէր),

Հոդված 444՝ Ի լրումն այլ դրսևորումների ավելացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիր չներկայացնելը,

Հոդված 284, 3-րդ մաս՝ Հակամրցակցային գործունեությունը, որը

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից,

2) կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով,

3) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել կամ

4) կատարվել է առանձնապես խոշոր չափերի շահույթ ստանալով՝

եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

Հոդված 282, 3-րդ մաս՝ Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը,

1) որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից,

2) որն առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել կամ

3) որի հետևանքով ֆինանսական բուրգում ներգրավվել է առանձնապես խոշոր չափերի գույք՝

եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

Հոդված 258, 2-րդ մաս, 9-րդ կետ. Շորթումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Ընդհանուր բարեփոխումների համատեքստում բարելավվել է հանցակազմերը նկարագրող դիսպոզիցիան, առավել մանրամասն և իրավաբանական տեքստի առումով հասկանալի են նկարագրված հանցավոր արարքները, հասարակության համար ավելի կանխատեսելի է դառնում իրենցից պահանջվող վարքագիծը, բացի այդ, հանվել են մի շարք հատկանիշներ, որոնք էական նշանակությունն չունեին հանցավոր արարքի հանրային վտանգավորության և կոռուպցիոն բնույթ կրելու տեսանկյունից, օրինակ՝ դիտավորության հանգամանքը երբեմն պարտադիր չէ (Հոդված 549՝ Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը, որը հին Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածն է), ավելացվել են մի շարք հանցավոր արարքների նոր որակյալ հանցակազմեր:

Բացի այդ, մի շարք հանցավոր արարքներ, որ նախկինում ևս տեղ էին գտել քրեական օրենսգրքում, սակայն ընդգրկված չէին կոռուպցիոն հանցագործությունների ցանկում, ևս ավելացվել են, օրինակ՝ **Հոդված 481՝ Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը, Հոդված 480՝ Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը:**

Ի թիվս այլ բարեփոխումների՝ նոր Քրեական օրենսգրքի հատուկ մասից հանվել են խրախուսական նորմերը, որոնց ուժով կաշառք տված անձը որոշակի պայմաններում ազատվում է քրեական պատասխանատվությունից: Ընդ որում՝ դրանք հանվել են նախագծի լրամշակման փուլում տեղի ունեցած քննարկումների հիման վրա:

Ընդհանուր առմամբ, վաղեմության ժամկետների ինստիտուտը ևս վերանայվել է, մասնավորապես՝ վաղեմության ժամկետը, ըստ նոր օրենսգրքի, հաշվվում է մինչև անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումը, այլ ոչ թե դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Բացի այդ, նոր օրենսգիրքը սահմանում է վաղեմության առավել երկար ժամկետներ: Ըստ այդմ՝ օրենսդրական նշված փոփոխությունների արդյունքում գործնականում առավել կչեզոքացվի կոռուպցիոն հանցագործությունների պատշաճ քննության վրա վաղեմության ժամկետների հնարավոր ազդեցությունը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի լրամշակման փուլում ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպվել է հանդիպում-քննարկումների շարք՝ Ազգային ժողովի պատգամավորների, պետական կառավարման համակարգի, քրեական հետապնդման մարմինների, փաստաբանական պալատի և դատական համակարգի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նախագծի սկզբնական տարբերակը տեղադրվել է նաև Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում. հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/2115/about:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, ինչպես նաև վաղեմության ժամկետները միջազգային չափանիշներին համապատաս	Ըստ արդյունքների՝ առաջարկությունները ներառված են ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում (2021թ.)	Սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական օրենսգիրքը, որով վերանայվել են կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին: Բացի այդ, միջազգային չափանիշներին համապատասխան՝ վաղեմության ժամկետների ինստիտուտը ևս վերանայվել է: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ	**Կատարված է ամբողջությամբ**

խանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկի ներկայացման և ընդունման դեպքում մշակվել է համապատասխան իրավական ակտերի նախագծերի փաթեթ		կատարվել են: Ընդ որում, սույն միջոցառման դեպքում ևս գրանցվել է առաջընթաց, քանի որ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ 2021 թվականին նախատեսվում էր Քրեական օրենսգրքի նախագծումը, մինչդեռ նոր Քրեական օրենսգիրքն արդեն իսկ ընդունվել է 2021 թվականին:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ չեն եղել։

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 34

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում

Պատասխանատու մարմին

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Արդարադատության ակադեմիա

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդական ուղեցույցը մշակվել է և հաստատվել Գլխավոր դատախազի 2021 թվականի մարտի 22-ի N 35 հրամանով: Ուղեցույցի մեջ մանրամասն վերլուծված են կոռուպցիոն հանցագործությունների էությունը և դրանց կանխարգելման իրավական հիմքերը, կոռուպցիայի հակազդման իրավակազմակերպական հիմքերը, կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը: Առանձին գլխում ներկայացված է ապօրինի հարստացման էությունը, իրավական հիմքերը և առանձնահատկությունները: Ներկայացված են նաև կոռուպցիոն հանցագործությունների գործերով պարզաբանման ենթակա հանգամանքները, կոռուպցիոն հանցագործությունների քննության քրեադատավարական և կրիմինալիստիկական բնութագրերը, այդ թվում նաև՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով կատարվող առանձին քննչական գործողությունների առանձնահատկությունները:

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան ներառված է վերապատրաստման ծրագրերում:

2021 թվականին Հատուկ քննչական ծառայության 7 քննիչներ և Քննչական կոմիտեի 58 քննիչներ անցել են վերապատրաստումներ «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկա» թեմաներով:

Դատախազների համար 2021 թվականին անցկացվել են դատախազների վերապատրաստումներ «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր», «Կոռուպցիոն դեպքերի քննություն», «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Կոռուպցիոն դեպքերի քննություն», «Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն», «Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար» թեմաներով:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Ուղեցույցն շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների միջև և վերջիններիս դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ենթարկվել է վերջնական լրամշակման:

Ուսուցման ծրագրերը կազմվում են շահագրգիռ կառույցների առաջարկությունների հիման վրա: Մասնավորապես, յուրաքանչյուր տարի Գլխավոր դատախազը Արդարադատության ակադեմիայի ռեկտորին է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները, որոնք ընդգրկվում են ուսուցման ծրագրերի կազմում: Յուրաքանչյուր տարի ՀՀ քննչական կոմիտեի նախագահը ռեկտորին է ներկայացնում իր համաձայնությունը կամ առարկություններն ու դիտողությունները ներկայացված ծրագրերի վերաբերյալ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության	Առկա է կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման	Սույն միջոցառման կատարման շրջանակներում կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդական ուղեցույցը հաստատվել է Գլխավոր դատախազի կողմից 2021 թվականի մարտի 22-ին, մեթոդիկան ներառվել է վերապատրաստման ծրագրերում: Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի վերաբերյալ իրականացվել են վերապատրաստման դասընթացներ: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար	**Կատարված է ամբողջությամբ**

մեթոդիկան ներառված է քրեական հետապնդման մարմինների վերապատրաստման ծրագրերում:	քննության մեթոդիկա	սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են: Սույն միջոցառման շրջանակներում ևս առաջընթաց է գրանցվել, քանի որ 2021 թվականին Հատուկ քննչական ծառայության 7 քննիչներ և Քննչական կոմիտեի 58 քննիչներ անցել են վերապատրաստումներ «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկա» թեմաներով այն դեպքում, երբ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ միայն 2022 թվականի 3-րդ եռամսյակում էր նախատեսվում առնվազն 3 վերապատրաստումների իրականացումը:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընտոնտեր չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 35

Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում

Պատասխանատու մարմին

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ ոստիկանություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի մայիսի 5-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգիրքը, որով նոր քրեական օրենսգրքին համահունչ վերանայվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը: ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի և 2020 թվականի հուլիսի 2-ի համապատասխան հրամաններով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:

Բացի այդ, Գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ տեղեկանք, որում ոչ միայն ներկայացվում են վիճակագրական տվյալներ, այլև՝ վերլուծվում են այդ տվյալները և համեմատական է անցկացվում նախորդ տարվա տվյալների հետ: Նշված տարեկան տեղեկանքները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://n9.cl/wpagk:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Աշխատանքներն իրականացվում են շահագրգիռ մարմինների հետ համագործակցության շրջանակներում:

Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաշվետվությունները յուրաքանչյուր կիսամյակ տրամադրվում են նաև ՀՀ վիճակագրական կոմիտե և հրապարակվում են վերջինիս պաշտոնական կայքէջում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրությունը համալրվել է:	Սույն միջոցառման կատարման շրջանակներում 2021 թվականին կոռուպցիոն հանցակազմերի վերանայմանը զուգահեռ ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի և 2020 թվականի հուլիսի 2-ի համապատասխան հրամաններով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն	Կատարված է ամբողջությամբ

դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության վարման կարգերը հաստատված են: Կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրությունը		հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են:	

համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով (2021-2022 թթ.)			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 36

Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով հնարավոր է իրականացնել հարցումներ պետական տվյալների շտեմարաններից (Բնակչության ռեգիստր, Կադաստրի կոմիտե, Ճանապարհային ոստիկանություն (այսուհետ նաև՝ ՃՈ), ՊԵԿ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակ, Իրավաբանական անձանց պետական ռեգիստր և այլն)։ Պետական տվյալների շտեմարաններից ստացվող տեղեկատվության շրջանակն ու ձևաչափերը շարունակաբար ընդլայնվում են։

Հակակոռուպցիոն կոմիտեի առնչությամբ հարկ է նշել, որ այն հասանելիություն ունի Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության, Ինֆորմացիոն կենտրոնի, Ճանապարհային ոստիկանության, Ֆինանսական դիտարկումների կենտրոն-միասնական տեղեկատվական հարթակի, Իրավաբանական անձանց ռեգիստրի, Անշարժ գույքի կադաստրի ռեգիստրի տեղեկատվական բազաներին։

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ անհրաժեշտ է Հակակոռուպցիոն կոմիտեի համար մատչելի դարձնել Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ ծառայողական տեղեկությունների ստացումը, ինչպես նաև բաժնետոմսերի և բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ցանկացած ծառայողական տեղեկության ստացումը, այդ թվում՝ բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի), անվանական արժեքի, քանակի, տեսակի և դասի, թողարկողի, բաժնետոմսերով իրականացված գործարքների, բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների, թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ Օրենքի 197-րդ հոդվածի իմաստով Հայաստանյան անվանատերերին և Օտարերկրյա անվանատերերին հասանելի տեղեկությունների ստացումը, մշակվել են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N 1481-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման

նախագծերը, որոնք դրվել են հանրային քննարկման, ինչպես նաև ներկայացվել են շահագրգիռ մարմիններին՝ վերջիններիս դիրքորոշման ստացման նպատակով:

Մշակվել է նաև ««Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախկին Հատուկ քննչական ծառայության պետին տրված լիազորության փոխարեն նույն լիազորությունը սահմանվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համար: Նախագծով առաջարկվող իրավակարգավորման ընդունման արդյունքում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համար կսահմանվի լիազորություն տեղեկությունները՝ ըստ դրանց բնագավառի կամ գերատեսչական պատկանելիության պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու համար:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Սույն միջոցառման իրականացման շրջանակներում ներգրավվել են շահագրգիռ մարմինները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Իրավապահ մարմիններն ունեն էլեկտրոնային	Իրավապահ մարմինների կողմից էլեկտրոնային	Սույն միջոցառման իրականացման արդյունքում իրավապահ մարմինները Կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով կարող են իրականացնել հարցումներ պետական տվյալների շտեմարաններից (Բնակչության ռեգիստր, Կադաստրի կոմիտե, ՃՈ,	**Կատարված է ամբողջությամբ**

եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործու թյունների արդյունավետ քննության համար:	եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների տեղեկատվական բազաներին հասանելիության ապահովման ծրագրային ապահովումը ներդրված է և լիարժեք գործարկվում է մյուս համակարգերի հետ (2021թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՊԵԿ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակ, Իրավաբանական անձանց պետական ռեգիստր և այլն): Պետական տվյալների շտեմարաններից ստացվող տեղեկատվության շրջանակն ու ձևաչափերը շարունակաբար ընդլայնվում են: Զուգահեռաբար աշխատանքներ են իրականացվում նորաստեղծ Հակակոռուպցիոն կոմիտեի համար ևս ամբողջական հասանելիություն ապահովելու նպատակով: Այսպիսով, նշված տեղեկությունների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 37

Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում

Պատասխանատու մարմին

ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Դեռևս 2020 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված միջազգային փորձի լայնածավալ ուսումնասիրության և դրա հիման վրա ուղարկված հարցումների պատասխանների վերլուծության արդյունքներով մշակվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նախագիծը 2020 թվականի սեպտեմբերի 16-ին ուղարկվել է շահագրգիռ պետական մարմիններին կարծիքի: Ստացված առաջարկների ամփոփումից հետո՝ նոյեմբերի 2-ին, Նախագիծն ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ՝ սահմանված կարգով ընթացք տալու և օրենսդրական նախաձեռնությամբ ՀՀ ազգային ժողով ուղարկելու համար:

2021 թվականի հունիսի 30-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը:

2021 թվականի սեպտեմբերի 28-ին ընդունվել է «Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա տեղեկությունների ցանկը և տեղեկությունների (հաշվետվությունների) ներկայացման ժամկետները» սահմանող ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 133-Ն որոշումը:

Այսպիսով, Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի փաստացի գործարկումը սկսվել է 2021 թվականի նոյեմբերի 1-ից:

Ավելին, ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 205-Ն և 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1321-Ն որոշումների հիման վրա ընդունվել է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից եկամտային հարկի վերադարձման նպատակով ՀՀ կենտորանական բանկի կողմից վարվող բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի միջոցով վարկառուի բանկային հաշվի վավերականության ստուգման կարգը սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 197-Լ և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1383-Լ համատեղ որոշումը, որն ուժի մեջ է մտնել 2022 թվականի հունվարի 1-ին և արդեն իսկ կիրառվում է:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Նախագծերի փաթեթը ներկայացվել է բոլոր շահագրգիռ պետական մարմիններին՝ դիրքորոշման ստացման նպատակով: Ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագծերի փաթեթը լրամշակվել է: Քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում (https://www.e-draft.am/projects/2256) նախագծերի հանրային քննարկումը կազմակերպելու միջոցով: Հանրային քննարկման արդյունքներով առաջարկություններ չեն ներկայացվել:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Առաջարկությունների փաթեթի հիման վրա ստեղծվել է բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր:	2021 թվականի համար վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականին բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծմանն ուղղված իրավական ակտերն ընդունվել և ուժի մեջ են, Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրը փաստացի գործարկվել է: Այսպիսով, նշված տեղեկությունների և ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառումը 2021 թվականին կատարվել է ամբողջությամբ:	**Կատարված է ամբողջությամբ**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 38

Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Միջազգային համագործակցության իրականացման մեխանիզմների և դրանցում առկա խոչընդոտների ուսումնասիրության արդյունքում Արդարադատության նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և դեռևս 2020 թվականի օգոստոսի 3-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Մասնավորապես՝ Նախագծով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային

պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում քրեական գործերով իրավական օգնության իրականացման կարգն ու պայմանները և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով՝ քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ կարգավորում չստացած հարաբերությունները: Բացի այդ, Նախագծի կարգավորման շրջանակներում քրեական գործերով իրավական օգնությունն ընդգրկում է՝ 1) իրավական օգնության մասին հարցումներ (այդ թվում՝ վարույթային և ապացուցողական գործողություններ կատարելը, փաստաթղթերի և առարկաների հանձնումը, տեղեկությունների փոխանակումը, անձանցից ցուցմունքներ կամ բացատրություններ վերցնելը, կալանավորված կամ այլ անձանց վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը, առարկաների և վայրերի զննությունը, խուզարկությունը, իրեղեն և էլեկտրոնային կամ թվային ապացույցներ ձեռք բերելը և փոխանցելը, փորձաքննություններ անցկացնելը, որպես վկա, տուժող, գույքային պատասխանող, նրանց օրինական ներկայացուցիչներ, փորձագետ Հայաստանի Հանրապետություն կանչելը և վարույթային գործողություններ կատարելը, ազատությունից զրկված անձանց որպես վկա կամ առերեսման մասնակից փոխանցելը, քրեական գործի բացահայտման համար անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև էլեկտրոնային կամ թվային տվյալների, ձայնագրությունների, այդ թվում՝ բանկային, ֆինանսական, կորպորատիվ կամ գործարար փաստաթղթերի բնօրինակների կամ հաստատված պատճենների տրամադրումը, հանցավոր ճանապարհով ստացված կամ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների և միջոցների, դրանց բացակայության դեպքում համարժեք գույքի վրա կալանք դնելը, բռնագանձված գույքի բաշխումը և այլն: 2) Հանձնումը (էքստրադիցիա), այդ թվում՝ ժամանակավոր հանձնումը: 3) Համագործակցության այլ տեսակներ (այդ թվում՝ քրեական վարույթի փոխանցումը, դատապարտյալների փոխանցումը, պատժից պայմանական ազատված անձի նկատմամբ հսկողություն իրականացնելը, օտարերկրյա պետության կայացրած դատավճռի ճանաչումը, փոխարկումը և կատարումը): 4) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված այլ հարցումներ: Քրեական գործերով իրավական օգնությունն իրականացնելիս Հայաստանի

Հանրապետության և օտարերկրյա պետության իրավասու մարմինների միջև օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված բացառությունները:

Այնուհետև, 2021 թվականին Նախագիծը քննարկվել է միջազգային փորձագետների և շահագրգիռ մարմինների հետ, ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագիծը 2021 թվականին լրամշակվել է: Ներքին քննարկումների ամփոփումից հետո Նախագիծը սահմանված կարգով կրկին կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ Արդարադատության նախարարությունը և շահագրիռ այլ մարմինները մասնակցել են «Կոռուպցիայի հակազդմանն ուղղված Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) լրամշակման աշխատանքներին և աշխատանքային քննարկումներին: Հայաստանի Հանրապետության անունից ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ:

Համաձայնագիրը սահմանում է համագործակցության հետևյալ հիմնական խնդիրներն ու նպատակները. համաձայնեցված քաղաքականության, համատեղ ծրագրերի և գործունեության մշակում և իրականացում, հակակոռուպցիոն չափանիշների ներդրում, հակակոռուպցիոն մոնիթորինգի իրականացում, համագործակցության բարելավում և ազգային օրենսդրության ներդաշնակեցում, կարգավորող իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության մեխանիզմի կատարելագործում, հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման նկատմամբ պետական և հասարակական վերահսկողության ինստիտուտների զարգացում, կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ստեղծված հասարակական միավորումների գործունեությանը պետական աջակցության տրամադրում, կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավորությունների ընդլայնում, ֆիզիկական անձանց և կազմակերպությունների ֆինանսական գործարքները ամբողջությամբ կամ մասամբ որոշակի ժամկետով կասեցնելու, ինչպես նաև նրանց գույքը տնօրինելու իրավունքի սահմանափակման

հնարավորության ապահովում, եթե կան բավարար հիմքեր ենթադրելու, որ դրամական միջոցները և (կամ) այլ գույքը կոռուպցիայից ստացված եկամուտներ են:

Համաձայնագիրը անդրադառնում է նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Համաձայնագիրը վավերացված պետությունների (այսուհետ՝ Կողմեր) ազգային ջանքերի և համագործակցության արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիոն հանցագործությունների թվի հետագա աճի սպառնալիքի հաղթահարմանն ուղղված ջանքերի միավորմանը, հակակոռուպցիոն կրթության ոլորտում տեղեկատվության փոխանակման և փոխգործակցության ապահովմանը, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կողմերի միջազգային հեղինակության ամրապնդմանը: Կողմերը ձեռնարկում են նաև անհրաժեշտ միջոցներ Կողմերի ազգային օրենսդրության բարելավման և ներդաշնակեցման համար՝ հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային պայմանագրերը, որոնցում իրենք կողմ են: Համաձայնագրի յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է ներպետական մակարդակում ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք իր իրավասու մարմիններին հնարավորություն կտան անհատույց հիմունքներով ստանալ հակակոռուպցիոն գործառույթներ և գործողություններ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ ավտոմատացված տեղեկատվական և հղման համակարգերից, ինչպես նաև տվյալների բազաներից: Յուրաքանչյուր Կողմ կարող է տեղեկատվություն տրամադրել մյուս կողմին պրոակտիվ հիմունքներով, եթե կան հիմքեր ենթադրելու, որ այդ տեղեկատվությունը անհապաղ անհրաժեշտ է Կողմին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Օրենքի նախագիծը տեղադրվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (https://www.edraft.am/projects/2182), ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագիծը վերանայվել է: Բացի այդ, Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին՝ առաջարկություններ և դիտողություններ ներկայացնելու նպատակով:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման առկա խոչընդոտների հաղթահարման վերաբերյալ առաջարկներ:	Կազմակերպվել է առնվազն 2 քննարկում համապատասխան շահառուների ներգրավվածությամբ (2021թ.-ի 1-ին եռամսյակ)	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դեռևս 2020 թվականին մշակված՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության իրականացմանն առկա խոչընդոտների հաղթահարման ուղղված նախագիծը 2021 թվականին կրկին քննարկվել է շահագրիռ մարմինների և միջազգային փորձագետների հետ և ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագիծը լրամշակվում է: Հաշվի առնելով, որ Վարչապետի աշխատակազմ առաջարկները ներկայացվել էին դեռևս 2020 թվականին, իսկ նախագծի մշակման աշխատանքներին շահառուները դեռևս 2020 թվականից ներգրավված են, հարկ է արձանագրել, որ սույն միջոցառումը 2021 թվականին ամբողջությամբ կատարվել է:	**Կատարված է ամբողջությամբ**

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 39

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի սահմանման նպատակով Ազգային ժողովի կողմից դեռևս 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունվել էին «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և

հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին օրենքները: 2020 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նշանակվել էր ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտը համակարգող տեղակալը, իսկ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմում ստեղծվել էր պատասխանատու ստորաբաժանում՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով Վարչության կազմավորումից հետո դեռևս 2020 թվականին ընդունվել են Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում ներկայացվող հայտարարագրերի նմուշային ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» թիվ 2044-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում պետության տիրապետությանը հանձնված գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը և հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 2066-Ն որոշումները:

2021 թվականի ապրիլի 7-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում կնքվող հաշտության համաձայնության կնքման կարգը և օրինակելի ձևը:

Բացի այդ, առկա գործիքակազմի կատարելագործման նպատակով, Գլխավոր դատախազության կողմից մշակվել և Արդարադատության նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերին շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի, ինչպես նաև հանրային քննարկման է ներկայացվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Ներկայումս իրականացվում են շահագրգիռ անձանց դիտողությունների և առաջարկությունների ամփոփման աշխատանքները, որից հետո կապահովվի նախագծի քննարկման հետագա ընթացքը:

Նախագծով նախատեսվում է հստակեցնել գործող մի շարք կարգավորումներ: Մասնավորապես, նախատեսվում է.

- սահմանել կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան օպերատիվ ճանապարհով ստացված տվյալների հիման վրա ուսումնասիրություն սկսել ոչ միայն հանրային պաշտոն, այլ նաև հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ, քանի որ ներկայումս գործող կարգավորման պարագայում նորմի գործողությունը տարածվում է պաշտոնատար անձանց խիստ սահմանափակ շրջանակի վրա և հաշվի չի առնում կոռուպցիոն տեսանկյունից պաշտոնատար անձանց ռիսկայնությունը,
- սահմանել ուսումնասիրություն սկսելու նոր հիմք՝ իրավասու մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություն սկսելու հնարավորությունը, որպեսզի իրավասու մարմինը հնարավորություն ունենա իր կողմից իրականացվող ուսումնասիրության շրջանակներում ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տվյալներ հայտնաբերելու պարագայում ինքնուրույն նախաձեռնել գործընթացը,
- հստակեցնել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում առկա «ուսումնասիրվող ժամանակահատված» հասկացության բովանդակությունը, որը կբացառի գործնականում այդ հասկացության տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորությունը,
- հստակեցնել իրավասու մարմնի լիազորությունների շրջանակը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացույցների ձեռքբերման ոլորտում,
- առաջարկվում է կատարել նաև մի շարք այլ բարեփոխումներ, որոնց ընդունմամբ ակնկալվում է, որ էականորեն կբարելավվի ապօրինի ծագում ունեցող գույքի հայտնաբերման և բռնագանձման գործընթացը:

Միաժամանակ, քննարկվող ինստիտուտի արդյունավետ գործունեությունն ապահովելու տեսանկյունից առանձնակի կարևորվում է նշված ոլորտում պրակտիկ աշխատանք ծավալող անձանց մասնագիտական պատրաստվածության բարձրացումը և հետևողական մասնագիտական աճի ապահովումը, ինչով պայմանավորված միջազգային փորձագետների ներգրավվածությամբ արդեն իսկ թվով վեց դասընթաց է կազմակերպվել Վարչության դատախազների համար:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում իրականացվել է 279 ուսումնասիրություն (214 ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացվել է 2020 թվականի ընթացքում, իսկ 65 որոշում՝ 2021 թվականի ընթացքում), ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով դատարան է ներկայացվել 3 հայցադիմում, որոնցից 2-ն արդեն իսկ ընդունվել են վարույթ:

Բացի այդ, նշված գործառույթների շրջանակներում ապահովվել է միջազգային կառույցների և այլ պետությունների հետ համագործակցությունը: Մասնավորապես, 2020 թվականի նոյեմբերից ՀՀ գլխավոր դատախազությունը անդամակցում է CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ պաշտոնական ցանցին: Անդամակցության շրջանակներում ուղարկվել է թվով 7 հարցում, այդ թվում՝ 2 հարցում՝ Ռուսաստան, մեկական հարցումներ՝ Չեխիա, Սլովակիա, Ֆրանսիա, Հունաստան և Կիպրոս, որոնց արդյունքում ստացվել է թվով 6 պատասխան գրություն: Միաժամանակ, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 4 միջազգային հարցում՝ Ռումինիայից, Ուկրաինայից, Բելգիայից, Մոլդովայից: Դրանց շրջանակներում Վարչության կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները, հարցմամբ հայցվող տեղեկությունները պարզելու նպատակով ուղարկվել են համապատասխան գրությունները, որոնց արդյունքներով ստացված պատասխանները թարգմանվել և հասցեագրվել են հայցող պետությունների իրավասու մարմիններին:

Միևնույն ժամանակ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով մասնագիտացված դատական քննությունն ապահովելու նպատակով ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի ապրիլի 1-ի թիվ ԲԴԽ-19-Ն-7 որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 4 մասնագիտացված դատավորների վերապահվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերը քննելու իրավասություն: Բացի այդ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքների և հարակից օրենքները, որոնք ուժի մեջ են մտել 2021 թվականի հոկտեմբերի 29-ին: Նշված

կարգավորումների շրջանակում նախատեսվում է ստեղծել Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, որը իրականացնելու է նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա ներկայացված դիմումներից և հայցապահանջներից բխող գործերի քննությունը:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Վերոգրյալ իրավական ակտերի նախագծերը մշակման փուլում ներկայացվել են շահագրգիռ մարմիններին և դրվել են հանրային քննարկման (Տե՛ս օրինակ՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը): Բացի այդ անցկացվել են մի շարք խորհրդակցություններ շահագրգիռ մարմինների հետ:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Ստեղծվել և գործարկվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, գույքի	Վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2020-2021 թվականներին ստեղծվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր: Միաժամանակ պարզվել է, որ նույն ժամանակահատվածում գործարկվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը և միջազգային համագործակցությանն ուղղված	Կատարված է ամբողջությամբ

կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր (2021-2022թթ.)		կառուցակարգերը, իսկ գույքի կառավարմանն ուղղված կառուցակարգը կգործարկվի բռնագանձում իրականացնելու դեպքում։ Այսպիսով, նշված տեղեկությունների և ակնկալվող արդյունքի համադրությունից պարզ է դառնում, որ սույն միջոցառումը 2021 թվականին ամբողջությամբ կատարվել է։	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40

Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Հաշվի առնելով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման կապակցությամբ համակարգային օրենսդրական փոփոխություններ կատարելու, ինչպես նաև քրեական օրենսդրության բարեփոխումների փոխկապակցվածության ապահովման և հատվածային լուծումներից խուսափելու անհրաժեշտությունը՝ իրավաբանական անձանց

քրեական պատասխանատվության (այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների համար) ինստիտուտը[11] ներդրվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքում, որը 2021 թվականի մայիսի 5-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է:

Համաձայն նոր կարգավորումների՝ իրավաբանական անձինք քրեական պատասխանատվության են ենթարկվում ինչպես կոռուպցիոն, այնպես էլ այլ հանցագործությունների համար: Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող քրեական պատասխանատվության միջոցներ են սահմանվել տուգանքը, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը, հարկադիր լուծարումը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը: Իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն սահմանելիս հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ քրեական պատասխանատվությունը հնարավորություն է տալիս ունենալ քննության մեթոդների և հարկադրանքի միջոցների առավել լայն շրջանակ, օգտագործել իրավական փոխօգնության գործիքակազմ՝ բացահայտելու հատկապես կոռուպցիոն և անդրազգային հանցավորության դրսևորումները, որում ներգրավված կլինեն իրավաբանական անձինք: Նշվածը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից և Հայաստանի Հանրապետությանը միջազգային կառույցների կողմից տրված հանձնարարականներից[12]: Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իրավաբանական անձի մասնակիցները, բաժնետերերը կամ փայատերերը ձեռնարկել են ողջամտորեն անհրաժեշտ միջոցները հանցանք կատարած անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

---

[11] Եթե նախկինում իրավաբանական անձի օգտին որոշակի գործողություններ կատարելու դեպքում քրեական պատասխանատվության էր ենթարկվում միայն տվյալ անձը, ապա այս դեպքում պատասխանատվության է ենթարկվում ոչ միայն տվյալ անձը, այլ այդ իրավաբանական անձը: Այսպես օրինակ, ընկերության տնօրենի գիտությամբ իր աշխատակցի կողմից այդ իրավաբանական անձի հարկային պարտավորություններից խուսափելու դեպքում նոր կարգավորումների համաձայն պատասխանատվության են ենթարկվելու թե՛ աշխատակիցը, թե՛ տնօրենը և թե՛ իրավաբանական անձը:

[12] ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի և ՏՀԶԿ-ի շրջանակներում ստանձնած պարտավորություններ, դրանց կատարման գնահատումներ:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Քրեական նոր օրենսգրքի նախագծի լրամշակման փուլում Արդարադատության նախարարության կողմից կազմակերպվել է հանդիպում-քննարկումների շարք՝ Ազգային ժողովի պատգամավորների, պետական կառավարման համակարգի, քրեական հետապնդման մարմինների, փաստաբանների պալատի և դատական համակարգի ներկայացուցիչների մասնակցությամբ: Նախագիծը տեղադրվել է նաև Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում. հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/2115/about:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական դատավարու	«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական դատավարու	Սույն միջոցառման կատարման շրջանակներում իրավաբանական անձանց ինչպես կոռուպցիոն, այնպես էլ այլ հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ինստիտուտը ներդրվել է ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերում՝ այդպիսով ապահովելով պատասխանատվության ինստիտուտի առկայությունը: Այսպիսով, նշված տվյալների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքները ամբողջությամբ կատարվել են: Ավելին,	**Կատարված է ամբողջությամբ**

թյան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակվել և ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել:	թյան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը ներկայացվել են Ազգային ժողով (2021թ.-ի 3-րդ եռամսյակ)	գրանցվել է առաջընթաց, քանի որ Հակակոռուպցիոն ռազմավարությունը իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն սահմանող նախագծի ներկայացումը Ազգային ժողով նախատեսված էր 2021թ.-ի 3-րդ եռամսյակը, մինչդեռ համապատասխան նախագիծն արդեն իսկ 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մայիսի 5-ին:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 41

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)

ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)

ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)

ՀՀ ոստիկանություն

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի հունիսի 30-ին ՀՀ ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որը կաշառք ստանալու նմանակումը և կաշառք տալու նմանակումը նախատեսում է որպես գաղտնի քննչական գործողություններ: Նշված օրենսգրքի 251-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները նույն օրենսգրքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440-րդ, 477-րդ, 496-րդ և 497-րդ հոդվածների, ըստ այդմ՝ հետևյալ հանցակազմերի իմաստով՝ ընտրակաշառք ստանալ, ընտրակաշառք տալ, ընտրակաշառքի միջնորդություն, շորթում, մասնավոր ոլորտում կաշառք ստանալ, մասնավոր ոլորտում կաշառք տալ, Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալ, Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալ, ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալ կամ պահանջել, կաշառք ստանալ, կաշառք տալ, կաշառքի միջնորդություն, պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործել, պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալ, կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալ, կաշառքի

կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիա, դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալ, դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալ:

Հաշվի առնելով ՀՀ քրեական նոր օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի պատշաճ կիրառման ապահովման անհրաժեշտությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որով, ի թիվս այլնի, առաջարկվում է վերը նշված՝ 251-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը նախատեսել նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածում:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթը ուղարկվել է շահագրգիռ մարմիններին, ինչպես նաև տեղադրվել է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում. հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/3889:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել օրենսդրական փաթեթ՝ ուղղված կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախու զական միջոցառումը	2021 թվականի համար վերստուգիչ ցուցանիշ սահմանված չէ:	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 251-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները նույն օրենսգրքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440-րդ, 477-րդ, 496-րդ և 497-րդ հոդվածների իմաստով: Սույն միջոցառման շրջանակներում մշակվել և շրջանառության մեջ է դրվել իրավական ակտի նախագիծ՝ նույնպիսի կարգավորում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում նախատեսելու նպատակով: Այսպիսով, նշված տվյալների, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքները կատարվել են մեծամասամբ, քանի որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում համապատասխան փոփոխությունը նախատեսող նախագիծը դեռևս չի ընդունվել՝ չնայած այն հանգամանքին, որ համապատասխան	**Կատարված է մեծամասամբ**

նաև ապօրինի վարձատրություն տալու կամ ստանալու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու վերաբերյալ գործերով		կարգավորումներն արդեն իսկ սահմանվել են նոր Քրեական օրենսգրքով:	

իրականացնելը:			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42

Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում

Պատասխանատու մարմին

ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Զանգվածային լրատվության միջոցներ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Արդարադատության նախարարության կողմից 2021 թվականին առաջին կիսամյակի ընթացքում լրամշակվել է դեռևս 2020 թվականին մշակված «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագիրը

հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ հաշվի առնելով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում ներկայացված առաջարկությունները:

Այնուհետև, Նախագիծը դրվել է հանրային քննարկման Իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում՝ «www.e-draft.am» և ներկայացվել է շահագրգիռ մարմիններին՝ վերջիններիս դիրքորոշման ստացման նպատակով:

Նախագծով առաջարկվում է սահմանել գործողությունների շրջանակ, որի նպատակն է հասարակությանը տեղեկացնել կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում իրականացվող հիմնական աշխատանքների և դրանց արդյունքների մասին, ինչպես նաև բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը կոռուպցիոն ռիսկեր պարունակող երևույթների և դրանց կանխարգելման անհրաժեշտության մասին: Այս նպատակով Նախագծով նախատեսվել են Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների իրավասությունների և գործունեության, ազդարարման համակարգի և ազդարարման մեխանիզմների, կաշառքի բացասական ազդեցության վերաբերյալ տեղեկատվական արշավների իրականացմանն ուղղված գործողությունների շրջանակ, ինչպես նաև՝ պետության հետ հարաբերություններում անձանց իրավունքների և պարտականությունների, պետության հետ հարաբերություններում բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ իրազեկման միջոցառումներ, գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով վերապատրաստումների և սեմինարների անցկացում:

Նախագծով միաժամանակ սահմանվել են Նախագծով սահմանված՝ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում իրականացվող գործողությունների նկատմամբ մոնիթորինգի և վերահսկողության իրականացման, դրանց արդյունքների հրապարակման կառուցակարգեր:

Նախագծի մշակման շրջանակներում ուսումնասիրվել է միջազգային փորձը, ինչպես նաև ոլորտային միջազգային կազմակերպությունների դիրքորոշումները:

Նախագծի ընդունման և դրա կիրարկման արդյունքում ակնկալվում է ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ հանրային հաղորդակցման գործողությունների համակարգվածությունը, դրանց իրականացման նկատմամբ մոնիթորինգը և վերահսկողությունը, ինչը կապահովի կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության ներգրավումը և իրազեկումը, կոռուպցիայի վերաբերյալ հանրային իրավագիտակցության մակարդակի բարձրացումը:

Զուգահեռաբար ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցության շրջանակներում պատրաստվել է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը լուսաբանող տեսահոլովակ, ինչպես նաև տեղեկատվական այլ նյութեր, որոնց տարածումը հասարակության շրջանում նախատեսված է իրականացնել 2022 թվականին:

Պետական կառավարման համակարգի որոշ մարմինների կողմից 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հանրային իրազեկման արշավի շրջանակներում ևս իրականացվել են աշխատանքներ: Այսպես.

1) Արդարադատության նախարարության կողմից 2021թ.-ի առաջին և երկրորդ կիսամյակի ընթացքում շարունակվել է պատասխանատու մարմինների կողմից Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերաբերյալ տեղեկատվական նյութեր հրապարակվել Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում, զանգվածային լրատվության միջոցներով[13]: Բացի այդ, հանրային իրազեկման մասին աշխատանքներն ամփոփվում են Հակակոռուպցիոն

[13] ՀՀ Արդարադատության նախարության կայքից.
- Ազդարարման համակարգի վերաբերյալ՝ https://www.moj.am/article/3043
- Իրական շահառուների վերաբերյալ՝ https://www.moj.am/article/3041
- Իրական շահառուների բացահայտման վերաբերյալ՝ https://www.moj.am/article/3030
- Իրական շահառուների վերաբերյալ՝ https://www.moj.am/article/2982
- Կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ Կ.Անդրեասյանի հանդիպումը ԵՊՀ ուսանողների հետ՝ https://www.moj.am/article/2968
- Ազդարարման միասնական հարթակի վերաբերյալ՝ https://www.facebook.com/mojarmenia/videos/325188116174688
- Իրական շահառուների հայտարարագրման վերաբերյալ՝ https://www.facebook.com/mojarmenia/videos/177659487867908
- Ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ՝ https://www.facebook.com/mojarmenia/videos/377125104032548
- Ծախսերի հայտարարագրման ինստիտուտի վերաբերյալ՝ https://www.facebook.com/mojarmenia/videos/3743984935622030

ռազմավարության տարեկան և կիսամյակային հաշվետվություններում, հրապարակվում են և ներկայացվում են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին.

2) Առողջապահության նախարարության կողմից մշակվել է հանրային իրազեկման արշավի բազմակողմանի և համապարփակ ծրագիր՝ ուղղված հանրության իրազեկմանը: Ծրագրի շրջանակներում 2021 թվականին, ի թիվս այլնի, իրականացվել են հետևյալ աշխատանքները.

• Հունվարի 18-ից մեկնարկվել է “QUITLINE” խորհրդատվական հեռախոսային հարթակը, որի հիմնական նպատակն է աջակցել բոլոր ծխողներին՝ ազատվելու ծխելու վատ սովորությունից: Խորհրդատվությունը իրականացնում են հոգեբան-խորհրդատուները, ովքեր վերապատրաստում են անցել միջազգային ուղեցույցների համաձայն:

• Իմունականխարգելման մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, պատվաստումների միջոցով բնակչությանը վարակիչ հիվանդություններից զերծ պահելու նպատակով, մարտի 13-14-ին և հունիսի 5-6-ին կազմակերպվել է «Կորոնավիրուսային հիվանդության «COVID-19» հետևանքները. պատվաստվիր և կանխարգելիր» դասընթաց լրագրողների համար, ԱՆ խորհրդատուների ներգրավմամբ, որի նպատակն է արժևորել պատվաստանյութերի դերն ու նշանակությունն առողջության և բարեկեցության համատեքստում: Քննարկվել են առկա իրավիճակը և հետագա անելիքները:

- Հայաստանը կոռուպցիայի ընկալման համաթվի ռեկորդային դրական արդյունք է գրանցել՝ https://www.1lurer.am/hy/2021/02/08/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A1%D5%AC%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A9%D5%BE%D5%AB-%D5%BC%D5%A5%D5%AF%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D6%84-%D5%A7-%D5%A3%D6%80%D5%A1%D5%B6%D6%81%D5%A5%D5%AC/409695
- Արդարադատության փոխնախարարը միջազգային գործընկերներին ներկայացրել է հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի գրանցած հաջողությունները՝ https://www.moj.am/article/2913
- Հակակոռուպցիոն մարմինները ընդհանուր փաթեթով կունենանք 2021-ի աշնան վերջին. Մարիամ Գալստյան. ՏԵՍԱՆՅՈՒԹ՝ https://factor.am/330417.html
- Պայքարը կոռուպցիայի դեմ առավել արդյունավետ դարձնելու համար՝ https://www.facebook.com/watch/?v=255918666049173

• Պատրաստվել են արտաքին գովազդային վահանակների՝ COVID-19-ի կանխարգելմմանն ուղղված պաստառներ, որոնք առաջիկայում կտեղադրվեն մայրաքաղաքում և մարզերում:

3) Ոստիկանությունում մշակվել է Ոստիկանության հանրային իրազեկման ծրագրի նախագիծը: Ներկայումս նախագիծը գտնվում է այլ գերատեսչություններից ստացված նմանատիպ նախագծերի հետ համադրման և մշակման փուլում:

4) ՀՀ արտաքին գործերի և ՀՀ արդարադատության նախարարությունները մեկնարկել են երկլեզու (*հայերեն, անգլերեն*) էլեկտրոնային ապոստիլի տրամադրումը («*Պաշտոնական փաստաթղթերն ապոստիլով վավերացնելու համար դիմում ներկայացնելու կարգը, ապոստիլի ձևանմուշը, տեսակները, վավերապայմանները, «էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգը գործածելու, տվյալները պահպանելու, ոչնչացնելու ժամկետները և կարգը, «էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միասնական շտեմարանը վարելու, օգտագործելու և տեխնիկական ապահովումն իրականացնելու կարգը և ապոստիլով վավերացվող պաշտոնական փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարների համատեղ հրամանն ուժի մեջ է մտել 20.10.2021թ.*): Էլեկտրոնային ապոստիլն ուղարկվում է քաղաքացու էլեկտրոնային փոստի հասցեին, որը հնարավոր է տպագրել (*ինչպես գունավոր, այնպես և սև-սպիտակ տարբերակներով*) և օգտագործել ցանկացած տեսակի թղթային կրիչով՝ ներկայացնելով ըստ պահանջի: Էլեկտրոնային ապոստիլի իսկությունը հնարավոր է ստուգել՝ այցելելով www.e-verify.am կայք և մուտքագրելով ապոստիլի վրա նշված հսկիչ համարը կամ արագ արձագանքման ծածկագիրը՝ QR կոդը, և տրման ամսաթիվը: Ապոստիլի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ԱԳՆ և արդարադատության նախարարությունների պաշտոնական կայքէջերում՝ հետևյալ հղումներով. https://www.mfa.am/hy/criminal-record-certificate/, https://www.moj.am/page/apostille:

Հաշվետու տարում ՀՀ ԱԳՆ կայքէջի «*Վիզայի անհրաժեշտությունը ՀՀ քաղաքացիների համար*» ենթաբաժնում կատարվել է լրացում, որտեղ հասանելի է տեղեկատվություն ՀՀ քաղաքացիների՝ օտարերկրյա պետություններ մուտք գործելու համար վիզայի անհրաժեշտության մասին:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

Միջոցառման իրականացման շրջանակներում Նախագիծը դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (հղումը՝ (https://www.e-draft.am/projects/3879) և ուղարկվել շահագրգիռ մարմիններին կարծիքի:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Իրականացված հանրային իրազեկման արշավների հիման վրա անձինք պարբերաբար տեղեկացվում են պետության կողմից հակակո	Հաղորդակցության միջոցառումների ծրագրին համապատասխան՝ հաշվետվությունները ըստ սահմանված ձևաչափի ներկայացվել	Սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականին կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մշակվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ, որը քննարկվում է շահագրգիռ մարմինների հետ: Զուգահեռաբար Արդարադատության նախարարության կողմից շարունակաբար պատասխանատու մարմինների կողմից Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերաբերյալ տեղեկատվական նյութեր են հրապարակվել Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում, զանգվածային լրատվության միջոցներով: Այլ	**Կատարված է մասնակի**

ռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց	են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին ու հրապարակվել են Խորհրդի ու ՀՀ ԱՆ կայքէջերում (2020թ., 2021թ., 2022թ.):	պետական մարմիններ ևս իրականացրել են հանրային իրազեկման աշխատանքներ: Հարկ է նաև հավելել, որ հանրային իրազեկման մասին աշխատանքներն ամփոփվում են Հակակոռուպցիոն ռազմավարության տարեկան և կիսամյակային հաշվետվություններում, հրապարակվում են և ներկայացվում են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին: Այսպիսով նշված տեղեկությունների, վերստուգիչ ցուցիչի և ակնկալվող արդյունքի համադրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականին սույն միջոցառումը մասնակի է կատարվել:	

իրավունքների վերաբերյալ			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Միջոցառման կատարումը ձգձգվել է նոր կորոնավիրուսային հիվանդության պատճառով սահմանված սահմանափակումների, ինչպես նաև արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 43

«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում

Պատասխանատու մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ԲՈՒՀ-եր

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Բարձրագույն ուսումնական հաստատություններում 2021-2022 ուսումնական տարվանից դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան, իսկ հասարակագիտական առարկաների շրջանակում իրականացվում են հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերող թեմաներով դասեր դեռևս 2020 թվականից։

Նախնական և միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ ՆՄՄԿ) ուսումնական հաստատություններում 2020-2021 ուսումնական տարվանից դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմայով ուսումնական պարտադիր ծրագիրը։

2021 թվականին միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում մշակվել և իրականացվում են 428 մշակված թեմատիկ առարկայական ծրագրեր՝ «Կոռուպցիայի իրավական բնութագիրը», «Հակակոռուպցիոն քաղաքականությունը», «Հակակոռուպցիոն երևույթի հասկացությունը», «Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում», «Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները և գնահատումները», «Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը և խնդիրները», «Հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները» և այլ թեմաներով, որոնց ուսանողների թիվը՝ 7627 է:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում մշակվել և իրականացվում են թվով 244 թեմատիկ առարկայական ծրագրեր՝ «Կոռուպցիայի դրսևորումներն ու մակարդակները», «Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները» թեմաներով, որոնց ուսանողների թիվը՝ 2509 է:

Հարկ է նաև հավելել, որ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջում (12 լսարանային ժամ ընդհանուր տևողությամբ, որից 6 ժամ՝ դասախոսություն, 4 ժամ՝ սեմինար, 2 ժամ՝ գործնական պարապմունք), իսկ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնահարցեր» առարկան նշված կիսամյակում դասավանդվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայում (16 լսարանային ժամ ընդհանուր տևողությամբ, որից 12 ժամ՝ դասախոսություն, 4 ժամ՝ սեմինար)։

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Միջոցառումը հանրային քննարկման իրականացում չի նախատեսում, իսկ շահագրգիռ կազմակերպությունները ներգրավվել են համապատասխան աշխատանքներում:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության	2021 թվականի համար վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում իրականացված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականին Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան: Այսպիսով նշված տեղեկությունների և ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառումը 2021 թվականին կատարվել է ամբողջությամբ:	**Կատարված է ամբողջությամբ**

հիմունքներ» առարկա:			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ չկան:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 44

Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում

Պատասխանատու մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ԲՈՒՀ-եր

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2020 թվականին իրականացվել են հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական ծրագրերի և չափորոշիչների վերանայման աշխատանքները:

2021 թվականի փետրվարի 4-ին ընդունվել է «ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության N 136-Ն որոշումը, որը սահմանում է հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու դրույթները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլի 30-ի N 19-Լ հրամանով հաստատվել են 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով «Հասարակագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը: Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման շրջանակներում հասարակագիտության առարկայական վերջնարդյունքներում և ծրագրային բացվածքում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին.

- ✓ Կոռուպցիայի տեսակները, պատճառներն ու հետևանքները (9-րդ դասարան)
- ✓ Տնտեսական մրցակցություն, ընտրություններ (ընտրախախտումներ), քաղաքացիական մասնակցություն և վերահսկողության ձևեր (10-րդ դասարան)
- ✓ Կոռուպցիայի դեմ պայքարի ձևերն ու դրանց արդյունավետությունը (11-րդ դասարան):

Հարկ է նշել, որ 12-րդ դասարանի առարկայական ծրագրով կոռուպցիային առնչվող թեմաներ առկա չեն, ուստի փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայել է:

Այսպիսով, «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացված է, առաջարկությունները ներկայացված են, առարկայական ծրագրերում կատարված են համապատասխան փոփոխությունները:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Վերոնշյալ իրավական ակտերի նախագծերն օրենքով սահմանված կարգով մշակվել են և քննարկվել են շահագրգիռ մարմինների հետ:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է:	2021 թվականի համար վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացված է, առաջարկությունները ներկայացված են, փոփոխություններ են կատարվել ավագ դպրոցի՝ 10-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրերում, որոնցում հասարակագիտության առարկայի շրջանակում ներառված են կոռուպցիային առնչվող բաժիններ: Ուստի սույն միջոցառումը կատարվել է ամբողջությամբ:	Կատարված է ամբողջությամբ

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Միջոցառման իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ չկան:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 45

Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

ՀՀ արդարադատության նախարարություն

Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☑ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի մարտ ամսին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեվարքություն թեմայով, որին մասնակցել են համապատասխան մարմինների թվով 63 քաղաքացիական ծառայողներ: 2021 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը հեռավար եղանակով կազմակերպել է բարեվարքություն կոմպետենցիայի վերաբերյալ վերապատրաստում, որին մասնակցել են համապատասխան մարմինների թվով 133 քաղաքացիական ծառայողներ:

Յուրաքանչյուր վերապատրաստման ավարտից հետո քաղաքացիական ծառայողներն անցել են թեստավորման փուլ՝ վերապատրաստման արդյունավետությունը գնահատելու համար: Թեստավորման արդյունքները դրական են եղել և համապատասխանել են ակնկալվող արդյունքներին:

2. **Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն**

45-րդ միջոցառման պարագայում կատարված աշխատանքներն ամբողջությամբ համապատասխանում են Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 2 հավելվածի 45-րդ միջոցառման համար 2021 թվականին ակնկալվող արդյունքին: Վերապատրաստումներն անցկացրել են UNDP կազմակերպության Հայաստանյան գրասենյակը և ՀՀ պետական կառավարման ակադեմիան: Հանրային քննարկում չի կազմակերպվել:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Անցկացվել են իրազեկվածու	2021 թվականի համար	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականին	**Կատարված է մեծամասամբ**

թյան բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ:	վերստուգիչ ցուցիչ սահմանված չէ:	քաղաքացիական ծառայողների համար անցկացվել են վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեվարքություն թեմաներով, սակայն մարդու իրավունքների թեմայով վերապատրաստում չի իրականացվել, որպիսի պայմաններում սույն միջոցառումը գնահատվում է մեծամասամբ կատարված:	

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 46

Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Դեռևս 2020 թվականին քաղաքացիական ծառայողների համար մշակվել են բարեվարքություն, մարդու իրավունքներ և կոռուպցիայի կանխարգելման թեմաներով հեռավար ուսուցման մոդուլները: Բացի այդ, քաղաքացիական ծառայողների համար Մարդու իրավունքներ թեմայով մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ՝ Երեխաների իրավունքներ, Խտրականության դեմ պայքար և Կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ դասընթացի ընդհանուր նկարագիր: Նշված թեմաները ներառվել են քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում:

2021 թվականի 4-րդ եռամսյակում կազմակերպվել է «Բարեվարքություն» թեմայով հեռավար ուսուցում համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայողների համար, որին մասնակցել են թվով 133 քաղաքացիական ծառայողներ: Վերապատրաստման մասնակիցների կողմից բարձրացված խնդիրների գնահատման արդյունքում լրամշակվել է «Բարեվարքություն» թեմայով մոդուլը և 2021 թվականի հոկտեմբերին կազմակերպված դասընթացն իրականացվել է լրամշակված տարբերակով: Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից բարեվարքություն թեմայով կազմակերպված վերապատրաստման նպատակն է բարձրացնել բարեվարքության հարցերով կազմակերպիչների և քաղաքացիական ծառայողների իրազեկվածությունը: Յուրաքանչյուր վերապատրաստման ավարտից հետո քաղաքացիական ծառայողներն անցել են թեստավորման փուլ՝ վերապատրաստման արդյունավետությունը գնահատելու համար: Թեստավորման արդյունքները դրական են և համապատասխանում են ակնկալվող արդյունքին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ	Ըստ մոդուլների՝ իրականացվում է ուսուցում	Նշված միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդելները մշակվել են, իրականացվում է ուսուցում՝ ըստ մոդելների:	**Կատարված է ամբողջությամբ**

	(2021թ.-ի 4-րդ եռամսյակ)	Այսինքն, սույն միջոցառումը 2021 թվականին ամբողջությամբ կատարվել է:	

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտներ չեն եղել:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 47

Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում

Պատասխանատու մարմին

ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☑ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☐ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

Դեռևս 2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ից պետական մարմիններում թափուր պաշտոնների համալրման մրցույթներն անցկացվում են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով:

Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգերը գործարկելուց հետո 2020 թվականի դեկտեմբերի 21-ին Առողջապահության նախարարության կողմից քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով անցկացվել է առաջին մրցույթի

թեստավորումը, որը ուղիղ հեռարձակվել է Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում:

Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգի և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգի գործարկմամբ պետական մարմիններում անցկացվող ցանկացած մրցույթի թեստավորում ուղիղ հեռարձակվում է Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնական կայքէջում:

Բացի այդ, Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել և ամենօրյա ռեժիմով իրականացրել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակով իրականացվող գործառույթների, գործողությունների շղթայի փորձարկման և դրանց արդյունքում «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին առաջարկների ներկայացման աշխատանքներ: Համապատասխան մարմինների մարդկային ռեսուրսների և/կամ քաղաքացիական ծառայության գործընթացների համար պատասխանատուների համար կազմակերպվել է «Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի կիրառությունը և ֆունկցիոնալությունը» թեմայով իրազեկման դասընթացներ:

Ներկայումս քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը գտնվում է «Համակարգի շահագործման և օժանդակության» երաշխիքային փուլերում և այս փուլում քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգում և դրա ենթահամակարգերում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում դրանք վերացվում են հիշյալ հիմնադրամի կողմից և հիմնադրամի հաշվին:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Հանրային քննարկում չի կազմակերպվել:

Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգերի ստեղծման և գործարկման գործընթացներում հաշվի են առնվել Վարչապետի

աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, շահագրգիռ մարմինների և համակարգերը ստեղծող և գործարկող կազմակերպության ներկայացուցիչների միջև տեղի ունեցած հանդիպում-քննարկումների ժամանակ բարձրաձայնված կարծիքներն ու առաջարկները:

3. Կատարված աշխատանքների գնահատում

Ակնկալվող արդյունք	Վերստուգիչ ցուցիչ	Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները	Կատարման կարգավիճակը
Գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության	2021 թվականի համար վերստուգիչ ցուցանիշ նախատեսված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականին թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգերը գործարկվել են: Այսպիսով, նշված տեղեկությունների և ակնկալվող արդյունքի համադրությունից պարզ է դառնում, որ սույն միջոցառումը 2021 թվականին ամբողջությամբ կատարվել է:	Կատարված է ամբողջությամբ:

տեղեկատ վական համակարգը			

4. **Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները**

Խոչընդոտող հանգամանքներ առկա չեն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 48

Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում

Պատասխանատու մարմին

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

ՀՀ արդարադատության նախարարություն

Պետական կառավարման համակարգի մարմիններ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)

Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)

Կատարման կարգավիճակը (2021 թվական)

☐ Կատարված է ամբողջությամբ

☐ Կատարված է մեծամասամբ

☑ Կատարված է մասնակի

☐ Կատարված է մասնակի, սակայն կատարումը կասեցված է

☐ Կատարված չէ

1. **Կատարված գործողությունների նկարագրությունը և դրանցով ակնկալվող փաստացի արդյունքը**

2021 թվականի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համագործակցության միջոցով սկիզբ է դրվել հասարակության շրջանում առավել կոռումպացված

ոլորտների վերհանման, կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ ուսումնասիրման գործընթացին: Արդյունքում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնին (CRRC) պատվիրակվել է իրականացնել Հայաստանի բնակչության շրջանում հարցում՝ նպատակ ունենալով ստանալ հնարավորինս ճշգրիտ տեղեկատվություն ՀՀ բնակիչների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ ընկալումների մասին: Հարցումը նախատեսված է 18 և բարձր տարիքի ՀՀ քաղաքացիների համար, ընդհանուր՝ 1500 հարցվողների համար, որոնք բնակվում են ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի 10 մարզերի քաղաքային/գյուղական բնակավայրերում: Հարցաթերթիկը բաղկացած էր 58 հարցերից՝ խմբավորված հետևյալ 5 բաժիններով.

• Կոռուպցիայի ընկալումը հանրության կողմից (17 հարց),

• (Հակա)-կոռուպցիոն ստատուս-քվոն բնակչության շրջանում (8 հարց),

• Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկվածության ընդհանուր մակարդակ (8 հարց),

• Կոռուպցիայի նկատմամբ անձնական պատասխանատվության վերաբերյալ տեսակետներ (12 հարց),

• Ընդհանուր տեղեկություններ և ժողովրդագրություն (13 հարց):

Փորձնական հարցում իրականացվել է 2021 թվականի սեպտեմբերի 4-6-ը, իսկ դաշտային հարցումը՝ 2021 թվականի հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 24-ը: Հետազոտության արդյունքների վերլուծությունը նախատեսվում է հրապարակել 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

Հանձնաժողովի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համագործակցությամբ այժմ աշխատանքներ են իրականացվում Հյուսիսարևմտյան համալսարանի քաղաքական գիտությունների դոցենտ Ջորդան Գանս-Մորսի կողմից հարցման գիտափորձի իրականացման համար, որի հիմնական նպատակն է Հանձնաժողովին տրամադրել անհրաժեշտ տվյալներ սահմանելու համար իր հակակոռուպցիոն նախաձեռնությունների առաջնահերթությունները՝ ըստ Հայաստանի հանրության

տեսակետների՝ առավելագույնի հասցնելով հանրային աջակցությունը: Հարցման գիտափորձի մասին մանրամասները ներկայացված են առաջարկում:

Միևնույն ժամանակ, Եվրոպայի Խորհրդի և Արդարադատության նախարարության միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ մշակելու կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ 115 պարբերական հարցումների իրականացման միասնական մեթոդաբանությունը և դրա հիման վրա պարբերաբար իրականացնել հարցումներ: Արդարադատության նախարարությունը հարցումներն անցկացնում է Միջազգային հանրապետական ինստիտուտ (IRI) միջազգային կազմակերպության հետ համագործակցության միջոցով՝ վերջինիս պատվիրակելով հարցումների անցկացումը: Միջազգային հանրապետական ինստիտուտ (IRI) միջազգային կազմակերպության կողմից պարբերաբար իրականացվող հանրային հարցումների (Public opinion survey) շրջանակներում 2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ևս տրվել են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցադրումներ՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից հարցումներ անցկացնելու նպատակով: Միաժամանակ Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից 2021 թվականի փետրվարին (https://www.iri.org/sites/default/files/final_for_publication_armenia_electoral_reform_march_8_2021.pdf) և մայիսին (https://www.iri.org/sites/default/files/armenia_ppt_final.pdf) հրապարակված հարցման շրջանակներում որոշակիորեն անդրադարձ է կատարվել նաև կոռուպցիայի դեմ պայքարին, որոնք ևս առաջարկվել էին Արդարադատության նախարարության կողմից:

Վերոգրյալ հարցումների շարունակականության ապահովման նպատակով Արդարադատության նախարարության կողմից 2021 թվականի փետրվար և դեկտեմբեր ամիսներին հարցում իրականացնող կազմակերպություններին ներկայացվել էին հարցաշարեր՝ ուղղված հասարակության կողմից կոռուպցիայի մակարդակի և դրա կանխարգելմանն ուղղված քայլերի արդյունավետության ընկալմանը:

ԵԽ երևանյան գրասենյակի «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում իրականացվել է հետազոտություն և հրապարակվել է զեկույց «Ազդարարների պաշտպանության ՀՀ օրենսդրությունը և դրա կիրառելիությունը զինված ուժերում՝ զուգահեռներ միջազգային չափորոշիչների և լավագույն փորձի հետ» խորագրով, որում միջազգային և տեղական փորձագետների կողմից վեր են հանվել այն խնդիրները, որոնք խոչընդոտում են զինված ուժերում մարդու իրավունքների և կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ազդարարմանը: Ազդարարման համակարգերի արդյունավետության խոչընդոտները բացահայտելու նպատակով նշված ծրագրի շրջանակներում Պաշտպանության նախարարության 1-ին և 2-րդ ԲԿ ենթակայության զորամասերում իրականացվել էր նաև սոցիոլոգիական հետազոտություն՝ հասկանալու, թե որքանով են զինծառայողները պատրաստ ազդարարել իրենց իրավունքների խախտման կամ այլ չարաշահումների, այդ թվում կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ: Հետազոտության արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են Պաշտպանության նախարարության ղեկավարությանը:

Ոստիկանական համակարգի բարելավման նպատակով, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի կողմից և Եվրոպական միության ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել Հաշվետու ինստիտուտներ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում ծրագիր, որի նպատակային ուղղություններից է Աջակցությունը ՀՀ ոստիկանության բարեփոխումներին: Վերոնշյալի շրջանակներում ԵԱՀԿ աջակցությամբ նախատեսվում է իրականացնել Ոստիկանության գործունեության հանրային ընկալման վերաբերյալ համապարփակ հարցում: Ոստիկանության հետ համատեղ մշակված հարցման հարցաշարում՝ ի թիվս այլ հարցերի, ներառված են նաև կոռուպցիայի, ոստիկանության հանդեպ հանրային վստահության մակարդակի հետ կապված հարցեր: Հարցումը նախատեսված է իրականացնել 2022 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում՝ IMR կազմակերպության կողմից:

2. Հանրային քննարկում, շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցություն

Սույն միջոցառումները իրականացվել են և շարունակվում են իրականացվել հանրային լայն զանգվածների ներգրավմամբ:

3. **Կատարված աշխատանքների գնահատում**

Ակնկալվող արդյունք	**Վերստուգիչ ցուցիչ**	**Գնահատման արդյունքները, հիմնավորումները և մեկնաբանությունները**	**Կատարման կարգավիճակը**
Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում, իրականացվող հարցման արդյունքում վեր են հանվել հանրության կարծիքով	2021 թվականի համար վերստուգիչ ցուցանիշ սահմանված չէ:	Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականին մի շարք պետական մարմինների կողմից նախաձեռնվել և իրականացվել են հարցումներ կոռուպցիոն ռիսկերի պարզման, կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով: Մի շարք հարցումների արդյունքները հասանելի կլինեն 2022 թվականին: Այսպիսով, նշված միջոցառման, 2021 թվականի համար սահմանված ակնկալվող արդյունքի և վերստուգիչ ցուցանիշի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքները մասնակի կատարվել են:	**Կատարված է մասնակի**

առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը,			

քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:			

4. Միջոցառման իրականացմանը խոչընդոտող կամ միջոցառման կատարումն անհնարին դարձնող կամ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները

Խոչընդոտներ առկա չեն: